

նախագիծ

արձանագրային

**ՄԱԿ-Ի «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2-ՐԴ և 3-ՐԴ ՀԱՄԱՏԵՂ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԶԵԿՈՒՅՑԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հավանություն տալ ՄԱԿ-ի « Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 2-րդ և 3-րդ համատեղ պարբերական զեկույցին՝ համաձայն հավելվածի:

**ՄԱԿ-Ի ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ
ՀԱՄԱՏԵՂ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ**

Ներածություն

1. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագիր) կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության երկրորդ և երրորդ համատեղ պարբերական ազգային զեկույցը (այսուհետ՝ Ձեկույց) ներկայացվում է ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 40-րդ հոդվածի համաձայն՝ ՄԱԿ-ի կողմից մշակված զեկույցների պատրաստման ղեկավար սկզբունքները հաշվի առնելով: Ձեկույցը մշակվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. ապրիլի 21-ի թիվ 320-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից, որի կազմում ընդգրկված են եղել շահագրգիռ բոլոր նախարարությունների և գերատեսչությունների ներկայացուցիչները:

- Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն,
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն,
- Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
- Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն,
- Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն,
- Հայաստանի Հանրապետության կառավարություն,
- Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն,
- Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն,
- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն,
- Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն,
- Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն,
- Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն,
- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր ոստիկանություն,
- Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմ,
- Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմ,
- Հայաստանի Հանրապետության ազգային ժողով,
- Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն,
- Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն,
- Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ,
- Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ,

- Հայաստանի Հանրապետության արհմիությունների կոնֆեդերացիա:

Զեկույցը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից... -ին: Այն ընդգրկում է 1999թ.-ից 2009թ. ընկած ժամանակահատվածը:

Ներկա զեկույցում հաշվի են առնվել Մարդու իրավունքների կոմիտեի ՀՀ նախորդ զեկույցի վերաբերյալ արված առաջարկներն ու մեկնաբանությունները (CCPR/C/79/Add.100):

2. 2005թ. ՀՀ նախագահի կողմից ստորագրվեց հրամանագիր «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին» նախագծի հանրաքվե նշանակելու մասին: Ղեկավարվելով Սահմանադրության 111-րդ հոդվածով, «Հանրաքվեի մասին» օրենքի 7-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին» նախագիծը, հանրաքվե նշանակվեց 2005 թվականի նոյեմբերի 27-ին: Հանրաքվեի միջոցով փոփոխություններ և լրացումներ կատարվեցին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ (<http://www.genproc.am/main/en/70/>), որում էական բարեփոխումների ենթարկվեցին նաև մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին վերաբերող դրույթները՝ դրանք առավել համահունչ դարձնելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի պահանջներին:

3. 1999 թվականի մայիսի 30-ին, 2003 թվականի մայիսի 25-ին և 2007 թվականի մայիսի 12-ին ՀՀ-ում տեղի են ունեցել խորհրդարանական, իսկ 2003 թվականի փետրվար 19/մարտի 15-ին և այնուհետև 2008 թվականի փետրվարի 19-ին՝ նախագահական ընտրություններ:

4. 1992 թվականից դառնալով ՄԱԿ-ի անդամ և ընդունելով համամարդկային արժեքների, մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության հաստատման սկզբունքները որպես պետական գաղափարախոսության անբաժանելի մաս, Հայաստանն ակտիվորեն մասնակցում է այս համաշխարհային կազմակերպության շրջանակներում ծավալվող աշխատանքներին և համագործակցում կազմակերպության բազմաթիվ կառույցների և ստորաբաժանումներին հետ:

5. ՄԱԿ-ում կայացած ընտրությունների արդյունքում, 2002 թվականին Հայաստանի Հանրապետությունը Արևելաեվրոպական երկրների խմբից ընտրվել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ և 2004 թվականին վերընտրվել, իսկ 2005-2006 թվականներին Հայաստանի ներկայացուցիչը եղել է հանձնաժողովի փոխնախագահ: Դա նախ և առաջ Հայաստանի միջազգային ճանաչման և հեղինակության բարձրացման վառ ապացույց էր, հատկապես՝ մարդու իրավունքների պաշտպանության ասպարեզում:

6. 1998 թվականին ընդունվել և հունվարից ուժի մեջ է մտել ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը: Այն պարբերաբար ենթարկվում է փոփոխությունների՝ առավել համահունչ դառնալով ՀՀ միջազգային հանձնառություններին:

1999 թվականի փետրվարի 5-ին ընդունվել է ՀՀ ընտրական օրենսգիրքը: 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ենթարկվել է փոփոխությունների:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունվել և 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ է մտել նոր ՀՀ քրեական օրենսգիրքը:

2003 թվականի հոկտեմբերի 21-ին ընդունվել և 2004 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ է մտել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքը:

2004 թվականի նոյեմբերի 9-ին ընդունվել և 2005 թվականի հունիսի 21-ին ուժի մեջ է մտել նոր ՀՀ աշխատանքային օրենսգիրքը:

2007 թվականի փետրվարի 21-ին ընդունվել և նույն տարվա մայիսի 18-ից ուժի մեջ է մտել ՀՀ դատական օրենսգիրքը:

Ներկայումս մշակման փուլում է գտնվում Մարդու իրավունքների պաշտպանության համապարփակ ազգային ծրագիրը, որը նախատեսվում է հաստատել 2011 թվականին:

7. Հայաստանի Հանրապետությունը միացել է բազմաթիվ միջազգային պայմանագրերի, այդ թվում մարդու իրավունքների ոլորտում հիմնարար միջազգային փաստաթղթերին:

8. 2001 թվականի հունվարի 25-ին Հայաստանը դարձել է Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ և համապատասխան պարտավորություններ ստանձնել երկրի իրավական համակարգը վերափոխելու և մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական արժեքներ որդեգրելու ուղղությամբ:

9. Հայաստանի զարգացման համար հիմնական խոչընդոտ է հանդիսանում 1991 թվականից ի վեր Ադրբեջանի և Թուրքիայի կողմից իրականացվող շրջափակումը (բլոկադա), ինչը միջազգային բոլոր նորմերի խախտում է: Շրջափակման հետևանքով Հայաստանի տնտեսությունը ամեն տարի կրում է զգալի վնասներ:

10. Այսօր, ինչպես և նախկինում, Հայաստանը, հարգելով միջազգային ընդունված չափանիշները, պատրաստ է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, խաղաղ, բանակցային ճանապարհով լուծում գտնելու Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին (տես նախորդ զեկույցը՝ CCPR/C/92/Add.2 – 20-ից-33-րդ կետերը): Միննույն ժամանակ պետք է նշել, որ Ադրբեջանում (Սումգայիթ, Բաքու և այլ քաղաքներ) հայերի ջարդերը, որոնք միջազգային իրավունքի բոլոր չափանիշներով ընկնում են ցեղասպանության հասկացության տակ, հանգեցրեցին նրան, որ այսօր Ադրբեջանը ամբողջովին հայաթափվել է:

11. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները, այդ թվում և նրանք, որոնք պատասխանատու են ինքնակառավարում չունեցող և խնամարկյալ տարածքների կառավարման համար, պետք է Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության դրույթներին համապատասխան խրախուսեն ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգեն այդ իրավունքը:

Հոդված 1

1. *Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:*

2. Բոլոր ժողովուրդներն իրենց նպատակներին հասնելու համար կարող են ազատորեն տնօրինել իրենց բնական հարստություններն ու ռեսուրսները՝ առանց խոչընդոտելու փոխշահավետության սկզբունքի վրա հիմնված միջազգային տնտեսական համագործակցությունից բխող որևէ պարտավորության և միջազգային իրավունքին: Ոչ մի ժողովուրդ ոչ մի դեպքում չի կարող գրկվել գոյության՝ սեփական միջոցներից:

3. Սույն Դաշնագրի մասնակից բոլոր պետությունները, այդ թվում և նրանք, ովքեր պատասխանատու են ինքնակառավարում չունեցող և խնամարկյալ տարածքների կառավարման համար, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության դրույթներին համապատասխան, խրախուսում են ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգում այդ իրավունքը:

12. Հայաստանի Հանրապետությունը, հավատարիմ ՄԱԿ-ի կանոնադրության դրույթներին, ինչպես նաև հիմնվելով Հելսինկիի եզրափակիչ փաստաթղթում ամրագրված սկզբունքների վրա, ազգերի ինքնորոշման իրավունքը դիտարկում է որպես մարդու հիմնարար ու անքակտելի իրավունք և հետևողականորեն հանդես է գալիս նրա իրականացման օգտին: Հայաստանը դեկլարվում է այն փաստով, որ այսօր ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքը անխտիր բոլոր պետությունների համար պարտադիր միջազգային և պետական իրավունքի հիմնարար հանրաճանաչ նորմ է, և դրա իրականացումը բխում է պետությունների միջազգային պարտավորություններից:

Պետության տարածքային ամբողջականության և ժողովուրդների ինքնորոշման իրավունքների միջև որևէ ստորակարգում չկա միջազգային իրավունքում և ինքնորոշման բուն իրավունքը ոչ մի կերպ չի կարող սահմանափակվել, կանգ առնել, կամ վերածվել պետության տարածքային ամբողջության կամ գոյություն ունեցող պետական սահմանների պահպանման խնդրի: Հայաստանը մշտապես հանդես է եկել նման ստորակարգման անթույլատրելիության դիրքերից, և դիտարկում է այդպիսի փորձերը որպես ժողովրդի ազատ կամարտահայտման սահմանափակմանը, խոչընդոտմանը կամ ճնշմանն ուղղված քայլեր: Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, որպես միջազգային իրավունքի հրամայական նորմ, պետք է ճանաչվի միշտ և բոլոր դեպքերում, անկախ այն բանից, թե երբ, ինչ հանգամանքներում և ինչի հիման վրա է ունեցել այն տարածքի միավորումը, հանձնումը կամ օտարումը, որի ժողովուրդը դնում է ինքնորոշման հարցը:

Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը, լիովին համահունչ գործող ԽՍՀՄ օրենքների դրույթներին ու միջազգային իրավունքի սկզբունքներին, 1991թ.-ի դեկտեմբերի 10-ի հանրաքվեի միջոցով ձեռք բերեց անկախություն Ադրբեջանական ԽՍՀ-ից և կազմավորեց առանձին պետական միավոր՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» (ԼՂՀ) անվամբ (տես ՀՀ նախորդ զեկույցը՝ CCPR/C/92/Add.2 կետ 21-24): Անկախ պետականության հաստատման օրվանից ի վեր, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն իրականացնում է իր ինքնորոշման իրավունքը պետական կառավարման մարմիններ կազմավորելու, ընտրություններ անցկացնելու, օրենսդիր մարմնի կողմից օրենքների ընդունման և պետության կառավարման այլ անհրաժեշտ գործառույթներ իրականացնելու միջոցով: ԼՂՀ ժողովրդի քաղաքական և քաղաքացիական իրավունքների համար պատասխանատվություն է կրում ԼՂՀ կառավարությունը՝ իր ընդունած որոշումների ու իրականացվող քաղաքականության միջոցով: Որպես ընդհանուր

սկզբունք և հավատարիմ լինելով ժողովրդավարական ու իրավունքի գերակայության վրա հիմնված հասարակության կառուցման նպատակին, ԼՂՀ իշխանությունները միակողմանիորեն միացել են միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերին և դրանք ներմուծում են սեփական օրենսդրության մեջ:

Հայաստանի Հանրապետությունը հաստատակամորեն հետամուտ է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացմանը և ամեն կերպ օժանդակում է նրա ժողովրդի քաղաքական և քաղաքացիական իրավունքների առաջմղմանը:

Ադրբեջանը, ելնելով ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի կիրառման և այդ իրավունքի բռնի սահմանափակման իր քաղաքականությունից, և որպես այդ քաղաքականության արդյունք՝ սանձազերծած պատերազմի հետևանքով, որը բազմաթիվ մարդկային ու նյութական կորուստների պատճառ դարձավ, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանդեպ տնտեսական շրջափակման քաղաքականություն է իրականացնում, ինչը լուրջ խոչընդոտ է զարգացման ու մի շարք այլ, առաջին հերթին՝ քաղաքական ու քաղաքացիական իրավունքների լիարժեք իրականացումն ապահովելու համար:

Ադրբեջանական ԽՍՀ կազմում գտնվելու ընթացքում Լեռնային Ղարաբաղը սոցիալ-տնտեսական և մշակութային անկում ապրեց. ըստ էության Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ) վերածվել էր Ադրբեջանական ԽՍՀ-ի հումքային կցորդի, մարզում հետևողականորեն իրականացվում էր հայ բնակչության խտրականություն բոլոր ուղղություններով, կոպիտ կերպով ոտնահարվում էին նրա ազգային արժանապատվությունն ու իրավունքը, ստեղծվել էր ժողովրդագրական բարդ իրադրություն, որն արտահայտվում էր հայ բնակչության նվազման բացահայտ միտումով: Իրենց համար Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում նյութված ճակատագրի մասին Լեռնային Ղարաբաղի հայերն ակնառու պատկերացում ունեին հայկական տարածքներում ժողովրդագրական պատկերի փոփոխմանն ուղղված այն քաղաքականության հետևանքներից, որը հաջողությամբ իրականացվեց Նախիջևանի մարզում, ուր մի քանի տասնամյակների ընթացքում հայ բնակչության թվաքանակը «սպիտակ ցեղասպանության» խաղաղ միջոցներով հասցվեց զրոյի (տես ՀՀ նախորդ զեկույց՝ CCPR/C/92/Add.2, կետ 22):

13. Հայ ժողովրդի պատմական հիշողությունը 1918թ. Բաքվում 30 հազ. հայերի, 1920թ. Շուշիում 32 հազ. հայերի կոտորածների մասին և 1988թ. Սումգայիթ, իսկ 1990թ.-ին՝ Կիրովաբադ և Բաքու քաղաքներում ադրբեջանցիների կողմից իրականացված ջարդերը մի միասնական շղթայով կապվում են 1915-1923թթ. հայերի ցեղասպանության հետ: Անցյալն այստեղ կապված է ներկայի և ապագայի հետ:

14. 1988 թվականին, ոտքի կանգնելով ի պաշտպանություն սեփական գոյության, անվտանգության և իր ինքնորոշման իրավունքի, Ղարաբաղը հաստատեց Ադրբեջանի կազմում իր հետագա բռնի գոյության անհնարինությունը, ինչպիսին էլ լինի նրա ինքնավարության մակարդակը, որովհետև խոսքը ոչ թե սոցիալ-տնտեսական, մշակութային կամ լեզվական իրավունքների ոտնահարման մասին էր միայն, այլև հայ բնակչության ֆիզիկական անվտանգության

բացակայության, որպես ազգային խմբի նրա գոյությանը սպառնացող իրական վտանգի մասին:

15. Պետության կողմից ժողովուրդների ինքնորոշման իրավունքի խախտումը (օրինակ, բռնակցման ձևով և այլն) տանում է դեպի բուն պետությունների քաղաքական ու միջազգային-իրավական պատասխանատվություն, և դրա կատարման մեջ մեղավոր անհատների (ֆիզիկական անձանց) քրեական պատասխանատվություն ազգային կամ միջազգային հեղինակավոր դատարանների որոշումների համապատասխան:

16. 2005թ. նոյեմբերի 27-ին հանրաքվեով փոփոխված ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով:

17. Տեղական ինքնակառավարմանն է նվիրված Սահմանադրության 7-րդ գլուխը, որի 104-րդ հոդվածի համաձայն, տեղական ինքնակառավարումը համայնքներում իրականացվող համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ, բնակիչների բարօրության նպատակով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը: 107-րդ հոդվածի համաձայն համայնքն իր ինքնակառավարման իրավունքն իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի միջոցով, որոնք օրենքով սահմանված կարգով ընտրվում են չորս տարի ժամկետով: 108-րդ հոդվածով Երևանին տրվում է համայնքի կարգավիճակ: 2009 թվականի մայիսի 31-ին կայացան Երևանի քաղաքապետի առաջին ընտրություններ:

18. 2002թ. մայիսի 7-ին ընդունվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են տեղական ինքնակառավարման սկզբունքները, մարմինները, լիազորությունները, դրանց իրավական, տնտեսական, ֆինանսական հիմքերն ու երաշխիքները, ինչպես նաև կարգավորվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները: Տեղական ինքնակառավարումը բնակչության բարեկեցության բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ և օրենքի շրջանակներում ինքնուրույն գործող տեղական ինքնակառավարման մարմինների համայնքային խնդիրները լուծելու և համայնքի սեփականությունը տնօրինելու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով երաշխավորված իրավունքը և համայնքի կարողությունն է:

Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքի անդամների կողմից ընտրված համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու կողմից: Օրենքով հստակորեն սահմանվում են վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները, նրանց գործունեության կարգն ու սկզբունքները:

19. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածը սահմանում է «Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը»:

20. Առաջին անգամ 2005 թվականին ՀՀ Սահմանադրության մակարդակով անմիջականորեն ամրագրվեց յուրաքանչյուրի իրավունքը ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում և պարտականությունը անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը (հոդված 33.2): Շատ կարևոր է նաև Օրհուսի կոնվենցիայի պահանջների լույսի ներքո նույն հոդվածում ամրագրված պաշտոնատար անձի պատասխանատվությունը բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար:

Սահմանադրությունը տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրների թվին է դասում ներկա և ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականության իրականացումը (հոդված 48.10):

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է (հոդված 31), որ սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրապետության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

21. ՀՀ բնապահպանության նախարարության կողմից իրականացվող աշխատանքների հիմնական ուղղություններն են եղել ՀՀ կառավարության կողմից հաստատված բնապահպանության ոլորտի գծով գերակա խնդիրների և միջոցառումների կատարման ապահովումը: Այդ առումով որպես ազգային հրատապ խնդիրներ, առանձնացվում են՝ Սևանա լճի հիմնախնդիրը, կենսաբազմազանության և լադշաֆտային բազմազանության պահպանությունը, անտառների պահպանումը, պայքարը անապատացման դեմ, ավտոտրանսպորտի արտանետումների կրճատումը և վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ հեռացումը:

22. 2004թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ միջազգային կոնվենցիաներից բխող ՀՀ պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը, որտեղ նաև ներկայացվել են ՄԱԿ-ի անապատացման դեմ պայքարի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները 2005-2010թթ. համար: «Եվրոպայի վայրի բնության և բնակմիջավայրերի պահպանության մասին» Բեռնի կոնվենցիայի շրջանակներում, 2007-2008թթ. ընթացքում իրականացվել է «Հայաստանի Հանրապետությունում «Կանաչ Համակարգ»-ի /Emerald Network/ ներդրման պիլոտային ծրագիր»: Ծրագրի նպատակը տվյալների բազայի ստեղծումն էր, որը կպարունակեր ՀՀ հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ վերոնշյալ ծրագրով նույնականացվող տեղեկատվություն՝ Եվրոպայի ամբողջ տարածքում հատուկ պահպանության ռեժիմների շնորհիվ ստեղծվող պահպանության համընդհանուր ցանցի միջոցով վայրի բուսական և կենդանական տեսակներին սպառնացող վտանգները մեղմացնելու նպատակով:

23. ՀՀ կառավարության 15.01.2004թ. N7 որոշման համաձայն ՀՀ անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և

օգտագործման բնագավառում պետական լիազորված մարմին է հանդիսանում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, իսկ վերահսկողության լիազորություններն իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարությունը:

24. ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի շրջանակներում ՀՀ-ում շարունակվում է «Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի» իրականացումը: Վերջինիս շրջանակներում, 2003թ. ՀՀ բնապահպանության նախարարության և ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի քարտուղարության և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ, հնարավորություն ստեղծվեց իրականացնելու երկու առաջնահերթ պիլոտային ծրագրեր:

25. ՀՀ պետական բյուջեի հաշվին 2004-2008թթ. իրականացվել է ՀՀ տարածքում պահուստային (լքված) հանքավայրերի պաշարների գույքագրում և հաշվառում: Այդ ծրագրերը կնպաստեն դեգրադացված հողերի վերականգման աշխատանքներին:

26. Արդի ժամանակաշրջանը բնորոշվում է թափոնների գոյացման աննախադեպ չափերի աճով: «Կայուն զարգացման» հայեցակարգը ենթադրում է տնտեսության այնպիսի շարունակական զարգացում, որը որևէ բացասական ազդեցություն չթողնի մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա: Այդ նպատակին է կոչված նաև թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարումը, որը հսկողության տակ է պահում թափոնների գործածության ոլորտը:

ՀՀ համար այսօր առավել արդիական է վտանգավոր արդյունաբերական թափոնների էկոլոգիապես անվտանգ հեռացման հիմնախնդիրը հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետությունում երբևէ չեն եղել թափոնների վերամշակման ձեռնարկություններ ու վնասագերծման մասնագիտացված պոլիգոններ, և թափոնների վերամշակման գործարանի կառուցումը մոտ ապագայում չի նախատեսվում:

2004թ. նոյեմբերի 24-ին ընդունվել է «Թափոնների մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

27. Տեսչական վերահսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացման և երկրի տնտեսության զարգացմանը զուգընթաց զգալիորեն ավելացել և ավելանում են բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով պետական բյուջեի մուտքերը՝ նպաստավոր պայմաններ/հենք ստեղծելով հանրապետությունում բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման համար:

28. 2001թ. մայիսի 2-ին ընդունվել է ՀՀ նոր հողային օրենսգիրքը: Այն սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, հողի նկատմամբ իրավունքների

պաշտպանության իրավական հիմքերը՝ ելնելով հողի կարևոր բնապահպանական, տնտեսական ու սոցիալական նշանակությունից, որի շնորհիվ ՀՀ-ում հողն օգտագործվում և պահպանվում է որպես ժողովրդի կենսագործունեության պայման:

Հողերի պահպանությունը ներառում է բնապահպանական, տնտեսական, կազմակերպական, իրավական և այլ միջոցառումների համակարգ, որոնք ուղղված են հողերի նպատակային և արդյունավետ օգտագործմանը:

Կայուն զարգացման տեսակետից՝ հողերի պահպանությունը պետք է ընդգրկի լայնածավալ միջոցառումներ՝ նպատակաուղղված հողային պաշարների արդյունավետ օգտագործմանը, քանի որ հողերի դեգրադացումը պայմանավորված է կլիմայի փոփոխությամբ, բնական պաշարների վիճակով և սոցիալ-տնտեսական գործոններով:

Հողերի պահպանության գործում առաջնահերթ նշանակություն ունեն հողերի օգտագործման սխեմաների և գոտիավորման նախագծերի մշակումը:

2003թ. սկսած մշակվում են մի շարք գյուղական և քաղաքային համայնքների բնակավայրերի գլխավոր հատակագծեր, որոնց համապատասխան հողամասերը օտարվում և օգտագործման են տրամադրվում հողօգտագործողներին: Բացի այդ, սահմանված կարգով իրականացվում են նաև համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների մշակումը և հաստատումը:

29. Օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ ընդունվել են հետևյալ իրավական ակտերը.

- ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշումով հաստատվել է պետական համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը,

- ՀՀ կառավարության 02.05.2003թ. N625-Ն որոշմամբ հաստատվել է հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման և հաստատման կարգը,

- ՀՀ կառավարության 08.05.2003թ. N613-Ն որոշումով հաստատվել է բնության հատուկ պահպանվող տարածքներում գործունեության կարգը,

- ՀՀ կառավարության 11.12.2003թ. N1788-Ն որոշումով հաստատվել են Սևանա լճի առափնյա առաջնահերթ կառուցապատման ենթակա տարածքների գոտիավորման փաստաթղթերը,

- ՀՀ կառավարության 13.05.2004թ. N766-Ն որոշմամբ սահմանվել են «Սևան» ազգային պարկի 1908 մետր բացարձակ նիշից ցածր տարածքներում հողամասերը վարձակալությամբ տրամադրելու առանձնահատկությունները,

- ՀՀ կառավարության 19.09.2002թ. N1622-Ն որոշմամբ հաստատվել է «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը»,

- ՀՀ կառավարության 02.02.2002թ. N93 որոշմամբ հաստատվել է «Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերը համայնքներին սեփականության իրավունքով անհատույց փոխանցելու կարգը»,

- ՀՀ կառավարության 14.08.2003թ. N1128-Ն որոշմամբ հաստատվել է «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափի որոշման կարգը»,

- ՀՀ կառավարության 25.01.2005թ. N92-Ն որոշմամբ հաստատվել է «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը»,
- ՀՀ կառավարության 2007 թվականի հունվարի 18-ին հաստատվել է «Դիլիջան» ազգային պարկի 2007-2011թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին N204-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2007թվականի հունվարի 18-ին հաստատվել է «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին N205-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 26-ի N54 Արձանագրային որոշմամբ հաստատվել է «Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագիրը, 2003-2010թթ»,
- ՀՀ կառավարության կողմից 2008թ. մարտի 20-ին ընդունվել է «Բնության հատուկ պահպանվող տարածքների պետական կադաստրի վարման կարգը սահմանելու մասին» N 259-Ն որոշումը,
- ՀՀ կառավարության կողմից 2007թ. օգոստոսի 30-ին ընդունվել է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգը սահմանելու մասին» N 1044-Ն որոշումը,
- 2006թ. նոյեմբերի 27-ին ընդունվել է ՀՀ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքը:

Հողերի պահպանության գործընթացի հաջողությունը պայմանավորված է բնապահպանության ոլորտում գործողությունների միասնական ռազմավարության իրականացմամբ: Հանրապետությունում հետևողական աշխատանք է տարվում այս ոլորտում առկա բացերը վերացնելու և որոշումներում նախանշված նպատակները կյանքի կոչելու ուղղությամբ: Սակայն դեռևս շատ խնդիրներ կան լուծելու այս բնագավառում:

30. Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Կովկասի հարուստ հանքահումքային հենքով բնութագրվող շրջաններից մեկը: Տարիների աշխատանքի ընթացքում հանրապետության տարածքում հայտնաբերվել են զանազան օգտակար հանածոների հանքավայրեր: Ներկայումս հայտնի շուրջ 60 տեսակի օգտակար հանածոների արդյունաբերական պաշարներով 613 հանքավայրերի տնտեսական համախառն արժեքը ընդերքում գնահատվել է ավելի քան 170մլրդ. ԱՄՆ դոլար:

31. Հանրապետության տարածքում արդյունաբերական նշանակություն ունեն ազնիվ, գունավոր և սև մետաղների հանքավայրերը: Իրենց պաշարներով առանձնանում են Քաջարանի պղնձամոլիբդենային, Սոթքի և Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը:

32. Ոչ մետաղական օգտակար հանածոներից արդյունաբերական պաշարներով բնութագրվում են քարաղի, բենտոնիտային կավերի, պեռլիտների, դիատոմիտների, տրավերտինների, տուֆերի և տուֆալավանների, բազալտների, գրանիտների և մարմարների հանքավայրերը:

33. Հանրապետությունում հայտնի են նաև ստորերկրյա քաղցրահամ ջրերի 43 և 23 ստորերկրյա ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրեր:

34. ՀՀ-ում աճել է օգտակար հանածոների հանքավայրերը (տեղամասերը) շահագործող կազմակերպությունների քանակը: Եթե մինչև 2002թ. շահագործվում էր մոտ 165 հանքավայր, ապա 2005թ. դրությամբ հանքարդյունահանում է իրականացնում ավելի քան 250 կազմակերպություն:

35. Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում պետական լիազորված մարմինների և ընդերքօգտագործող կազմակերպությունների իրավահարաբերությունների կարգավորման նպատակով ընդունվել են ՀՀ «Ընդերքի մասին» նոր օրենսգիրքը (2002թ.) և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքը (2002թ.) և վերջիններից բխող շուրջ երկու տասնյակ ենթաօրենսդրական ակտեր:

36. Հանքարդյունահանումը, դրական միտումների հետ մեկտեղ, առաջացրել է նաև բնապահպանական մի շարք խնդիրներ: Հանքարդյունահանման հետևանքով խախտված հողերի տարածքները գնահատվել են շուրջ 6500 հա, այդ թվում՝ շուրջ 4000 հա շահագործվող և 2500 հա ռեկուլտիվացիայի ենթակա:

37. Ընդերքի օգտագործման բնագավառում՝ հանքահումքային հենքի ընդլայնման, դրա ողջամիտ օգտագործման, ինչպես նաև շրջակա միջավայրին հասցված վնասները մեղմացնելուն ուղղված միջոցառումների շրջանակում 2005 թվականից սկսվել են ընդերքօգտագործման նոր աշխատանքներ:

Դրանց իրականացման նպատակով 2005 թվականից սկսվել է ընդերքօգտագործման լիցենզիոն պայմանագրերի հիման վրա Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխում համապատասխան երաշխիքային գումարների կուտակումը, որոնք բացառապես օգտագործվելու են ընդերքի շահագործման հետևանքով խախտված տարածքների ռեկուլտիվացիայի, հարթեցման, կանաչապատման, ծառատնկման և կառուցապատման աշխատանքների իրականացման համար: 01.09.2008 թվականի դրությամբ արդեն իսկ հավաքագրվել է ավելի քան 180 մլն.դրամ:

38. Հայաստանի տարածքն աչքի է ընկնում զարգացած, բայց անհամասեռ ջրագրական ցանցով, որը բնորոշ է լեռնային երկրներին: Այստեղ հաշվվում են 9480 փոքր և միջին գետեր՝ 23000 կմ ընդհանուր երկարությամբ: Հայաստանի տարածքում կան հարյուրից ավելի փոքր լճեր: Մեծությամբ և ժողովրդատնտեսական օգտագործման տեսակետից առավել մեծ նշանակություն ունեն Սևանա և Արփի լճերը:

39. Գետերի ջրային պաշարների ողջամիտ օգտագործումը և հոսքը կարգավորելու նպատակով կառուցվել են 74 ջրամբարներ:

40. 2002թ. ընդունված ՀՀ ջրային նոր օրենսգրքի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից արդեն հաստատվել են շուրջ 120-ից ավելի նորմատիվ-իրավական ակտեր:

2005թ. ընդունվել է «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքը: Այն իրենից ներկայացնում է ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի ռազմավարական օգտագործման և պահպանության հեռանկարային զարգացման հայեցակարգ: Առանց այդ մոտեցումների

հստակեցման անհնար կլինի իրականացնել ջրային ռեսուրսների լիարժեք համապարփակ կառավարումը:

Ելնելով ՀՀ ջրային օրենսգրքի պահանջներից՝ 2006թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը, որը սահմանել է ազգային ջրային պաշարի մեծությունները, ջրերի նկատմամբ պահանջարկը, ջրերի ստանդարտների տեխնիկական առաջադրանքները, ջրային ռեսուրսների, հիդրոտեխնիկական կառուցվածքների գործառնական նշանակության դասակարգումները և բնագավառի կառավարման և պահպանության մոտեցումներն ու չափանիշները:

Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների, ստեղծվել է համապատասխան օրենսդրական դաշտ՝ նախադեպը չունեցող ջրային պետական կադաստրի ինստիտուտի հիմնադրման համար: Պետական ջրային կադաստրը մշտապես գործող համակարգ է, որը համապարփակ տվյալներ է գրանցում ջրային ռեսուրսների քանակական ու որակական ցուցանիշների, ջրահավաք ավազանների, ջրավազանների հուններից ու ավերից արդյունահանվող նյութերի, կենսառեսուրսների կազմի ու չափաքանակների, ջրօգտագործողների, ջրօգտագործման թույլտվությունների և ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների մասին:

41. Ջրային ռեսուրսների առավել արդյունավետ, նպատակաուղղված և ապակենտրոնացված կառավարումը խթանելու համար, համաձայն ՀՀ վարչապետի «Ջրավազանային կառավարման մարմինների ցանկի, գործունեության կանոնակարգի և ավազանային կառավարման անցման ժամանակացույցի մասին» և ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության ավազանային կառավարման տարածքները սահմանելու և դրանց կառավարման պլանների մասին» որոշումների, հանրապետության տարածքը բաժանվել է 5 հիդրոլոգիական ավազանների և ստեղծվել են 5 ջրավազանային տարածքային կառավարման բաժիններ:

Սևան-Հրազդան ջրավազանային տարածքում աշխատանքները առավել արդյունավետ իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 6-ի N 1010-Ն որոշման համաձայն այդ բաժինը բաժանվել է 2՝ Սևանի և Հրազդանի ջրավազային տարածքային կառավարման բաժինների՝ արդյունքում ձևավորելով 6 ջրավազանային տարածքային կառավարման բաժիններ: Ձգալի աշխատանքներ է կատարվել ջրային ռեսուրսների կառավարման բնագավառի օրենսդրության կայացման ուղղությամբ՝ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» և «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները: Ներկայումս աշխատանքներ են տարվում վերոնշյալ 6 ջրավազանային տարածքների համար ջրավազանային կառավարման պլանների մշակման ուղղությամբ, որոնց ընդունումն իրավական կայուն հիմքեր կապահովի ջրային ռեսուրսների կառավարման ապակենտրոնացման իրականացման համար:

Մշակվել են ջրային պետական կադաստրի ինստիտուտի կայացմանն աջակցող ծրագրեր, մասնավորապես աշխատանքներ են կատարվում բնագավառի կառավարմանն աջակցող դինամիկ տեղեկատվական-վերլուծական համակարգի

ստեղծման ուղղությամբ՝ աշխարհագրական տեղեկատվական համակարգի կիրառմամբ: Ջրօգտագործման թույլտվությունների ձևակերպման միջոցով իրավական դաշտ է բերվել հանրապետության ջրօգտագործողների և ջրօգտագործման ծավալների 85-90% -ը:

42. Հայաստանը համարվում է կենսառեսուրսներով հարուստ երկիր: Նշված հարստությունը, որն իր կազմում ներառում է մեծ թվով տնտեսապես արժեքավոր, հազվագյուտ, ռելիկտ և էնդեմիկ տեսակներ, պայմանավորված է հողա-կլիմայական պայմանների մեծ բազմազանությամբ, նրա երկրաբանական բարդ կառուցվածքով, ինչպես նաև Հայաստանի յուրահատուկ աշխարհագրական դիրքով:

43. Հայաստանում լայնորեն տարածված է կենսաբանական ռեսուրսների ուղղակի օգտագործումը, ներառյալ բնափայտի օգտագործումը, արածեցման նպատակով արոտավայրերի օգտագործումը, վայրի բույսերի հավաքը, ձկնորսությունը և որսորդությունը: Մի շարք կենսառեսուրսների օգտագործումը դեռևս կանոնակարգված չէ և որոշ տեսակներին ու պոպուլյացիաներին սպառնում է անհետացման վտանգ, իսկ էկոհամակարգերին՝ անդառնալի փոփոխություն:

Կենսառեսուրսների գերօգտագործման խնդիրը մինչ օրս մնում է պետության ուշադրության կենտրոնում և դրանց լուծման համար ՀՀ կառավարության կողմից իրականացվել են մի շարք անհապաղ միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են կենսառեսուրսների կայուն օգտագործման ապահովմանը:

44. Ջրային էկոհամակարգերի համար անչափ կարևոր է ձկնային կենսաբազմազանության պահպանման և վերականգնման հարցը:

Սևանա լճի երեք էնդեմիկ ձկնատեսակներից երկուսը՝ իշխանը և բեղլուն, գրեթե անհետանում են և գրանցված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում:

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից իրականացվել են իշխանի գեղարքունի և ամառային իշխանի պահպանված ենթատեսակների բազմացման միջոցառումներ: Այդ առումով կարելի է համարել, որ անհետացման եզրին գտնվող ենթատեսակների կարգավիճակը բարելավվել է: Թեպետ լուրջ միջոցառումներ են իրականացվում անհետացող ձկնատեսակների վերարտադրման ուղղությամբ, սակայն արդյունքը կարելի է ակնկալել լճում նրանց բնական բազմացումից հետո: Այնուհանդերձ, լճում դեռևս չի նկատվում նշված ձկնատեսակների թվաքանակի աճ:

45. 2000թ.-ին ընդունված «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը, իսկ 1999թ.-ին ընդունված «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքով իրականացվում է ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

Կենդանական աշխարհի օբյեկտների կայուն օգտագործման համար ընդունվել են «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքը և

«Սոցիալական նպատակներով կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման մասին պայմանագրեր կնքելու կարգը սահմանելու մասին» (10.07.2003թ. N 884-Ն) և «Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանիների սիրողական որսի և ձկնորսության և որսի օբյեկտ չհանդիսացող կենդանիների որսի կատարման կանոնները հաստատելու մասին» (08.04.2004թ. N 646-Ն) և «Անագատ և կիսաանագատ պայմաններում վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիներին պահելու և օգտագործելու կարգը սահմանելու մասին» (26.06.2009թ. N 725-Ն) ՀՀ կառավարության որոշումները:

46. Անտառային ռեսուրսների պահպանությունը և կայուն օգտագործումը համարվում է պետության գերակայություններից մեկը:

2005թ. ընդունվել է ՀՀ նոր անտառային օրենսգիրքը, որը կարգավորում է Հայաստանի անտառների և անտառային հողերի կառավարման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2

1. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իր իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց՝ սույն Դաշնագրով ճանաչված իրավունքները և ապահովել դրանք առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրությունից:

2. Եթե դա դեռևս նախատեսված չէ գոյություն ունեցող օրենսդրական կամ այլ միջոցներով, սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է իր սահմանադրական ընթացակարգերին և սույն Դաշնագրի դրույթներին համապատասխան անհրաժեշտ քայլեր ձեռնարկել այնպիսի օրենքներ կամ այլ միջոցառումներ ընդունելու համար, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացման համար:

3. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

ա) ցանկացած անձի համար, որի՝ սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքները կամ ազատությունները խախտված են, ապահովել արդյունավետ իրավական պաշտպանություն, անգամ եթե այդ խախտումը կատարած լինեն պաշտոնապես գործող անձինք,

բ) ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն հայցող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները,

գ) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը՝ դրանք տրամադրելու դեպքում:

47. 1998թ. հետո, հատկապես 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում, Դաշնագրի 2-րդ հոդվածով ամրագրված իրավահավասարության սկզբունքն իր հետագա օրենսդրական զարգացումն ունեցավ, իսկ Սահմանադրությամբ ավելացվեցին նաև խտրականության արգելման հիմքերը: Սահմանադրական փոփոխություններով մի շարք նոր իրավունքներ ամրագրվեցին, որոշ իրավունքներ, որոնք նախկինում վերապահված

Էին միայն ՀՀ քաղաքացիներին, սահմանադրական բարեփոխումների արդյունքում ամրագրվեցին որպես յուրաքանչյուր անձի վերապահվող իրավունքներ, մի շարք իրավունքներ էլ, որոնք նախկինում ամրագրված էին օրենքներում, ներմուծվեցին Սահմանադրության մեջ:

48. Իրավահավասարության սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածում:

Եթե նախկինում որոշակի անհամապատասխանություններ կային ՀՀ Սահմանադրության և Դաշնագրի դրույթների միջև, ապա 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրության 2005թ. նոյեմբերի 27-ի խմբագրությամբ վերացվել են նշված հակասություններն ու անհամապատասխանությունները: ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածը ևս նման փոփոխության արդյունք է. ի տարբերություն ՀՀ Սահմանադրության 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ տեքստի 42-րդ հոդվածի, 2005թ. նոյեմբերի 27 խմբագրությամբ տեքստի 22-րդ հոդվածը, Դաշնագրի 15-րդ հոդվածին համարժեք, ամրագրում է ոչ միայն պատասխանատվությունը խստացնող քրեական օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքը, այլ նաև ամրագրում է պատասխանատվությունը մեղմացնող քրեական օրենքի հետադարձ ուժի սկզբունքը:

49. Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մտքի, խղճի, կրոնի ազատության և իրավունքի սահմանափակման շրջանակներին և Դաշնագրի 18-րդ հոդվածի միջև հակասությանը, ապա, 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում, ՀՀ Սահմանադրության 2005թ. նոյեմբերի 27-ի խմբագրությամբ տեքստում՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքն ամրագրող համարժեք 26-րդ հոդվածը շարադրված է Դաշնագրի 18-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, և գրեթե բառացիորեն Դաշնագրի 18-րդ հոդվածի վերաշարադրանքն է: Այսպես, ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածն ամրագրում է. «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը: Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով» եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության» բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար»:

50. ՀՀ-ն մեծ ուշադրություն է դարձնում մարդու իրավունքների կրթությանը՝ դիտարկելով այն որպես ժողովրդավարության զարգացմանը նպաստող կարևորագույն գործոն: Այսպես, 2001 թվականից Մարդու իրավունքները որպես առանձին կրթական առարկա ընդգրկվեց հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրում և դասավանդվում է 9-րդ դասարանում: Աշակերտներն ուսումնասիրում են նաև «Քաղաքացիական կրթություն» և «Պետություն և իրավունք» առարկաները:

Հայաստանի բուհերի «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջները ներառում են հետևյալ դասընթացները. «Պետության և իրավունքի տեսություն»,

«Իրավունքի նորմեր», «Օրինականություն», «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն», «Սահմանադրական իրավունք», «Մարդու և քաղաքացու սահմանադրական կարգավիճակը, նրա սահմանադրական իրավունքները, ազատությունները և պարտականությունները, դրանց իրացման սահմանադրական երաշխիքները», «Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք», «Միջազգային իրավունք», «Միջազգային անվտանգության իրավունք», «Մարդու իրավունքները և միջազգային իրավունքը», «Միջազգային մարդասիրական իրավունք» և այլ նմանատիպ դասընթացներ, որոնք ներառում են Կոնվենցիայի դրույթները:

Մարդու իրավունքների ուսուցման ուղղությամբ մեծ աշխատանք է տարվել ոչ միայն դասագրքերի մշակման, այլ նաև ուսուցիչների և դասախոսների վերապատրաստման նպատակով: Ընդ որում, այս աշխատանքներում մեծ ներդրում են ունեցել նաև հասարակական կազմակերպությունները, օրինակ «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի» կողմից ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կրթության տասնամյակի (1996-2004թթ.) ընթացքում հիմնադրվել է Մարդու իրավունքների հայկական դպրոցը, ուր միայն անցած վեց տարիների ընթացքում վերապատրաստվել է 360 ուսուցիչ: Այս աշխատանքներին գումարվում է նաև մարդու իրավունքների գրադարանների ցանցի հիմնումը: 2001 թվականից ի վեր հիմնադրվել են մարդու իրավունքների վեց գրադարաններ՝ որպես մարդու իրավունքների կրթության ռեսուրս կենտրոններ տարբեր մարզերում: «Մարդու իրավունքներ» առարկան դասավանդվում է նաև Հայաստանի բարձրագույն հաստատություններում, այդ թվում Երևանի պետական համալսարանում, գործում են նաև մարդու իրավունքների կրթության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոններ: ՀՀ կառավարության կողմից մեծ ուշադրություն է դարձվում նաև առանձին մասնագիտական խմբերին այս ոլորտում վերապատրաստելու հարցերին, այդ թվում իրավաբանների, ոստիկանության աշխատակիցների, դատավորների և այլն: Որպես կրթական ծրագրերի հիմք են վերցվում մարդու իրավունքների միջազգային հիմնարար փաստաթղթերը, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և երկու միջազգային դաշնագրերը:

51. Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության սահմանադրական նորմերն իրենց անմիջական արտացոլումն են գտել ՀՀ օրենսդրության մեջ: Մասնավորապես, «ՀՀ Քաղաքացիության մասին» օրենքի համաձայն (ընդունվել է 1995 թվականի նոյեմբերի 6-ին) յուրաքանչյուր անձ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք ունի: Հայաստանի Հանրապետությունը խրախուսում է ՀՀ-ում բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելը և չի խոչընդոտում նրանց կողմից այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելուն:

ՀՀ քաղաքացիություն ձեռք է բերվում՝

1. քաղաքացիության ճանաչմամբ,
2. ծնունդով,
3. քաղաքացիություն ստանալու միջոցով,
4. քաղաքացիությունը վերականգնելու միջոցով,

5. քաղաքացիության խմբային ձեռքբերման միջոցով (ներգադրի և օրենքով սահմանված այլ դեպքերում՝ Հանրապետության Նախագահի հրամանագրով):

ՀՀ քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած և գործունակ յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, եթե՝

1) օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում,

2) կարող է բացատրվել հայերեն լեզվով և

3) ծանոթ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Առանց վերը նշված պահանջների պահպանման՝ ՀՀ քաղաքացիություն կարող է ստանալ ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձը՝

1) որն ամուսնացել է ՀՀ քաղաքացու հետ կամ ունի ՀՀ քաղաքացի երեխա,

2) որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է ՀՀ քաղաքացիություն կամ ծնվել է ՀՀ-ում, և որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում դիմել է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար.

3) որը ծագումով հայ է, այսինքն՝ ունի հայ նախնիներ,

4) որը 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել ՀՀ քաղաքացիությունից:

52. «ՀՀ Քաղաքացիության մասին» օրենքում /26.02.07 ՀՕ-75-Ն/ փոփոխություն է կատարվել, որի համաձայն ավելացել է 13-րդ հոդվածը՝ երկքաղաքացիության մասին:

ՀՀ երկքաղաքացի է համարվում այն անձը, որը ՀՀ քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության (երկրների) քաղաքացիություն:

ՀՀ երկքաղաքացին ՀՀ համար ճանաչվում է միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

ՀՀ երկքաղաքացին ունի ՀՀ քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է ՀՀ քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը: ՀՀ քաղաքացիություն ունեցող երկքաղաքացի անձանց զինապարտության հարցերը կարգավորվում են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի (16.09.1998թ.) 3.1 հոդվածով:

53. 2006թ. դեկտեմբերի 25-ին ընդունված «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով սահմանվել են օտարերկրացիների կացության կարգավիճակները, կացության կարգավիճակ տալու հիմքերը, ժամկետները, կացության կարգավիճակ տալը մերժելու հիմքերը, օտարերկրացու աշխատանքի թույլտվության տրամադրման և մերժման, ինչպես նաև ՀՀ տարածքից օտարերկրացու հեռանալու և արտաքսման կարգերը և այլ հարցեր:

ՀՀ-ում օտարերկրացիներն ունեն ՀՀ քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտականություններ, ՀՀ տարածքում կրում են ՀՀ քաղաքացիներին հավասար պատասխանատվություն:

ՀՀ-ում օտարերկրացիները պարտավոր են հարգել ՀՀ Սահմանադրությունը և օրենքները, իրավական այլ ակտերը, ազգային սովորույթներն ու ավանդույթները:

54. ՀՀ-ում «Փախստականների մասին» օրենքը ընդունվել էր 1999 թվականին: Այնուհետև, նշված օրենքում 3 անգամ կատարվել են լրացումներ և փոփոխություններ: Այնուհանդերձ, քանի որ այդ օրենքում առկա էին մի շարք բացեր ու թերություններ, այդ նպատակով էլ մշակվեց և 2008 թվականի նոյեմբերի 27-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվեց «Փախստականների և ապաստանի» մասին ՀՀ նոր օրենքը: Օրենքը համապատասխանում է Ժնևյան կոնվենցիաների և միջազգային հիմնարար այլ փաստաթղթերի պահանջներին: Փախստական ճանաչված անձիք օգտվում են ՀՀ պաշտպանությունից և գտնվում են նրա հովանավորության ներքո: Օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ հիմնավոր պատճառներով վտանգ կա, որ նա կենթարկվի դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ՝ խոշտանգումների:

ՀՀ տարածքում ապաստան ստացած փախստականներն իրավունք ունեն օգտվելու ՀՀ օրենսդրությամբ ՀՀ քաղաքացիների համար սահմանված սոցիալական ծառայություններից, ստանալու պետական նպաստներ և դրամական այլ օգնություն, ժամանակավոր անաշխատունակության, արտադրությունում աշխատանքային խեղման, դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների դեպքերի համար տրվող նպաստներ, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև ունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակային ապահովության, գործազրկության դեպքում՝ սոցիալական պաշտպանության իրավունք, եթե նրանք բավարարում են տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները: ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» համաձայն՝ յուրաքանչյուր ով կարող է իր խախտված իրավունքները պաշտպանելու համար դիմել դատական ատյաններ, ինչը տարածվում է նաև փախստականների և ապաստան հայցողների վրա: «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով երաշխավորվում է մերժում ստացած ապաստան հայցողների դատական պաշտպանության իրավունքը:

«ՀՀ պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում 2001 թվականին կատարվել է լրացում, համաձայն որի մերժում ստացած ապաստան հայցողները կարող են բողոքարկել իրենց հայցի մերժումը դատական ատյաններում առանց պետական տուրքի վճարման:

Ապաստան հայցողները և փախստականները ունեն ՀՀ-ում օրինական հիմքերով բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ հավասար իրավունքներ և պարտականություններ: Ապաստան հայցող անձը, մինչև իր ներկայացրած ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը, չի կարող արտաքսվել ՀՀ տարածքից: Լիազոր մարմին դիմած ապաստան հայցողներին և նրանց ընտանիքի անդամներին լիազոր մարմինը տեղավորում է Ժամանակավոր տեղավորման կենտրոնում, որտեղ նրանց տրամադրվում են սնունդ և կենսաապահովման պայմաններ:

55. 1998թ. ընդունվել և 1999թ. հունվարից ուժի մեջ է մտել ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, որի խնդիրն է ապահովել անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից, անձի և հասարակության

պաշտպանությունը պետական իշխանության ինքնիրավ գործողություններից և չարաշահումներից: Այն որպես սկզբունք ամրագրել է օրինականությունը, իրավաբանական օգնության իրավունքի ապահովումը, անձի, գույքի, բնակարանի անձեռնմխելիությունը, անմեղության կանխավարկածը, դատական քննության հրապարակայնությունը, մրցակցությունը քրեական դատավարության ընթացքում և մի շարք այլ սկզբունքներ, որոնք կոչված են ապահովելու գործի արդարացի, համակողմանի և անաչառ քննությունը և արդարադատության իրականացումը միայն անկախ և անկողմնակալ դատարանի կողմից:

56. 1999թ. մայիսի 5-ին ընդունվեց ՀՀ ընտրական օրենսգիրքը, որը հետագա փոփոխությունների և լրացումների շնորհիվ օրենսդրական կայուն հիմքեր ստեղծեց երկրում ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար:

57. 2003 թվականի օգոստոսի 1-ից ուժի մեջ է մտել նոր Քրեական օրենսգիրքը:

58. 2003թ. հոկտեմբերի 21-ին ընդունվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը (Օրենք), որի հիման վրա ՀՀ-ում ստեղծվել և գործում է մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը՝ հստակորեն սահմանելով դրա գործունեության կարգն ու պայմանները: Այսպիսով, գործնականում կիրառելի է դառնում մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու սահմանադրական նորմը:

Օրենքի 7-րդ հոդվածը տալիս է պաշտպանի քննարկմանը ենթակա բողոքների շրջանակը: Մասնավորապես, վերը նշված հոդվածի 1-ին կետով ասվում է, որ պաշտպանը քննարկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից ՀՀ Սահմանադրությամբ, Օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով, ինչպես նաև միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով նախատեսված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է պաշտպանին դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակը՝ բացառելով որևէ խտրականություն. «Պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական և այլ հայացքներից ու գործունակությունից»: Նույն հոդվածի 2-րդ մասով ապահովվում է նաև իրավաբանական անձանց կողմից մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունքը:

Մինչև նույն ժամանակ, Օրենքը տալիս է պաշտպանի անձեռնմխելիության և նրա որոշումների վրա ազդելու բացառման իրական երաշխիքներ:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» 18.07.2007թ. ՀՀ Նախագահի թիվ ՆՀ-174-Ն հրամանագրի 42-րդ կետի համաձայն, մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող օրենքների նախագծերը, նախքան

կառավարություն ներկայացնելն, ուղարկվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիքի:

59. ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմում, ի թիվս այլ հանձնաժողովների, 2008 թվականին ստեղծվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը, որը իրականացնում է մարդու իրավունքների հետ կապված օրենսդրական նախագծերի փորձաքննություն:

60. 2004թ. ընդունվել և 2005թ.-ից գործում է ՀՀ ընտանեկան օրենսգիրքը:

61. ՀՀ Սահմանադրության 6-րդ գլուխը նվիրված է դատական իշխանությանը, որի 91-րդ հոդվածի համաձայն ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: 92-րդ հոդվածով ասվում է, որ ՀՀ-ում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև մասնագիտացված դատարաններ:

62. 2007թ. փետրվարի 21-ին ընդունվել և նույն տարվա մայիսի 18-ից ուժի մեջ է մտել ՀՀ դատական օրենսգիրքը (Օրենսգիրք), որով կարգավորվում են դատական իշխանության կազմակերպման և գործունեության հարաբերությունները (Բացառությամբ ՀՀ սահմանադրական դատարանի): Այն որդեգրել է ժողովրդավարական երկրներին բնորոշ և միջազգային իրավունքում հայտնի մի շարք սկզբունքներ, որոնք կոչված են ապահովելու արդարադատության իրականացումը միայն օրենքին համապատասխան և տալու դատավորների ու դատարանների ինքնավարության, անկախության և ինքնուրույնության իրական երաշխիքներ:

Օրենսգրքի 7-րդ հոդվածով հստակորեն սահմանվում է դատական պաշտպանության իրավունքը, համաձայն որի յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք: Ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից:

Չի սահմանափակվում նաև յուրաքանչյուրի իրավունքը՝ դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու ինչպես իր ներկայացուցչի կամ պաշտպանի միջոցով, այնպես էլ անձամբ:

63. ՀՀ օրենսդրությունում Դաշնագրի դրույթների ընդգրկվածության առումով կարելի է նշել 14.12.2004թ. ընդունված «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանել է հանրային պաշտպանության ինստիտուտը և նշել, որ պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնություն քրեական գործերով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և նախատեսված դեպքերում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և հետևյալ դեպքերում.

1) ալիմենտի գանձման վերաբերյալ գործերով,

2) խեղման կամ առողջությանն այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով:

64. 2002 թվականի ապրիլի 26-ին ՀՀ-ի համար ուժի մեջ մտավ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան: Այդ պահից սկսած ՀՀ իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր խախտած իրավունքների դատական պաշտպանության իրավունքն իրացնել ոչ միայն ներպետական դատարաններ, այլ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու միջոցով: 2009 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ Եվրոպական դատարանի կողմից կայացված է թվով 20 վճիռ:

65. 2003թ. դեկտեմբերի 17-ին ընդունվել է «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է ՀՀ քաղաքացու կողմից պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում այլընտրանքային ծառայության գորակոչ կազմակերպելու և անցկացնելու կարգը:

66. 2001թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» և 2002թ. հուլիսի 3-ին ընդունված «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքները օրենսդրական կառուցակարգեր են ապահովել Դաշնագրի 22-րդ հոդվածով ամրագրված միավորման իրավունքի իրականացման համար: Բացի այդ, 2004թ. նոյեմբերի 9-ին ընդունված Աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածում, որպես աշխատանքային օրենսդրության սկզբունք, ամրագրվել է գործատուների և աշխատողների՝ աշխատանքային իրավունքների և շահերի պաշտպանության համար ազատորեն միավորվելու իրավունքը (ներառյալ՝ արհեստակցական և գործատուների միություններ ստեղծելու կամ դրանց անդամագրվելու իրավունքը):

67. Սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սահմանադրության 30.2 հոդվածում ամրագրվել է, որ քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման նպատակով Ազգային ժողովն ընդունել է բազմաթիվ օրենքներ, այդ թվում՝ 2001թ. դեկտեմբերի 4-ի «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2005թ. հուլիսի 8-ի «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2002թ. հուլիսի 3-ի «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2007թ. նոյեմբերի 28-ի «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2007թ. նոյեմբերի 28-ի «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2002թ. հուլիսի 3-ի «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2002թ. հուլիսի 3-ի «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2004թ. դեկտեմբերի 14-ի «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2002թ. դեկտեմբերի 4-ի «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2006թ. հուլիսի 7-ի «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2005թ. հուլիսի 8-ի «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2004թ. փետրվարի 18-ի «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2001թ. հոկտեմբերի 24-ի «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքը, 2003թ. ապրիլի 11-ի

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքը, որոնք կարգավորում են հանրային ծառայության ոլորտում ծագող հասարակական հարաբերությունները:

68. Սահմանադրական փոփոխություններն օրյեկտիվորեն առաջադրեցին «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի արմատական փոփոխությունների անհրաժեշտություն: ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ ՀՀ Ազգային ժողով ներկայացվեց «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծ: Այն մանրագնին փորձաքննություն է անցել Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովում: Նոր օրենքն ուժի մեջ է մտել 2006թ. հուլիսի 1-ին:

69. 2006 թվականը Հայաստանում դատական սահմանադրական վերահսկողության համար առանձնահատուկ էր նրանով, որ 2005թ. սահմանադրական փոփոխություններն անմիջականորեն առնչվեցին սահմանադրական արդարադատության ողջ համակարգին: Նախ, Սահմանադրության 93-րդ հոդվածով սահմանվեց, որ «ՀՀ-ում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը» (ՄԴ իրավասությունները սահմանող ՀՀ Սահմանադրության 100 և 101 հոդվածները):

Վերոհիշյալ սահմանադրական փոփոխությունների և դրանց հիման վրա կատարված օրենսդրական փոփոխությունների առավել առաջադեմ ձեռքբերումն այն էր, որ 2006թ. հուլիսի 1-ից սահմանադրական դատարան դիմելու իրավունք ստացան նաև ֆիզիկական և իրավաբանական անձինք: Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են սահմանադրական դատարանում վիճարկել իրենց նկատմամբ դատական վերջնական ակտով կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքի իրացման արդյունքում՝ սահմանադրական դատարանը 2006թ. հուլիսի 1-ից մինչև 2009թ. հոտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում քննության է առել տասնյակ քաղաքացիների կողմից ներկայացված անհատական դիմումների հիման վրա հարուցված 46 գործ, որից 20-ի դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձանց վիճարկված օրենսդրական դրույթները ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր (մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերի առանձին դրույթներ, «Սոցիալական քարտերի մասին» ՀՀ օրենքի, «Մնանկության մասին» ՀՀ օրենքի, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», ՀՀ օրենքի առանձին դրույթներ):

Հոդված 3

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են տղամարդկանց ու կանանց համար ապահովել սույն Դաշնագրով նախատեսված քաղաքացիական ու քաղաքական բոլոր իրավունքներից օգտվելու հավասար իրավունք:

70. Հայաստանի Հանրապետությունն իր օրենսդրությամբ ապահովում է տղամարդկանց և կանանց հավասար իրավունքներ և այդ իրավունքներից օգտվելու հավասար հնարավորություններ: Կանանց հանդեպ խտրական

քաղաքականություն, որոշումներ, կարգադրություններ կամ գործելակերպ Հայաստանում չկա (տես CEDAW/C/ARM/4-ի 5-րդ կետը): Չնայած սրան, ՀՀ-ում դեռևս անբավարար է կանանց ներկայացվածության աստիճանը որոշումների կայացման մակարդակում (մանրամասները տես՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կատարման վերաբերյալ ՀՀ համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցը՝ CEDAW/C/ARM/4):

71. Սահմանելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ Սահմանադրությամբ նշվում են «յուրաքանչյուր ոք» կամ «յուրաքանչյուր քաղաքացի» արտահայտությունները՝ չվերագրելով դրանք կանանց կամ տղամարդկանց: Ավելին, Սահմանադրության 14.1 հոդվածն արգելում է խտրականությունը, այդ թվում՝ սեռային հատկանիշներով (տես՝ հոդված 2-ին վերաբերող տեղեկատվության մեջ):

72. Անկախացումից հետո ընդունված առաջին ռազմավարական ծրագիրը, որը նախանշեց կանանց նկատմամբ պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունում 1998-2000 թվականներին կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրն» էր, որին հաջորդեց 2004 թվականի ապրիլի 8-ին ՀՀ կառավարության թիվ N645-Ի որոշմամբ հաստատված «ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010թթ.» ազգային ծրագիրը: Վերոհիշյալ ծրագիրը սահմանում է կանանց խնդիրների լուծմանն ուղղված պետական քաղաքականության առաջնությունները և հիմնված է ՀՀ Սահմանադրության և ՄԱԿ-ի «Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի, ինչպես նաև 1995 թվականի Պեկինյան 4-րդ համաշխարհային համաժողովի հանձնարարականների վրա (տես՝ CEDAW/C/ARM/4 կետ 24-27 կետերը):

Այս փաստաթուղթը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետությունում կանանց իրավունքների և հիմնական ազատությունների, պետական կառավարման մարմիններում կանանց մասնակցության երաշխիքների ապահովմանը և մայրության ու մանկական առողջության պահպանմանը:

73. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում շարունակում է գործել կանանց, ընտանիքի և երեխաների հիմնահարցերով զբաղվող վարչություն, որն, ըստ էության, կանանց սոցիալական պաշտպանվածություն ապահովող հիմնական ազգային մեխանիզմն է (տես՝ CEDAW/C/ARM/4 կետ 37-39 կետերը):

74. Ի կատարումն ՀՀ կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 128-րդ կետի, ներկայումս մշակվում է «Գենդերային քաղաքականության մասին» հայեցակարգի նախագիծ, որը նպատակ ունի սահմանելու ՀՀ-ում տղամարդկանց և կանանց նկատմամբ պետական քաղաքականության հիմնական նպատակները, խնդիրները, սկզբունքները և ուղղությունները:

75. Մշակման փուլում է գտնվում նաև «Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների պետական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

76. ՀՀ վարչապետի 2009թ. մայիսի 26-ի թիվ 426-Ա որոշման հիման վրա վերաձևավորվել է Կանանց հարցերով խորհուրդը: Խորհրդի նախագահ է հանդիսանում ՀՀ վարչապետը: Խորհուրդը կոչված է պաշտպանել կանանց իրավունքները, հսկողության տակ վերցնել կանանց վիճակի բարելավման ազգային ծրագրի միջոցառումները, գենդերային հարցերը:

77. ՀՀ ոստիկանության պետի 29.05.2009թ. թիվ 1430-Ա հրամանով հաստատվել է Ոստիկանության կին ծառայողների խորհրդի կանոնադրությունը, որի հիմնական խնդիրներն են՝ ՀՀ ոստիկանության համակարգի կին ծառայողների սոցիալական, տնտեսական, կրթական, աշխատանքային հիմնահարցերի լուծման ուղղությամբ միջոցառումների իրականացումը:

78. Կանանց և տղամարդկանց հավասարությունն ապահովող սահմանադրական նորմերը անմիջականորեն ներդրված են մի շարք օրենսդրական ակտերում: Մասնավորապես, 2004թ. ընդունվել և 2005թ. -ից գործում է ՀՀ ընտանեկան օրենսգիրքը (Օրենսգիրք), որը, որպես հիմնական սկզբունքներ, նշում է, որ ընտանեկան հարաբերությունների իրավական կարգավորումն իրականացվում է տղամարդու և կնոջ ամուսնական դաշինքի կամավորության, ընտանիքում ամուսինների իրավունքների հավասարության, ընտանեկան հարցերը փոխադարձ համաձայնությամբ լուծելու սկզբունքներին համապատասխան:

Օրենսգրքի 24-րդ հոդվածը փաստում է ամուսինների իրավահավասարությունն ընտանիքում, նշելով, որ ամուսիններից յուրաքանչյուրն ազատ է աշխատանք, զբաղմունք, մասնագիտություն, բնակության վայր ընտրելու հարցում: Մայրության, հայրության, երեխաների դաստիարակության և կրթության, ինչպես նաև ընտանեկան կյանքի այլ հարցեր ամուսինները համատեղ լուծում են՝ ելնելով ամուսինների իրավահավասարության սկզբունքից: 25-րդ հոդվածը սահմանում է, որ ամուսնանալիս ամուսինները, իրենց ցանկությամբ, կարող են ընտրել ամուսիններից մեկի ազգանունը, որպես ընդհանուր ազգանուն, կամ պահպանել մինչամուսնական ազգանունը:

Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական տարիքի հասնելը:

Ամուսիններն ընտանիքում պարտավոր են իրենց հարաբերությունները կառուցել փոխադարձ օգնության և հարգանքի վրա, նպաստել ընտանիքի ամրությանը, հոգ տանել իրենց երեխաների բարեկեցության ու զարգացման համար:

Որպես հավասարության երաշխիք ՀՀ ընտանեկան օրենսգիրքը հռչակել է նաև ամուսնական պայմանագիր կնքելու ազատությունը և սահմանել, որ ամուսնական պայմանագիրը ամուսնացող անձանց համաձայնությունն է, կամ ամուսինների համաձայնությունը, որով որոշվում են ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները ամուսնության և (կամ) այն լուծվելու

ընթացքում: Սահմանելով ամուսինների և նախկին ամուսինների ալիմենտային պարտավորությունները՝ Օրենսգրքի 13-րդ գլխում հավասար պայմաններ են ապահովվում ամուսիններից երկուսի համար էլ:

79. 2004թ. հոկտեմբերի 11-ին ընդունվել և 2005թ. հունիսի 21-ին ուժի մեջ է մտել նոր ՀՀ աշխատանքային օրենսգիրքը (Օրենսգիրք), որը որպես սկզբունքներ սահմանում է աշխատանքի ազատությունը, ներառյալ՝ աշխատանքի իրավունքը, ցանկացած ձևի (բնույթի) հարկադիր աշխատանքի և աշխատողների նկատմամբ բռնությունների արգելումը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից, ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցություններին, արհեստակցական միություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից, յուրաքանչյուր աշխատողի համար աշխատանքի արդարացի պայմանների իրավունքի ապահովումը, աշխատողների իրավունքների և հնարավորությունների հավասարությունը: Օրենսգիրքը սահմանել է, որ տղամարդկանց և կանանց միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց վճարվում է նույն չափով աշխատավարձ, բացի այդ՝ աշխատանքների որակավորման համակարգի կիրառման դեպքում միևնույն չափանիշները պետք է կիրառվեն ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց նկատմամբ, և այդ համակարգը պետք է մշակված լինի այնպես, որ բացառի սեռային հատկանիշներով ցանկացած խտրականություն: Որպես կանանց և երեխա խնամող աշխատողներին տրամադրվող երաշխիքներ՝ Օրենսգրքի 117-րդ հոդվածը սահմանում է, որ աշխատանքային պայմանագիրը չի կարող լուծվել հղի կնոջ հետ հղիության ամբողջ ժամանակահատվածում (անհրաժեշտության դեպքում՝ բժշկական եզրակացության առկայության դեպքում), ծննդաբերության արձակուրդի և դրան հաջորդող ամսվա ընթացքում, ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի հետ:

141-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով ասվում է, որ ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ սահմանվում է հղի կնոջ և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի պահանջով: Իսկ 172-րդ հոդվածով կարգավորվում են հղիության և ծննդաբերության համար տրամադրվող արձակուրդին վերաբերող հարցերը:

Օրենսգրքի 23-րդ գլուխը նվիրված է աշխատողների անվտանգությանն ու առողջությանը, որի 258-րդ հոդվածի 1-ին մասով ասվում է, որ հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց չի թույլատրվում ներգրավել մոր և մանկան առողջության վրա բացասական ազդեցություն ունեցող վնասակար պայմաններով և վտանգավոր գործոններով աշխատանքների կատարմանը: Հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար աշխատանքի վնասակար պայմանների և վտանգավոր գործոնների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, նաև, որ գործատուն, վտանգավոր գործոնները վերացնելու հնարավորություն չունենալու դեպքում, պետք է միջոցներ

ձեռնարկի բարելավելու աշխատանքային պայմանները կամ, կնոջ համաձայնությամբ, նրան տեղափոխի նույն ձեռնարկությունում այլ աշխատանքի: Իսկ 5-րդ մասով ասվում է, որ կրծքով կերակրող կնոջը, բացի հանգստի և սնվելու համար տրամադրվող ընդհանուր ընդմիջման ժամերից, նորածնին կերակրելու համար ոչ պակաս, քան յուրաքանչյուր երեք ժամը մեկ, տրամադրվում են լրացուցիչ ընդմիջումներ՝ կես ժամից ոչ պակաս տևողությամբ: Կնոջ ցանկությամբ նորածնին կերակրելու համար ընդմիջումները կարելի է միավորել և միացնել ընդհանուր ընդմիջմանը կամ տեղափոխել աշխատանքային օրվա վերջ՝ աշխատանքային օրվա տևողության համապատասխան կրճատումով: Նորածնին կերակրելու համար նախատեսված ընդմիջումների ժամանակահատվածում աշխատողը վճարվում է միջին աշխատավարձի չափով, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով միջին ժամային աշխատավարձի չափը:

Մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին հղիության և ծննդաբերության դեպքում ունի վճարովի արձակուրդի և նոր ծնված երեխայի խնամքի կամ երեխայի որդեգրման համար արձակուրդի իրավունք:

80. Սահմանադրության 30-րդ հոդվածով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք:

Սահմանադրական այս նորմը գործում է և՛ անմիջականորեն, և՛ իր ուղղակի արտացոլումն է գտել ՀՀ օրենսդրության մեջ: Մասնավորապես, 1999թ. փետրվարի 28-ից ուժի մեջ մտած ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ և 3-րդ հոդվածը սահմանում է, որ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն: Այդ հիմքերով՝ ընտրական իրավունքի ցանկացած սահմանափակում հետապնդվում է օրենքով: Այսինքն, ՀՀ ընտրական օրենսգրքը ևս բացառում է ամեն տեսակ խտրականություն, այդ թվում և՛ սեռական: Ավելին, 100-րդ հոդվածով տալով Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների առաջադրման կարգը, 2-րդ մասով ասում է, որ Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ներկայացրած ընտրական ցուցակում առնվազն 15 տոկոսը պետք է լինեն կանայք, ընդ որում, ընտրական ցուցակի առնվազն յուրաքանչյուր տասներորդը պետք է լինի կին:

81. 2003թ. օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած նոր ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածով հանցանք է համարվում քաղաքացիների իրավահավասարությունը խախտելը, մասնավորապես, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված անձի ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, որը վնաս է պատճառել անձի օրինական շահերին, ինչով և քրեականացվում է Սահմանադրության 14.1 հոդվածի խախտումը: Օրենսգրքի 57-

րդ հողվածը, սահմանելով կալանքը որպես պատժի տեսակ, 2-րդ մասով ասում է, որ կալանք չի նշանակվում հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ, իսկ 60-րդ հողվածը, սահմանելով ցմահ ազատազրկումը, 2-րդ մասով նախատեսում է, որ հանցանք կատարելու կամ դատավճիռ կայացնելու պահին հղի վիճակում գտնվող կանայք չեն կարող դատապարտվել ցմահ ազատազրկման:

Քրեական օրենսգրքի 63-րդ հողվածով, ի թիվս այլոց, հանցագործության համար որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք է դիտվում հանցանքը հանցավորի համար ակնհայտ հղի կնոջ նկատմամբ կատարելը: Օրենսգրքի 78-րդ հողվածով նախատեսվում է հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելը կամ պատժից ազատելը:

Օրենսգրքի 18-րդ գլուխը վերաբերում է սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններին: 138-րդ հողվածը սահմանում է բռնաբարությունը որպես հանցագործություն՝ տալով դրա սահմանումը. «Բռնաբարությունը՝ տղամարդու սեռական հարաբերությունն է կնոջ հետ՝ նրա կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ կնոջ անօգնական վիճակն օգտագործելով»:

Միննույն ժամանակ, Օրենսգրքի 16-րդ գլխում սահմանելով կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները, Օրենսգիրքը այդ արարքները հանցանք է համարում անկախ այն հանգամանքից, արդյոք դրանք կատարվել է տղամարդու կամ կնոջ հանդեպ, ավելին օրենսգիրքը նաև չի տարբերակում այդ արարքների կատարումը ամուսնու կամ օտար անձի կողմից կատարված լինելու հանգամանքը և ամեն դեպքում սահմանում է միննույն պատիժը:

ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ ազատազրկման դատապարտված հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց, բացառությամբ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար հինգ տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց, դատարանը կարող է հետաձգել պատիժը կրելը կամ ազատել պատիժը կրելուց այն ժամկետի սահմաններում, որի ընթացքում կինն ազատվում է աշխատանքից հղիության, ծննդաբերության, ինչպես նաև երեխայի մինչև երեք տարեկան դառնալու կապակցությամբ: Բացի այդ քրեական պատասխանատվություն է սահմանվել հղի կնոջը հղիության շարժառիթով կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձին այդ շարժառիթով աշխատանքի ընդունելուց անհիմն հրաժարվելու կամ աշխատանքից անհիմն ազատելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հողվածի 4-րդ մասի համաձայն, հանրային աշխատանքները չեն նշանակվում հղի կանանց նկատմամբ, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հողվածի 4-րդ մասի համաձայն՝ հղի կանայք չեն կարող բերման ենթարկվել դատարան, բացառությամբ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների կատարման մեջ կասկածվելու դեպքերի:

82. Բոլոր իրավունքներից օգտվելու տղամարդկանց և կանանց հավասար իրավունքները որոշակիորեն սահմանվում են նաև «Փախստականների մասին» ՀՀ օրենքով, ըստ որի, փախստականների կարգավիճակ ստանալու համար դիմելու իրավունք ունի յուրաքանչյուր օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ՝ առանց տարիքային սահմանափակման:

83. «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված են առանձին դրույթներ կին ապաստան հայցողների վերաբերյալ, մասնավորապես, կին ապաստան հայցողի հետ հարցազրույցը, որը վերջինիս ցանկությամբ անցկացնում է լիազոր մարմնի կին աշխատակիցը, անհրաժեշտության դեպքում իրականացվում է կին թարգմանչի միջոցով:

84. ՀՀ դատական օրենսգրքով սահմանվել է, որ դատավորների թեկնածությունների ցուցակի կազմման ժամանակ հաշվի է առնվում սեռային (գենդերային) հավասարակշռությունը: Եթե որևէ սեռի դատավորների թիվը պակասի դատավորների ընդհանուր թվի 25 տոկոսից, ապա այդ սեռի թեկնածուներին ցուցակում կերաշխավորվի առնվազն 5 տեղ: ՀՀ-ում 216 դատավորներից 46-ը կանայք են:

85. Մշտապես ուշադրության կենտրոնում են գտնվում բռնության դեմ պայքարի հետ կապված հարցերը, որոնք կարգավորվում են ՀՀ ազգային օրենսդրությամբ, մասնավորապես, մի շարք իրավական ակտերով, այդ թվում՝ Քրեական օրենսգրքով, Քաղաքացիական օրենսգրքով, Ընտանեկան օրենսգրքով: Համաձայն այս իրավական ակտերի, բռնությունն ըստ տուժողի սեռի առանձնացված չէ: Քրեորեն պատժելի է ցանկացած բռնություն՝ անկախ այն բանից, այդ բռնությունը գործադրվել է ընտանիքում, թե՛ ոչ: Քրեորեն պատժելի են բռնությամբ զուգորդվող հանցագործությունները, որոնք կարող են գործադրվել նաև ընտանիքում: Դրանք են՝ մոր կողմից նորածին երեխայի սպանությունը, ինքնասպանության հասցնելը, դիտավորությամբ առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս պատճառելը, ծեծը, խոշտանգումը, վիրավորանքը, բռնաբարությունը, սեքսուալ բնույթի բռնի գործողությունները, սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը և այլն:

86. 2005թ. ընդունվել է նաև «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը, որտեղ սահմանվում են պետության կողմից բռնության ենթարկված անձանց տրամադրվող աջակցության ձևերը, ժամկետները և մեխանիզմները:

87. Ներկայումս, «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի նախաձեռնությամբ և միջազգային կառույցների աջակցությամբ համապատասխան միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից մշակվում է «Ընտանեկան բռնության մասին» օրենքի նախագիծը:

Մինչև 2006թ. տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվել են հետազոտություններ հանրապետությունում կանանց նկատմամբ բռնության երևույթի բացահայտման վերաբերյալ: 2006-2007թթ. ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ, պետական վիճակագրական ծառայության և ՀԿ-ների

մասնակցությամբ իրականացվել է 3 հետազոտություն, որոնք անդրադառնում են կանանց նկատմամբ բռնությանը ընտանիքում և աշխատավայրում:

Բռնության երևույթի վերացման համար կարևոր գործոն է կանխարգելումը, որին մեծապես նպաստում է հասարակության իրազեկումը: Ամեն տարի ՄԱԿ-ի կառույցների, միջազգային այլ կազմակերպությունների աջակցությամբ, ՀԿ-ների և պետական կառույցների մասնակցությամբ կազմակերպվում է «Ակտիվության 16-օրյակ ընդդեմ գենդերային բռնության» քարոզարշավը, որի շրջանակներում կազմակերպվում են տարբեր միջոցառումներ՝ ուղղված երևույթի վերաբերյալ տեղեկատվության տարածմանը բոլոր մակարդակներում՝ ազգային, մարզային և համայնքային:

ՀՀ կառավարության 2009-2011թթ. միջնաժամկետ ծրագրերում հաստատված «Ճգնաժամային կենտրոնների ստեղծում բռնության ենթարկված անձանց համար» պետական ծրագրի շրջանակում նախատեսվում է աջակցություն ցուցաբերել բռնության ենթարկված կանանց:

Ներկայումս Հայաստանում գործում է 3 «Թեժ գիծ» («Հայաստանի մայրության կենտրոն» և «Կանանց իրավունքների կենտրոն» Երևանում, «Աջակից» ՀԿ Գյումրիում) և մեկ ճգնաժամային ընտանեկան կենտրոն («Հայաստանի մայրության կենտրոն»):

2008թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրական խնդիրների շարքում ավելացել է բռնության ենթարկված անձանց սոցիալական պաշտպանությանը և երևույթի կանխարգելմանը վերաբերվող գործառնություններ: Նախատեսվում է, որ կանանց հանդեպ բռնությունների կանխման և պատժման հարցերով զբաղվելու նպատակով հատուկ գործառնություններ կտրվեն նաև Ոստիկանության համապատասխան վարչությանը:

ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության ծրագրում ներառվել են բռնության երևույթի կանխարգելմանը և բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին տրամադրվող աջակցության հարցերը: 2009թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված է ֆինանսավորում (շուրջ 16 միլիոն դրամ), բռնության ենթարկվածներին տրամադրվող ծառայությունների համար:

88. Երկրի մշակութային կյանքին մասնակցելու համար կանայք ունեն նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ, այս իրավունքը առաջին հերթին ամրագրվում է ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածով, որի համաձայն «Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք»: Սահմանադրության 40-րդ հոդվածին են հարաբերակցվում ՀՀ Սահմանադրության 27-րդ և 41-րդ հոդվածները:

Հայաստանում մշակույթը ավանդաբար մեծ դեր է կատարել հասարակության մեջ և կանայք այդ ասպարեզում գրավում են ամենաբարձր դիրքերը: Հայաստանում կինը մշտապես համարվել և համարվում է ազգային ավանդույթների, մշակույթի կրող ու պահպան:

Մշակութային և այլ արժեքներին հաղորդակցվելու մատչելիությունը ամրագրված է 1954թ. Եվրոպական մշակութային կոնվենցիայի համապատասխան դրույթներում, որին ՀՀ-ն միացել է 2005 թվականի հոկտեմբերին:

Մշակույթին հաղորդակցվելու մատչելիության քաղաքացիների իրավունքներն ամրագրված են նաև Հայաստանի Հանրապետությունում մշակույթի պահպանման, տարածման և զարգացման հայեցակարգային հիմնադրույթների վերաբերյալ ՀՀ կառավարության N 46 արձանագրային որոշմամբ /ընդունված 2000թ. հոկտեմբերին/, որը հստակորեն սահմանում է մշակութային քաղաքականության սկզբունքները, այդ թվում՝ մշակութային գործունեության ազատությունը, մշակութային արժեքներին հաղորդակցվելու մատչելիությունը և այլն: Համապատասխան սկզբունքներ են պարունակվում նաև «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքում:

Հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը՝ Հանրապետությունում ձեռնարկվում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ հասարակության բոլոր խավերի համար մշակույթին հաղորդակցվելու մատչելիությունն ապահովելու համար:

Երկրում, ուր մշակույթը մշտապես կարևոր տեղ է զբաղեցրել հասարակության կյանքում, կանայք ոչ միայն ունեն նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ, այլև առաջատար դիրքեր են զբաղեցնում:

Վիճակագրության համաձայն՝ 2006թ. ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի 142 աշխատակիցներից 90-ը կանայք էին: 2008թ.-ին այս նախարարությունից առանձնացվեց և առանձին նախարարություն կազմվեց՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերով: 2008թ. ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի 142 աշխատակիցներից 63-ն են կանայք:

Մշակույթի ոլորտում կանայք նաև ստանձնում են ղեկավար պաշտոններ: Այսպես, 2003-2004թթ. ՀՀ մշակույթի նախարարը կին է եղել, 2006թ.-ից մինչ օրս նույնպես ՀՀ մշակույթի նախարարը կին է: 2004-2006թթ. ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալներից մեկը կին էր: Ներկայումս ևս ՀՀ մշակույթի նախարարի տեղակալներից մեկը կին է: Ինչ վերաբերում է մշակույթի ոլորտի ղեկավար պաշտոններին, ապա նախարարության ենթակայությամբ գործող 14 գրադարաններից 8-ը ղեկավարում են կանայք: Թանգարանային ոլորտում ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող 52 թանգարաններից և մասնաճյուղերից 21-ը ղեկավարում են կանայք:

Տղամարդկանց և կանանց միջև հարաբերակցությունը ցույց տվող վիճակագրությունը, այդ թվում օրենսդիր իշխանությունում, հանրակրթական դպրոցների աշակերտների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակի սեռային բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի ներկայացված են գեկույցին կից ներկայացվող հավելվածում: (Այլ մանրամասներ տես՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կատարման վերաբերյալ ՀՀ համատեղ երրորդ և չորրորդ պարբերական գեկույցը՝ CEDAW/C/ARM/4):

Հոդված 4

1. Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը, և որը հայտարարված է պաշտոնապես, սույն Ղաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի շեղումն սույն Ղաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունների՝ միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը, պայմանով, որ այդ միջոցներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքի համաձայն իրենց մյուս պարտավորությունների հետ և չեն հանդիսանում խտրականություն բացառապես ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման հիմքով:

2. Այս դրույթը չի կարող հիմք ընդունվել 6, 7, 8 (1-ին և 2-րդ կետեր), 11, 15, 16 և 18-րդ հոդվածներից որևէ շեղում կատարելու համար:

3. Սույն Ղաշնագրի մասնակից ցանկացած պետություն, որն օգտվում է շեղվելու իրավունքից, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարության միջնորդությամբ սույն Ղաշնագրի մասնակից մյուս պետություններին անհապաղ տեղեկացնում է այն դրույթների մասին, որոնցից ինքը շեղվել է, և այդպիսի որոշում կայացնելու դրդապատճառների մասին: Նույն միջնորդի միջոցով հետագայում հաղորդում է նաև այդ շեղումը դադարեցնելու ամսաթվի մասին:

89. ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ Հանրապետության Նախագահին է վերապահված սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում արտակարգ դրություն հայտարարելու և իրավիճակից թելադրվող միջոցառումներ իրականացնելու իրավասությունը: Միաժամանակ, Սահմանադրությամբ Հանրապետության Նախագահի՝ արտակարգ դրություն հայտարարելու իրավունքի իրացմամբ մարդու իրավունքների սահմանափակման տեսանկյունից նախատեսվում է հակակշռի մեխանիզմ: Այսպես, նախ, արտակարգ դրություն հայտարարելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում, Հանրապետության Նախագահը խորհրդակցում է Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, ինչպես նաև այդ մասին ուղերձով դիմում ժողովրդին: Արտակարգ դրություն հայտարարելու դեպքում՝ իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ: Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն, Ազգային ժողովը կարող է չեղյալ հայտարարել Հանրապետության Նախագահի՝ հայտարարարված արտակարգ դրության իրավիճակից թելադրվող միջոցառումների իրականացումը:

Նախատեսվում է արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանել օրենքով: Այս պահանջի կիրարկումն ապահովելու նպատակով՝ ՀՀ կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագրում ընգրկվել և ներկայումս շրջանառության մեջ է դրվել «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախատեսվում է, որ արտակարգ դրություն հայտարարելու մասին իրավական ակտում պետք է հստակ նշվի մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումների, կիրառվող միջոցառումների և լրացուցիչ պարտավորությունների շրջանակը, ինչպես նաև արտակարգ դրության պայմաններում իրականացվող միջոցառումներն ու ֆիզիկական անձանց սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակումները: Ըստ նախագծի՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների փոփոխություններն ու իրավաբանական անձանց առաջադրվող լրացուցիչ պարտավորությունները պետք է իրականացվեն այն

սահմաններում, որոնք համարժեք են արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքներին ու պետք է համապատասխանեն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին և բխեն արտակարգ դրության պայմաններում (արտակարգ իրավիճակներում) պարտավորություններից շեղվելու վերաբերյալ միջազգային պարտավորություններից:

Այստեղ ուղղակիորեն գործում է Սահմանադրության 14.1 հոդվածով սահմանված պահանջը, համաձայն որի բոլորը հավասար են օրենքի առջև և խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, լեզվից, կրոնից, գենետիկական հատկանիշներից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելիությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Դաշնագրի 4-րդ հոդվածով նախատեսված արտակարգ դրության ժամանակ սահմանափակվող իրավունքների ու ազատությունների շրջանակն սահմանվել է Սահմանադրության 44-րդ հոդվածում, համաձայն որի մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 15-րդ (կյանքի իրավունքը և մահապատժի դատապարտման կամ ենթարկման արգելքը), 17-22-րդ (խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկվելու արգելքի, իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, իր խախտված իրավունքները պաշտպանելու և վերականգնելու, իրավաբանական օգնություն ստանալու, անմեղության կանխավարկածի, օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման արգելքի և այլն) և 42-րդ (յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները, ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով, ինչպես նաև անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի սահմանափակման վերաբերյալ) հոդվածներով նախատեսվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում:

90. Դաշնագրի 4-րդ հոդվածի պահանջների կատարման համար գործունե աշխիք է հանդիսանում այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 43-րդ և 44-րդ հոդվածներում հստակ և սպառիչ կերպով սահմանված է, թե որ դեպքերում և ինչ կարգով կարող են սահմանափակվել մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, առանձնացված է նաև, թե կոնկրետ որ իրավունքները կարող են սահմանափակվել: 43-րդ հոդվածով սահմանված է. «Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական

հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

Երկու՝ 43 և 44 հոդվածներով էլ նախատեսված սահմանափակումները պարտադիր կերպով կախման մեջ են դրված Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններից, և այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են, օրինակ, կյանքի իրավունքը, իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, անմեղության կանխավարկածը և որոշ այլ իրավունքներ, սահմանափակման ենթակա չեն, իսկ որոշներն էլ կարող են սահմանափակվել բացառապես օրենքով:

91. 2008 թվականի փետրվարի 19-ին ՀՀ-ում կայացած նախագահական ընտրություններից հետո նախագահի թեկնածուներից մեկի՝ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցների գործողությունների արդյունքում, օրենքի խախտմամբ կազմակերպվեցին հրապարակային միջոցառումներ, որոնք զուգորդվեցին Երևանի քաղաքապետարանի շրջակայքում և կենտրոնական փողոցներում հրկիզումներով, գույքի ոչնչացմամբ և վնասումներով, հրագների, պայթուցիկ նյութերի գործադրմամբ և իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով: Ցուցարարների և ոստիկանության միջև բախումների հետևանքով բազմաթիվ մարդիկ ստացան մարմնական վնասվածքներ, տաս մարդ զոհվեց:

92. Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգին սպառնացող վտանգը կանխելու և բնակչության իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ և 117-րդ հոդվածի 6-րդ կետերով, ՀՀ Նախագահը 2008 թվականի մարտի 1-ին՝ 20 օրով Երևան քաղաքում արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագիր ստորագրեց: 2008թ.-ի մարտի 10-ի ՀՀ նախագահի հրամանագրով փոփոխություններ արվեցին մարտի 1-ին արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագրի 4-րդ կետում՝ մասնակիորեն վերացնելով նախատեսված սահմանափակումները: Իսկ 2008թ.-ի մարտի 21-ին արտակարգ դրություն հայտարարելու մասին հրամանագիրը դադարեցվեց օրենքով սահմանված կարգով: Միննույն ժամանակ, Դաշնագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին ուղղված նամակով սույն Դաշնագրի մյուս պետություններին անհապաղ տեղեկացվեց այն դրույթների մասին, որոնցից պետությունը շեղվել է՝ հայտարարելով արտակարգ դրություն, ինչպես նաև հետագա փոփոխությունների և հրամանագրի դադարեցման մասին: 1990 թվականի Կոպենհագենի փաստաթղթի 24 և 25-րդ պարբերությունների և 1991 թվականի Մոսկվայի փաստաթղթի 28-րդ պարբերության համաձայն՝ նմանատիպ նամակներ փոխանցվեցին նաև ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ, ինչպես նաև ԵԽ Մարդու իրավունքների և

հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

93. Մարտի 1-2-ի դեպքերի առնչությամբ հարուցվեց քրեական գործ 225-րդ հոդվածի 3-րդ և 235-րդ հոդվածի 2-րդ մասերի հատկանիշներով, քրեական գործերը փոխանցվեցին դատարան: Կայացված դատավճիռներով 27 անձից 10-ը դատապարտվեցին 1-ից 5 տարի ժամկետով ազատազրկման, 17-ի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չկիրառվեց, սահմանվեց փորձաշրջան:

94. 2009 թվականի հունիսի 19-ին ՀՀ Նախագահի նախաձեռնությամբ գումարվեց Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան, որի ընթացքում քննարկեց նրա՝ համաներում հայտարարելու մասին առաջարկը: Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ «Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ հայտարարում է համաներում», առաջարկն ընդունվեց և հայտարարվեց համաներում (համաներմամբ ազատ արձակվեց 307 մարդ):

95. Ինչ վերաբերում է բնական կամ տեխնածին աղետների հետևանքով ստեղծված արտակարգ իրավիճակներին, ապա «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն արտակարգ իրավիճակը որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ է, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման:

ՀՀ-ում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հիմքերն ու կազմակերպումը, այդ բնագավառում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով:

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն ՀՀ պաշտպանության նախարարությունը և ՀՀ ոստիկանությունը՝

ա) կազմակերպում են իրենց համակարգի աշխատողների պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում,

բ) կազմակերպում են ենթակա ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների գործունեությունն արտակարգ իրավիճակներում,

գ) իրենց լիազորությունների սահմաններում ապահովում են բնակչության պաշտպանությունը և այդ նպատակով ստեղծում են անհրաժեշտ մասնագիտացված կազմավորումներ,

դ) իրականացնում են բնակչության պաշտպանության բնագավառի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Բացի նշված օրենքից արտակարգ իրավիճակների մասնավոր դեպքերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են`

- «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքով,
- «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքով,
- «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով,
- այլ իրավական ակտերով:

96. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ զինված ուժերի հիմնական գործառնություններից են` մասնակցությունը արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին ու քաղաքացիական պաշտպանության, տարահանման, որոնողափրկարարական, փրկարարական, վթարավերականգնողական և մարդասիրական միջոցառումներին, ինչպես նաև միջազգային պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարումը, ներառյալ` միացյալ զինված ուժերի կազմում մասնակցությունը միջազգային մարդասիրական և փրկարարական, խաղաղապահ և կայունացման գործողություններին:

97. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով պետական կառավարման մարմինների լիազորությունների իրականացման վերահսկիչ մեխանիզմներ են հանդիսանում`

- 19-րդ հոդվածով սահմանված դրույթները, ըստ որոնց` ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իրավունք ունի ստանալ արտակարգ իրավիճակների հետևանքով իր կրած վնասների փոխհատուցում, ինչպես նաև ճշգրիտ տեղեկություն արտակարգ իրավիճակների, դրանց առաջացման վտանգի և իր պաշտպանվածության աստիճանի մասին: Արտակարգ իրավիճակներում քաղաքացիների սեփականության տիրապետումը և ժամանակավոր օգտագործումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել հետագա համարժեք փոխհատուցմամբ (միայն կյանքի փրկության և առողջության հետ կապված փրկարարական աշխատանքների նպատակահարմար իրականացման համար)` ՀՀ կառավարության սահմանած կարգով:

- 23-րդ հոդվածով սահմանված դրույթները, ըստ որոնց` պաշտոնատար անձինք և քաղաքացիները սույն օրենքի պահանջները խախտելու, ինչպես նաև արտակարգ իրավիճակների առաջացման պայմաններ և նախադրյալներ ստեղծելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

98. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն արտակարգ իրադրության պայմաններում ոստիկանությունը պարտավոր է ձեռնարկել անհետաձգելի միջոցառումներ մարդկանց փրկելու և առաջին բժշկական օգնություն ցույց տալու, ինչպես նաև առանց հսկողության մնացած գույքը պահպանելու ուղղությամբ` վթարների, աղետների, հրդեհների և

արտակարգ այլ պատահարների ժամանակ: Օրենքով սահմանված կարգով մասնակցել ՀՀ տարածքում կամ դրա առանձին մասերում արտակարգ իրավիճակի կամ ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանը, համաճարակների ժամանակ կարանտին միջոցառումների անցկացմանը:

Նույն օրենքի 25-րդ հոդվածի համաձայն ոստիկանությունը, արտակարգ իրադրության պայմաններում, ինչպես նաև հատուկ միջոցառումներ իրականացնելիս ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի՝

- ներքին գործերի մարմնի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի որոշմամբ կատարել տարածքի հատվածների շրջափակում (շրջապատում)՝ անհրաժեշտության դեպքում կատարելով տրանսպորտային միջոցների զննություն, տարերային աղետների, համաճարակների ժամանակ, կարանտին միջոցառումներ անցկացնելիս կանխել անկարգությունները, տրանսպորտի, կապի և այլ կազմակերպությունների աշխատանքները խափանող գործողությունները:

- օրենքով սահմանված կարգով և նախապես ներկայացնելով ծառայողական վկայական՝

ա) բնական աղետների, վթարների, համաճարակների և զանգվածային անկարգությունների ժամանակ քաղաքացիների անձնական և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով անարգել մուտք գործել քաղաքացիների բնակարան կամ այլ շինություն, նրանց պատկանող հողամաս, կազմակերպությունների զբաղեցրած շինություն կամ տարածք, զննել դրանք,

բ) օգտագործել կազմակերպություններին կամ քաղաքացիներին, ինչպես նաև պաշտոնատար անձանց պատկանող տրանսպորտային միջոցները տարերային աղետի վայր հասնելու, շտապ բժշկական օգնության կարիք ունեցող քաղաքացիներին բժշկական հաստատություններ տեղափոխելու, հանցագործներին հետապնդելու, ինչպես նաև վթարի պատճառով վնասված տրանսպորտային միջոցները տեղափոխելու և դեպքի վայր հասցնելու կամ ոստիկանության անձնակազմին տագնապի ազդանշանով հավաքատեղի հասցնելու համար՝ անհրաժեշտության դեպքում հեռացնելով վարորդներին տրանսպորտային միջոցները վարելուց:

Վերոնշյալ նպատակներով կարող են օգտագործվել նաև կազմակերպություններին կամ քաղաքացիներին, ինչպես նաև պաշտոնատար անձանց պատկանող կապի միջոցները:

Սույն կետում նշված դեպքերում քաղաքացիներին պատկանող տրանսպորտային կամ այլ միջոցներին պատճառած վնասը ենթակա է հատուցման օրենքով սահմանված կարգով:

Թվարկված նպատակների համար չեն կարող օգտագործվել հատուկ նշանակության, դիվանագիտական, հյուպատոսական, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչներին, միջազգային կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցները:

99. 2008թ.-ին ՀՀ-ում ստեղծվել և գործում է Արտակարգ իրավիճակների նախարարություն, որը մշակում, իրականացնում և համակարգում է օրենքով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված քաղաքացիական

պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

100. Ձեկույցն ընդգրկող ժամանակահատվածում ՀՀ տարածքում բնական աղետների հետևանքով արտակարգ իրավիճակ չի հայտարարվել (ծագած աղետների մասշտաբները չեն համապատասխանել ՀՀ-ում արտակարգ իրավիճակ հայտարարելու համար սահմանված չափանիշներին):

Հոդված 5

1. Սույն Դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այն նշանակությամբ, թե որևէ պետություն, խումբ կամ անձ իրավունք ունի զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված լինի սույն Դաշնագրով ճանաչված ցանկացած իրավունքի կամ ազատության վերացմանը կամ սահմանափակմանն ավելի մեծ չափով, քան նախատեսված է սույն Դաշնագրով:

2. Սույն Դաշնագրի մասնակից որևէ պետությունում չի թույլատրվում մարդու՝ օրենքի, կոնվենցիաների, ենթաօրենսդրական ակտերի կամ սովորույթների համաձայն ճանաչվող կամ գոյություն ունեցող որևէ հիմնարար իրավունքի ոչ մի սահմանափակում կամ նվազեցում այն հիմնավորմամբ, թե սույն Դաշնագրում նման իրավունք չի ճանաչվում կամ ճանաչվում է նվազ ծավալով:

101. Սահմանադրության 2-րդ հոդվածն ամրագրում է. «ՀՀ-ում իշխանությունը պատկանում է Ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման ու պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:»

102. Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն ՀՀ միջազգային պայմանագրերը կազմում են ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը և դրանց նորմերը գործում են անմիջապես:

103. Դաշնագրի 5-րդ հոդվածի բովանդակությանը համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասը, ըստ որի «Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:» Ըստ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի. «Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ: Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով»: ՀՀ Սահմանադրության 42.1 մասում ամրագրվում է, որ. «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները

և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

104. ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքով սահմանափակվում են որոշ հոդվածներով ամրագրված իրավունքները և ազատությունները, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածով նախատեսված՝ ՀՀ 18 տարին լրացած քաղաքացիների ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու իրավունքը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասում ամրագրված է հետևյալ դրույթը. «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

Հոդված 6

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի անօտարելի իրավունք: Այդ իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել կյանքից:

2. Այն երկրներում, որոնք չեն վերացրել մահապատիժը, մահվան դատավճիռները կարող են կայացվել միայն ամենածանր հանցագործությունների համար, հանցագործության կատարման պահին գործող օրենքին համապատասխան, որը չի հակասում սույն Ղազնագրի և Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի դրույթներին: Այդ պատիժը կարող է իրականացվել միայն ի կատարումն իրավասու դատարանի կայացրած վերջնական դատավճռի:

3. Այն դեպքում, երբ կյանքից զրկելը ցեղասպանության հանցագործություն է, պետք է նկատի ունենալ, որ սույն Ղազնագրի մասնակից պետություններին սույն հոդվածում ոչ չինչ իրավունք չի տալիս որևէ կերպ շեղվել Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի դրույթների համաձայն ստանձնած ցանկացած պարտավորությունից:

4. Մահապատժի դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի հայցելու ներքում կամ դատավճռի մեղմացում: Համաներումը, ներումը կամ դատավճռի մեղմացումը կարող են շնորհվել բոլոր դեպքերում:

5. Մահապատիժ չի նշանակվում տասնութ տարեկանից ցածր անձանց՝ կատարած հանցագործությունների համար և ի կատար չի ածվում հղի կանանց նկատմամբ:

6. Սույն հոդվածում ոչինչ չի կարող հիմք ծառայել սույն Ղազնագրի մասնակից որևէ պետության կողմից մահապատժի վերացումը հետաձգելու կամ թույլ չտալու համար:

105. Հայաստանը հետևողական քաղաքականություն է տանում ցեղասպանության դեմ պայքարի հարցում և՛ որպես ցեղասպանությունը վերապրած և դրա հետևանքներն իր վրա կրած մի երկիր, և՛ որպես նման հանցագործության կրկնությունը կանխարգելելու ջատագով: Օսմանյան կայսրության կողմից 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայերի հանդեպ իրականացվել է ցեղասպանության քաղաքականություն, որը 1915-1923թթ. իր զագաթնակետին է հասել հայերի համընդհանուր ֆիզիկական ոչնչացմամբ: Այս հանցագործությունը դատապարտվել է աշխարհի շատ երկրների կողմից

(երկրների

ցանկը՝

http://genocide.am/article/recognition_of_the_armenian_genocide.html?armenian):

106. Հայաստանը շարունակում է հետամուտ լինել միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ իր քայլերին՝ նպատակ ունենալով ոչ միայն հաստատել միջազգային իրավունքի գերակայությունն ու արդարությունը, այլև, անպատժելիությունը բացառելով կանխել ապագայում նման հանցագործությունների կրկնությունը:

107. ՀՀ նախաձեռնությամբ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից 1998 թվականին ընդունվեցին «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման մասին կոնվենցիայի 50-ամյակին նվիրված», իսկ 1999 և 2001թթ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման մասին» բանաձևերը: Հայաստանի կողմից առաջարկված բանաձևերը նպատակ ունեին «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման մասին» կոնվենցիային վերաբերող փաստաթղթերի միջոցով նորից համաշխարհային հասարակության ուշադրությունը սևեռել այդ կարևոր փաստաթղթի վրա, նշել նրա կենսունակ նշանակությունը, ընդգծել այդ սուկալի հանցագործության վերացմանն ուղղված՝ պետությունների համատեղ ջանքերի անհրաժեշտությունը, կոչ անել Կոնվենցիային չմիացած կամ այն չվավերացրած պետություններին կատարել այդ քայլը ամենամոտ ժամանակներում:

2008 թվականի մարտի 28-ին արդեն ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 7-րդ նստաշրջանը կոնսենսուսով ընդունեց Հայաստանի ներկայացրած «Ցեղասպանության կանխարգելում» բանաձևը, որի համահեղինակ դարձան 62 երկիր: Բանաձևի ընդունմամբ ցեղասպանության ճանաչման և կանխարգելման խնդիրները բարձրացվեցին նոր մակարդակի վրա՝ սահմանելով պետությունների անմիջական պատասխանատվությունը իր երկրի ժողովրդի առջև: Հատկանշական է, որ վերը նշված բանաձևերի շնորհիվ ներկայումս միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է ցեղասպանության իրավիճակի վաղ ազդարարման խնդիրը, ինչը կարևոր է ցեղասպանությունների կանխարգելման գործում:

108. Դաշնագրի 6-րդ հոդվածի կատարումն ապահովում է ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածը, համաձայն որի «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի»: Այսինքն, մահապատժը, որպես պատժի տեսակ, ՀՀ-ում վերացվել է:

109. 2001 թվականի հունվարի 25-ին ՀՀ-ն ստորագրել և 2003 թվականի սեպտեմբերի 29-ին վավերացրել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի մահապատժի վերացման վերաբերյալ թիվ 6 արձանագրությունը:

110. 2003թ. ապրիլի 18-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով ասվում էր, որ մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը 1961 թվականի մարտի 7-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածով մահապատժի դատապարտված անձանց նկատմամբ նշանակված պատժը դատավճիռը

կայացրած դատարանի կամ դատապարտյալի կողմից պատիժը կրելու վայրի դատարանի կողմից փոխարինվում է ցմահ ազատազրկմամբ: ՀՀ-ում ցմահ ազատազրկման չեն կարող դատապարտվել 18 տարին չլրացած անձինք, ինչպես նաև հանցանք կատարելու կամ դատավճիռ կայացնելու պահին հղի վիճակում գտնվող կանայք:

2003թ. օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած նոր Քրեական օրենսգրքի ընդհանուր մասից հանվել է մահապատիժը՝ որպես բացառիկ պատժատեսակ, ինչն ուղղված էր Սահմանադրությամբ ամրագրված կյանքի իրավունքի պաշտպանությանը:

111. ՀՀ-ում մահապատժի վերացման գործում կարևոր իրավական ներդրում է ունեցել նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2003թ. հուլիսի 15-ի ՄԴՈ-437 որոշումը՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ 1983 թվականի ապրիլի 28-ին Ստրասբուրգում ստորագրված մահապատժի վերացման վերաբերյալ թիվ 6 արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու մասին» գործով:

Սահմանադրական դատարանը, համակարգային վերլուծության ենթարկելով ՀՀ Սահմանադրությունը և ուսումնասիրելով ՀՀ միջազգային պայմանագրերի բովանդակությունը, գտավ, որ հանրապետությունը, որպես կյանքի իրավունքի երաշխավորման գործոն, մերժում է մահապատիժը՝ որպես պատժատեսակ, և որպես նորմ-նպատակ ամրագրում է մահապատժի վերացումը:

112. ՀՀ քրեական օրենսգրքի (Օրենսգիրք) 104-րդ հոդվածը սահմանում է, որ սպանությունը ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելն է, իսկ 393-րդ հոդվածով ցեղասպանությունը դա. «ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման նպատակով՝ այդ խմբի անդամներին սպանելը, նրանց առողջությանը ծանր վնաս պատճառելը, մանկածնությանը խոչընդոտելը, երեխաներին հարկադրաբար մարդկային այդ խմբից այլ խմբի հանձնելը, բռնությամբ վերաբնակեցնելը կամ այդ խմբի լիովին կամ մասամբ ֆիզիկական ոչնչացման նպատակով կյանքի այլ պայմաններ ստեղծելն է», որը պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից տասնհինգ տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

113. Կյանքի իրավունքի հարգման և պահպանման սահմանադրական պահանջն իր արտացոլումն է գտել նաև դատաիրավական բարեփոխումների շրջանակներում իրավապահ և այլ մարմինների գործունեությունը կարգավորող ՀՀ օրենքներում, որոնցում հստակ սահմանվել են այդ մարմինների աշխատակիցների կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու դեպքերն ու պայմանները: Մասնավորապես, «Ոստիկանության մասին», «Ոստիկանության գորքերի մասին», «Ռազմական ոստիկանության մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքներով նախատեսվել է, որ նշված մարմինների աշխատակիցը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու և իրավախախտումը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ տվյալ աշխատակցի կյանքի ու առողջության համար կամ

կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է:

Միաժամանակ, արգելվում է հրազենի գործադրումը հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից քաղաքացիների կյանքի համար վտանգավոր զինված կամ խմբակային հարձակման ու զինված դիմադրության դեպքերի), ինչպես նաև մարդկանց զգալի կուտակումների ժամանակ, երբ հրազենի գործադրումից կարող են տուժել այլ անձինք: Ընդ որում՝ իրավապահ մարմնի աշխատակիցն իրավունք ունի մերկացնել և մարտական վիճակի բերել հրազենը, եթե գտնում է, որ ստեղծված իրադրությունում կարող է օրենքին համապատասխան հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջանալ, իսկ մերկացրած հրազենով ձեռքակալում կատարող աշխատակցին մոտենալու (նրա կողմից պահանջված հեռավորությունը խախտելու միջոցով), առանց թույլտվության անսպասելի կտրուկ շարժում կատարելու, ձեռքերը գրպանները տանելու կամ զենքին ձեռք մեկնելու՝ ձեռքակալվողի ցանկացած փորձ իրավունք է տալիս առանց նախազգուշացման հրազեն գործադրել: Նշված օրենքներով իրավապահ մարմինների աշխատակիցների վրա պարտավորություն է դրված, ելնելով իրավախախտման բնույթից, արարքի և իրավախախտումը թույլ տված անձի՝ հանրության համար վտանգավորության, ինչպես նաև ցուցաբերվող անհնազանդության ու դիմադրության աստիճանից՝ ձգտել, որպեսզի իրավախախտին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի, իսկ մարմնական վնասվածքներ ստացած անձանց, այդ թվում՝ իրավախախտին, ապահովել առաջին բուժօգնությամբ:

114. ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածով սահմանվում է, որ «Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք: ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 17-րդ կետը, սահմանում է, որ ՀՀ Նախագահը «ներում է շնորհում դատապարտյալներին»:

115. ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձի հանձնումը այլ պետություն կարող է մերժվել, եթե հանցանք կատարած անձանց հանձնումը պահանջող երկրի օրենքներով տվյալ հանցագործության համար մահապատիժ է նախատեսված:

116. Իրավական նորմերով, թեկուզ և բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտում պարունակվող, կյանքի իրավունքի ճանաչումը յուրաքանչյուր անձի համար կկրեր զուտ հռչակագրային բնույթ, եթե չլինեին նորմ-երաշխիքները, որոնք կոչված են ապահովելու այդ իրավունքի արդյունավետ պաշտպանությունը: Այդպիսի նորմերի շարքում կարելի է առանձնացնել ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածը, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով»:

117. Սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրությամբ յուրաքանչյուր ֆիզիկական անձի համար ճանաչվել է

օրենքով սահմանված եղանակով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը, ՀՀ-ը արդեն սահմանադրական մակարդակով իր վրա պարտականություն է վերցրել յուրաքանչյուրի համար անվճար կերպով ապահովել հիմնական բժշկական ծառայություններ ստանալու հնարավորությունը:

Սահմանադրական նշված նորմի կենսագործումն ապահովվում է մի շարք օրենսդրական և ենթօրենսդրական իրավական ակտերով: Այդ իրավական ակտերի շարքում կարելի է առանձնացնել 1996թ. մարտի 4-ին ընդունված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը, որի մի շարք հոդվածներ նվիրված են անվճար բժշկական օգնության և սպասարկման իրականացմանը:

Մասնավորապես, Օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ առաջնային բժշկական օգնությունը՝ որպես յուրաքանչյուր մարդու համար անվճար, առավել մատչելի մեթոդների և տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության և սպասարկման տեսակ, երաշխավորվում է պետության կողմից:

4-րդ հոդվածում սահմանում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ անվճար՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:

10-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր երեխա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում իրավունք ունի ստանալ անվճար բժշկական օգնություն և սպասարկում:

11-րդ հոդվածը սահմանում է, որ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ տառապող մարդն իրավունք ունի անվճար ստանալ պետության կողմից երաշխավորված կարգով բժշկական օգնություն և սպասարկում և բուժվել այդ նպատակի համար նախատեսված հատուկ մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում:

14-րդ հոդվածը սահմանում է, որ արտակարգ իրավիճակներում տուժած մարդիկ բժշկական օգնություն և սպասարկում են ստանում անվճար՝ պետության կողմից երաշխավորված կարգով:

118. 2004 թվականի մարտի 4-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշումը, որով մանրամասնորեն կարգավորվել է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և ֆինանսավորման ընթացակարգերը, հաստատվել է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկը, ինչպես նաև կարգավորվել են անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման հետ կապված մի շարք այլ հարաբերություններ:

Հոդված 7

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես, ոչ ոք չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվել բժշկական կամ գիտական փորձերի:

119. ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ «ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»:

120. Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ միացել է խոշտանգումների դեմ պայքարին վերաբերող այնպիսի կարևոր փաստաթղթերի ինչպիսիք են՝ Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (վավերացվել և ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 26-ին) և դրա արձանագրությունները (1-8, 11, 12, 14), «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու մասին» եվրոպական կոնվենցիան (վավերացվել է 2002 թվականի հունիսի 18-ին, ուժի մեջ է մտել նույն թվականի հոկտեմբերի 1-ին) և դրա երկու արձանագրությունները, իսկ 2006 թվականի մայիսի 31-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացրել է ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը (ուժի մեջ է մտել 2006 թվականի հունիսի 22-ին):

121. Ստանձնած պարտավորություններից ելնելով, ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածը որպես քրեական հանցագործություն է որակում խոշտանգումը և համապատասխան պատիժ սահմանում դրա համար: Հիշյալ հոդվածի համաձայն՝ խոշտանգումը, ցանկացած այնպիսի գործողություն է, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք: Հիշյալ գործողությունը պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, իսկ ծանրացուցիչ հանգամանքների դեպքում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

122. Անձնական անձեռնմխելիության իրավունքն իր ամրագրումն է ստացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն. «Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով»:

123. 2006թ. օգոստոսի 3-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին», թիվ 1543-Ն

որոշումը, որն ուժի մեջ է մտել 2006 թվականի դեկտեմբերի 3-ին: Կանոնակարգը սահմանում և կանոնակարգում է կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքների, ազատությունների ու պարտականությունների իրականացման կարգը, կալանավորված անձանց և դատապարտյալների վարքագծի կանոնները, նրանց բուժսպասարկումն ու անձնական հիգիենայի պահպանման պայմանները և կանոնները, կալանավորված անձանց և դատապարտյալների նյութական-կենցաղային ապահովումը, նրանց աշխատանքը, կրթությունը, գրքերից, ամսագրերից ու թերթերից օգտվելը, դատապարտյալների ինքնագործ միավորումների կազմավորման և գործունեության կարգը, կրոնական ծեսերին մասնակցելը, տեսակցությունների տրամադրման կարգը, հանձնույններ, ծանրոցներ, փաթեթներ ընդունելու և հանձնելու, դրամական փոխանցումներ ստանալու և ուղարկելու կարգը, կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ ներկայացնելը, նամակագրությունը, հեռախոսազրույցների, կարճաժամկետ մեկնումների տրամադրման կարգը և այլն: Կանոնակարգի պահանջների կատարումը պարտադիր է կալանավորված անձանց պահելու վայրի և ուղղիչ հիմնարկի վարչակազմի, կալանավորված անձանց և դատապարտյալների, ինչպես նաև կալանավորված անձանց պահելու վայր կամ ուղղիչ հիմնարկ այցելող այլ անձանց համար:

124. ՀՀ Սահմանադրությունը (103 հոդված) բացառիկ լիազորություններ է վերապահել դատախազության մարմիններին հսկողություն իրականացնելու հետաքննության և նախաքննության օրինականության և պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ: 2007թ. մայիսի 1-ից ուժի մեջ է մտել «Դատախազության մասին» ՀՀ օրենքը (Օրենք): Այս օրենքով կարգավորում են հետաքննության և նախաքննության, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության հարցերը:

Սույն Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ պատիժ են համարվում քրեական օրենքով նախատեսված պատժատեսակները (տուգանք, գույքի բռնագրավում, կալանք, ազատազրկում և այլն): Իսկ հարկադրանքի այլ միջոց է համարվում ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով նախատեսված դեպքում ազատությունից զրկումը:

Օրենքի 29-րդ հոդվածը նախատեսում է, որ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազը իրավունք ունի.

- 1) ցանկացած ժամանակ անարգել այցելելու այն բոլոր վայրերը, որտեղ պահվում են ազատությունից զրկված անձինք,
- 2) ծանոթանալու այն փաստաթղթերին, որոնց հիման վրա անձը ենթարկվել է պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների,
- 3) ստուգելու պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող այն հրամանների, կարգադրությունների և որոշումների համապատասխանությունը գործող Օրենսդրությանը, որոնք վերաբերում են պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձի հիմնական

իրավունքներին: Օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ դատախազի կարծիքով հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու միջնորդագիր ներկայացնելու,

4) հարցման ենթարկելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց,

5) անհապաղ ազատելու ազատությունից զրկելու վայրերում, ինչպես նաև այդ վայրերի տուգանային և կարգապահական մեկուսարաններում ապօրինի պահվող անձանց, իսկ եթե անձը ազատությունից զրկվել է ազատությունից զրկելու վայրի վարչակազմի իրավական ակտի հիման վրա, ապա դատախազի կարգադրությամբ ակտը կայացրած անձը պարտավոր է անհապաղ վերացնել իր ակտը,

6) պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների ենթարկված անձանց իրավունքների և ազատությունների խախտման կասկածի դեպքում պաշտոնատար անձանցից պահանջելու բացատրություններ ձեռնարկված գործողությունների կամ անգործության մասին:

125. Քրեակատարողական հիմնարկներում և հարկադրանքի այլ միջոցների կիրառման վայրերում օրենքների պահպանման վրա գործուն հսկողություն կազմակերպելու և իրականացնելու ուղղությամբ լուրջ աշխատանք է իրականացնում ՀՀ գլխավոր դատախազությունը: Դատապարտյալների, կալանավորված անձանց և ձերբակալվածների իրավունքների պաշտպանության, նրանց նյութակենցաղային բժշկական սպասարկման, պատժի կրման կարգի և պայմանների բարելավման, պատժից պայմանական վաղաժամկետ, կամ ծանր հիվանդության պատճառով ազատման, անմեղսունակության վիճակում հանրորեն վտանգավոր արարքներ կատարած անձանց վերաբերյալ և շատ այլ հարցեր մշտապես քննարկվում են ՀՀ դատախազության կոլեգիայի նիստերում և ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ՝ այդ կատեգորիայի անձանց խախտված իրավունքները վերականգնելու և տեղ գտած թերությունները վերացնելու ուղղությամբ:

126. 2005թ. ապրիլի 11-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքը (Օրենք), որով սահմանվում են ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնները:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության աշխատակցի կողմից մարդուն խոշտանգումների, դաժան կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկելը, կամ նրա նկատմամբ բռնություն կիրառելն արգելվում է և առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

127. 2002 թվականին ընդունվել է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը, (Օրենք) որի 2-րդ հոդվածի համաձայն ձերբակալված անձին արգելանքի կամ կալանավորված անձին կալանքի տակ պահելն իրականացվում է օրինականության, ձերբակալված կամ կալանավորված անձանց՝ օրենքի առաջ հավասարության, մարդասիրության, անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու սկզբունքների հիման վրա՝ ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ քրեական օրենսգրքին և քրեական դատավարության

օրենսգրքին, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ արգելվում է ֆիզիկական բռնություն գործադրել, ինչպես նաև անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող գործողություններ կատարել:

Օրենքի 7-րդ գլխի համաձայն ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերի գործունեության նկատմամբ, իրենց իրավասության սահմաններում, հսկողություն ու վերահսկողություն են իրականացնում դատարանները, դատախազությունը, վերադաս մարմինները և հասարակական դիտորդները:

18-րդ հոդվածի համաձայն ձերբակալված կամ կալանավորված անձն իր առաջարկությունները, դիմումները և բողոքները կարող է տալ ամեն օր, ինչպես գրավոր, այնպես էլ՝ բանավոր:

Ձերբակալվածը կամ կալանավորված անձի առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկող մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են քննարկել դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում, իսկ ընդունված որոշումների մասին տեղյակ պահել նրանց:

128. Ձերբակալված անձանց պահման վայրերի, այսուհետ (ՁՊՎ) վարչակազմի որոշումների ու գործողությունների առթիվ ներկայացված առաջարկությունները, դիմումները և բողոքները չեն կասեցնում այդ որոշումների և գործողությունների կատարումը:

Դատախազին, դատավորին, Մարդու իրավունքների պաշտպանին, ՁՊՎ-ների նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները կնքված փաթեթով մեկ օրվա ընթացքում ուղարկվում են հասցեատիրոջը:

Արգելվում է որևէ ձևով հետապնդումը ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ իրենց իրավունքների և օրինական շահերի խախտումների վերաբերյալ առաջարկություններ, դիմումներ, բողոքներ ներկայացնելու դեպքում: Նման հետապնդում իրականացնող անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

ՀՀ կառավարության 2008թ. հունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 574-Ն որոշման 7-րդ գլխի համաձայն՝ ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողները ամենօրյա շրջագայության ընթացքում պարտավոր են ձերբակալվածներից ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր առաջարկություններ, դիմումներ և բողոքներ ընդունել: ՁՊՎ-ի վարչակազմին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները գրանցվում են գրանցամատյանում և զեկուցվում ոստիկանության մարմնի պետին: Վերջինս միջոցներ է ձեռնարկում դրանք լուծելու ուղղությամբ:

Պետական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմիններին և հասարակական միավորումներին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները ուղարկվում են ՁՊՎ-ի վարչակազմի, պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով: Առաջարկությունների, դիմումների և

բողոքների պատասխանները անհապաղ հայտնվում են ձեռքակալվածներին, որը հաստատվում է նրանց ստորագրությամբ և կցվում նրանց անձնական գործին: Դիմումների, բողոքների և առաջարկությունների ժամանակավոր դադարեցում կամ սահմանափակում չի թույլատրվում: (Տես՝ ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան» անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի կատարման վերաբերյալ ՀՀ երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցը):

129. ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հունվարի 14-ի հրամանով հաստատված «ՀՀ ոստիկանության համակարգի ձեռքակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգի» հիման վրա 2006թ. մարտի 10-ին ձևավորվել է ՀՀ ոստիկանության համակարգի ձեռքակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խումբը, որը ներկայումս կազմված է 9 անդամից:

2005 թվականի նոյեմբերի 18-ին ՀՀ արդարադատության նախարարի թիվ ՔՀ-66-Ն հրամանով՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնում է հասարակական դիտորդների խումբը, որը ներկայումս ունի 11 անդամ: Խմբի անդամներն իրավասու են անարգել այցելել քրեակատարողական հիմնարկներ և մարմիններ, ծանոթանալ տարաբնույթ փաստաթղթերի բովանդակությանը, այդ թվում՝ ազատագրկվածի կամ քրեակատարողական մարմինների հսկողության տակ գտնվող անձի համաձայնությամբ՝ նրա անձնական գործին և գրագրությանը, բացի գաղտնի փաստաթղթերից, հիմնարկի իրավիճակին, ինչպես նաև հանդիպել ազատագրկվածներին և քրեակատարողական մարմինների հսկողության տակ գտնվող անձանց:

130. Դաշնագրի 7-րդ հոդվածով սահմանված՝ առանց ազատ արտահայտած համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի չենթարկվելու դրույթն իր արտացոլումն է գտել ՀՀ Սահմանադրության և մի շարք այլ իրավական ակտերում: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածն ուղղակի արգելք է սահմանում մարդուն առանց իր համաձայնության գիտական բժշկական և այլ փորձերի ենթարկելու համար: Այս հանգամանքը չափազանց կարևորվում է այն տեսանկյունից, որ նշված արգելքը, ամրագրված լինելով երկրի Սահմանադրությամբ, որպես բարձագույն իրավաբանական ուժով օժտված նորմ, չի կարող փոփոխվել կամ շրջանցվել որևէ այլ իրավական ակտով, բացի Սահմանադրությունից:

Նման արգելք ամրագրված է նաև 2004 թվականի մայիսի 25-ին ընդունված «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում, որում ամրագրված են հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքները: Մասնավորապես, հոդվածի համաձայն՝ հոգեկան խանգարումներ ունեցող անձինք իրավունք ունեն տալու համաձայնություն և ցանկացած փուլում հրաժարվելու բուժական մեթոդներից և միջոցներից, եթե դրանք կիրառվում են գիտական կամ փորձարարական նպատակներով, ուղեկցվում են լուսա-, տեսա- և կինոնկարահանումներով: ՀՀ քրեական օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն՝ անձին, առանց իր ազատ կամաարտահայտության և իրազեկված ու պատշաճ

ձևակերպված համաձայնության, բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելու համար նախատեսվում է քրեական պատասխանատվություն: Նշված արարքը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա: Նույն արարքի կատարման համար հոդվածի 2-րդ մասով նախատեսված են այդ հանցանքի ծանրացուցիչ հետևյալ հանգամանքները. 1) անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ, 2) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ և 3) անչափահասի նկատմամբ: Նշված դեպքերում նախատեսված է առավել խիստ պատասխանատվություն. ազատազրկում՝ մեկից երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա: Նույն արարքը, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից կամ անգղուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա: (Քրեական օրենսգրքի 127 հոդվածի 3-րդ մաս):

131. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն պատժի կատարումը, ինչպես նաև պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառումը չպետք է զուգակցվեն անձի նկատմամբ ֆիզիկական բռնությամբ, ինչպես նաև այնպիսի գործողություններով, որոնք կարող են հանգեցնել անձի սոցիալ-հոգեբանական զարգացման հետընթացի: Դատավճռի հիման վրա ազատությունից զրկված ոչ մի անձ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ոչ մի հանգամանք չի կարող հիմք ծառայել խոշտանգումները կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժն արդարացնելու համար:

132. ՀՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածը սահմանում է, որ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու համար պատասխանատվություն է կրում անօրինական հրաման կամ կարգադրություն արձակած անձը, իսկ ակնհայտ անօրինական հրամանով կամ կարգադրությամբ դիտավորյալ հանցանք կատարած անձը պատասխանատվություն է կրում ընդհանուր հիմունքներով:

Բացի հիշատակվածից, քրեական հանցագործություն են համարվում նաև պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական լիազորությունների չարաշահումը և պաշտոնեական լիազորություններն անցնելը, որոնք ամրագրվել են ՀՀ քրեական օրենսգրքի 307-րդ և 308-րդ հոդվածներում:

133. Նկատի ունենալով այն, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) հաստատությունը համապատասխանում է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի» կամընտիր արձանագրությամբ

սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմի հիմնական չափանիշներին և կարող է ստանձնել նրա գործառույթները ՀՀ-ում՝ 2007թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ Կառավարության կողմից հավանության է արժանացել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով Պաշտպանը ճանաչվել է Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ: Նախագիծն, այնուհետև, ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով և ընդունվել 2008թ. ապրիլի 8-ին: Օրենքում ավելացված նոր՝ 6.1 հոդվածով սահմանվել է, որ Պաշտպանը հանդիսանում է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի» կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմ: Պաշտպանին հասցեագրված խոշտանգումներին վերաբերող դիմում-բողոքների վերլուծությունն ու բովանդակությունն արտացոլված է նրա՝ 2004-2008թթ. տարեկան զեկույցներում (տես Պաշտպանի պաշտոնական կայքէջը՝ www.ombuds.am):

134. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ գլուխն ամբողջությամբ կարգավորում է միջազգային պայմանագրերին համապատասխան քրեական գործերով իրավական օգնության տրամադրման, հանցագործություն կատարած անձանց օտարերկրյա պետությանը հանձնելու կարգն ու պայմանները, ինչպես նաև սահմանում է հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշում ընդունելու իրավասություն ունեցող մարմինները: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինն ընդունված որոշման մասին տեղեկացնում է այն անձին, որի նկատմամբ կայացվել է որոշումը և բացատրում այն բողոքարկելու նրա իրավունքը: Հիշյալ դրույթը թույլ է տալիս ևս մեկ անգամ ճշտել տվյալ անձի նկատմամբ այդ երկրում հնարավոր խոշտանգումների կամ նվաստացուցիչ վերաբերմունքի ենթարկվելու հիմքերի առկայությունը: Հանցանք կատարած անձանց հանձնելու վերաբերյալ հոդվածներում ամրագրված դրույթներն ամբողջացվել են Քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածում:

135. ՀՀ քրեակատարողական ծառայության աշխատակիցների համար պարբերաբար կազմակերպվող և անցկացվող վերապատրաստման դասընթացների ծրագրերում ներառվում են բանտարկյալների հետ վարվեցողության մեջ խոշտանգումների, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը բացատրելու վերաբերյալ ուսումնական նյութեր:

Մարդու իրավունքների, ներառյալ՝ խոշտանգումների, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը բացատրելու հիմնախնդիրները ներառվել են ոստիկանական համակարգում կազմակերպվող ծառայողական և մարտական պատրաստվածության դասընթացների թեմատիկ պլաններում: Համապատասխան ուսումնական դասընթացներ են անցկացվում նաև ՀՀ ոստիկանության ակադեմիայում և ուսումնական կենտրոնում: Մարդու իրավունքների հետ կապված հիմնախնդիրները ՀՀ ոստիկանության ակադեմիայում ուսումնասիրվում են «Մարդու իրավունքները և ոստիկանությունը», «Միջազգային մարդասիրական իրավունք» և

«Սահմանադրական իրավունք» առարկաների շրջանակներում: ՀՀ ոստիկանության ուսումնական կենտրոնում ԵԱՀԿ հովանավորությամբ բացվել է հատուկ լսարան՝ մարդու իրավունքների դասընթացների անցկացման համար:

Մարդու իրավունքների և խոշտանգումների արգելմանը վերաբերող թեմաները ներառված են նաև ՀՀ առողջապահության նախարարության Ս.Խ.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի կրթական ծրագրերում, որոնք անցկացվում են բժիշկների և պրովիզորների հետդիպլոմային մասնագիտական կատարելագործման և լրացուցիչ մասնագիտացման նպատակով: 2005թ. սեպտեմբերի 1-ից անցկացվում են կենսաբարյալագիտության դասընթացներ ասպիրանտների, կլինիկական օրդինատորների և երիտասարդ գիտնականների դպրոցի սաների համար: Նաև նման դասընթացներ են անցկացվում բժիշկների և բուժքույրերի համար՝ շարունակական մասնագիտական զարգացման ուսումնական ծրագրերի շրջանակներում:

Նշված ինստիտուտում մշակվել և դասավանդվում է «Առողջապահական իրավունք» դասընթացը, որի հիմնական նպատակն է վերապատրաստող բուժանձնակազմին ուսուցանել ճիշտ կողմնորոշվելու բժշկական օգնության և սպասարկման և մարդու առողջության հետ կապված իրավահարաբերություններում, գտնվելու թույլատրելի և անթույլատրելի սահմանները, ընտրելու իրենց գործունեության իրականացման, իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման օրինական ճանապարհները, ծանոթանալ իրենց իրավունքների պաշտպանության մեխանիզմներին, այս ոլորտում առկա պատասխանատվությանը: Ծրագրի ներդրումը հնարավորություն կստեղծի բարձրացնել հանրապետության տարածքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող մասնագետների գիտելիքները, այդ թվում նաև խոշտանգման, դաժան, անմարդկային կամ նվաստեցնող վերաբերմունքին առնչվող հարցերով: Նշվածը կնպաստի ոլորտի հետագա զարգացմանը և նախադրյալներ կստեղծի «առողջապահության իրավունք»-ի, որպես իրավունքի առանձին ճյուղի զարգացման և ներդրման համար:

2007 թվականին հրատարակվել է «Բժշկական բարոյագիտության, բժշկական կրթության և բժշկագիտության արդի տեսակետները» մեթոդական ձեռնարկը, որում ներառված են մարդու իրավունքների հիմնախնդիրների ուսումնասիրությունը:

136. ՀՀ-ում «Փախստականների մասին» օրենքը ընդունվել է 1999թ.-ին: 2008թ.-ի նոյեմբերի 27-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ նոր օրենքը: Օրենքը համապատասխանեցված է Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի և միջազգային այլ փաստաթղթերի պահանջներին:

Ապաստան հայցող անձը մինչև իր ներկայացրած՝ ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը չի կարող արտաքսվել ՀՀ տարածքից:

Օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ հիմնավոր

պատճառներով վտանգ կա, որ նա կենթարկվի դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ խոշտանգումների:

Փախստական ճանաչված անձինք օգտվում են ՀՀ պաշտպանությունից և գտնվում են նրա հովանավորության ներքո:

Ապաստան հայցողները և փախստականները ունեն ՀՀ-ում օրինական հիմքերով բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ հավասար իրավունքներ և պարտականություններ:

Հոդված 8

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ. ստրկությունը և ստրկավաճառությունն արգելվում են բոլոր դրսևորումներով:

2. Ոչ ոք չպետք է պահվի անազատ վիճակում:

3. ա) Մարդուն չի կարելի պարտադրել կատարելու ստիպողական կամ հարկադիր աշխատանք.

բ) այն երկրներում, ուր հանցագործության համար որպես պատիժ կարող է նշանակվել ազատազրկում՝ զուգակցված տաժանակիր աշխատանքի հետ, 3-րդ կետի (ա) ենթակետը խոչընդոտ չի հանդիսանում իրավասու դատարանի կողմից նման պատիժ սահմանող դատավճռի հիման վրա տաժանակիր աշխատանքի իրականացմանը,

գ) սույն կետի նպատակի համար «ստիպողական կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում.

(i) (բ) ենթակետում չհիշատակված ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը, որպես կանոն, պետք է կատարի դատարանի օրինական կարգադրության հիման վրա կալանքի տակ գտնվող անձը կամ այդպիսի կալանքից պայմանական ազատված անձը,

(ii) ռազմական բնույթի ցանկացած ծառայություն և այն երկրներում, որտեղ ճանաչվում է զինվորական ծառայությունից քաղաքական ու կրոնական շարժառիթներով հրաժարումը, զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար օրենքով նախատեսված ցանկացած ծառայություն,

(iii) ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում,

(iv) ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը սովորական քաղաքացիական պարտականությունների մաս է կազմում:

137. Դաշնագրի 8-րդ հոդվածով սահմանված ստրկության ենթարկելու կամ ստրկական վիճակում պահելու արգելքի մասին դրույթներն իրենց արտացոլումն են գտել ՀՀ Սահմանադրության 3-րդ (մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեք են), 14-րդ (մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից) և 16-րդ (յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք, մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով, մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները) հոդվածներում:

138. Մարդու աշխատանքի ազատ ընտրության իրավունքը և հարկադիր աշխատանքի արգելման դրույթը սահմանված է Սահմանադրության 32-րդ հոդվածում, որին համապատասխան ՀՀ քրեական և վարչական

իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերից հանվել է հարկադիր աշխատանքը որպես քրեական կամ վարչական պատասխանատվության տեսակ:

Մարդու աշխատանքի ազատ ընտրության իրավունքն իրացվել է 2004 թվականի նոյեմբերին ընդունված ՀՀ աշխատանքային օրենսգրքում, որում հռչակված աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքները (հոդված 3) ներառում են աշխատանքի ազատությունը, ներառյալ՝ աշխատանքի իրավունքը (որը յուրաքանչյուրն ազատորեն ընտրում է կամ որին ազատորեն համաձայնում է), աշխատանքային ունակությունները տնօրինելու, մասնագիտության և գործունեության տեսակի ընտրության իրավունքը, ցանկացած ձևի (բնույթի) հարկադիր աշխատանքի և աշխատողների նկատմամբ բռնությունների արգելումը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից ու ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցություններին, արհեստակցական միություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից:

Հաշվի առնելով Դաշնագրի պահանջը, համաձայն որի «ստիպողական կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում դատարանի օրինական կարգադրության հիման վրա կալանքի տակ գտնվող կամ այդպիսի կալանքից պայմանական ազատված անձի նկատմամբ ստիպողական կամ հարկադիր աշխատանքի կիրառումը, ինչպես նաև ռազմական բնույթի ծառայությանը փոխարինող այլընտրանքային ծառայությունը կամ արտակարգ դրության կամ աղետի ժամանակ բնակչության կյանքին սպառնացող վտանգի դեպքում իրականացվող աշխատանքը կամ ծառայությունը, ՀՀ քրեական օրենսգրքով (49-րդ և 54-րդ հոդվածներ) նախատեսվել է հանրային աշխատանքները որպես պատժի տեսակ, որը դատարանի կողմից նշանակված, իրավասու մարմնի կողմից որոշված վայրում չվարձատրվող, դատապարտյալի կողմից հանրության համար Օգտակար աշխատանքների կատարումն է: Հանրային աշխատանքները կարող են նշանակվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած, առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ: Հանրային աշխատանքները նշանակվում են երկու հարյուր յոթանասունից երկու հազար երկու հարյուր ժամ ժամկետով՝ որպես որոշակի ժամկետով ազատազրկմանն այլընտրանքային պատժատեսակ՝ ուժի մեջ մտած դատավճիռն ի կատար ածելու կարգադրությունը ստանալուց հետո՝ քսանօրյա ժամկետում՝ դատապարտյալի գրավոր դիմում ներկայացնելու դեպքում, ինչպես նաև Օրենսգրքով սահմանված տուգանքի դատապարտված և այն վճարելու հնարավորություն չունեցող անձի նկատմամբ՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց: Ընդ որում, հանրային աշխատանքները չեն կարող նշանակվել առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված, դատավճիռ կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած, կենսաթոշակային տարիք ունեցող անձանց, հղի կանանց և ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների նկատմամբ:

139. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպումը՝ որպես միջազգայնորեն բնորոշված ժամանակակից ստրկության տեսակներից մեկը, պայմանավորված մարդկանց անօրինական տեղափոխմամբ և հարկադրական շահագործմամբ, ՀՀ-ում սկսվել է 2002 թվականի հոկտեմբերից, երբ ՀՀ վարչապետի որոշմամբ՝ ՀՀ-ից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման ու առուվաճառքի (թրաֆիքինգ) հետ կապված հարցերն ուսումնասիրելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով: Այն գործում էր ՀՀ արտաքին գործերի նախարարության ղեկավարությամբ և ընդգրկում բոլոր շահագրգիռ նախարարությունների ու գերատեսչությունների ներկայացուցիչներին, ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության աշխատակազմերի փորձագետներին, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ վարչապետի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի N 861-Ս որոշմամբ ստեղծվել է ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհուրդ՝ ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի նախագահությամբ, և ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ վարչապետի 2002 թվականի հոկտեմբերի 14-ի «Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» N 591-Ս որոշումը: Խորհրդի անդամներ են բոլոր շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարները: Խորհրդի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծվել է նաև աշխատանքային խումբ:

140. ՀՀ կառավարության 2004 թվականի հունվարի 15-ի N58-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատեց ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի կողմից մշակված՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման հայեցակարգը և ազգային ծրագիրը՝ 2004-2006 թվականների համար: Ազգային ծրագիրն ընդգրկում էր գործունեության այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով օրենսդրական դաշտի կատարելագործումը, հանրապետությունում և դրանից դուրս մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) տարածման աստիճանի ուսումնասիրումը, կանխարգելիչ միջոցառումների իրականացումը, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) գոհերին աջակցելու և նրանց պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացումը: Նշված ուղղությամբ տարվող աշխատանքները կրում են շարունակական բնույթ, ինչի վկայությունն էր 2007-2009թթ. համար մշակված 2-րդ ազգային ծրագիրը: Վերջինս, ի լրումն վերոնշյալի, կենտրոնանում է նաև այս ուղղությամբ բնակչության իրազեկման բարձրացման, միջազգային համագործակցության ծավալման և մոնիթորինգի ու գնահատման խնդիրների վրա;

Անցած ժամանակահատվածում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի նպատակով օրենսդրական դաշտի կատարելագործման աշխատանքները ծավալվել են երկու հիմնական ուղղությամբ՝ ներպետական՝ ՀՀ քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելով, և միջազգային պայմանագրերին միանալու եղանակով: Վավերացվել են ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան և դրան կից 2

կամընտիր արձանագրությունները՝ «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» ու «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական փոխադրումների դեմ», վավերացվել է նաև ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը: Եվրախորհրդի 2005 թվականի մայիսի 16-ի «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի միջոցառումների մասին» կոնվենցիան ՀՀ վավերացրել է 2008թ. մարտին: 2003 թվականի օգոստոսի 1-ին ՀՀ քրեական օրենսգրքում մտցվել է նոր՝ 132-րդ՝ «Մարդկանց առևտուր» հոդվածը: Ներպետական օրենսդրական դաշտում՝ 2006 թվականի հունիսից վերախմբագրվել է ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածը՝ նոր տարբերակով, որով առավել հստակ և ամբողջական է սահմանվում թրաֆիքինգի հանցատեսակը, «մարդկանց առևտուր» բառերը փոխարինվել են «շահագործում» բառով: Ավելացել է նաև նոր՝ 132.1-րդ հոդվածը, որը սահմանում է առավել խիստ պատժամիջոցներ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կազմակերպիչների նկատմամբ: 2009թ.-ին ՀՀ ազգային ժողով է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ, որով առավել են խստացվում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կազմակերպիչների նկատմամբ պատժաչափերը:

Աշխատանքային շահագործման դեմ պայքարի համատեքստում հարկ է նշել ՀՀ աշխատանքային օրենսգրքում ներառված այն հոդվածները, որոնք արգելում են հարկադիր աշխատանքը, բռնությունն աշխատողի նկատմամբ, մինչև 14 տարեկան երեխային աշխատանքային գործունեության մեջ ներգրավելը, ինչպես նաև այն հոդվածները, որոնք ապահովում են գործատուի գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունը:

2008 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Մարդկանց շահագործման (թրաֆիկինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելու մասին» N1385-Ա որոշումը: Ներկայումս աշխատանքներ են տարվում 2010-2013թթ.ազգային ծրագրի մշակման ուղղությամբ:

ՀՀ կառավարությանն առնթրել ՀՀ ոստիկանությունում ստեղծվել է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հատուկ ստորաբաժանում:

141. 2003 թվականի դեկտեմբերին ընդունված «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող (հոդված 2) այլընտրանքային աշխատանքային ծառայություն, որը սահմանում է կրոնական դավանանքի կամ համոզմունքների պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարվող քաղաքացիների աշխատանքն առողջապահական և նման տեսակի կազմակերպություններում: Նշված օրենքի 19-րդ հոդվածի համաձայն, այլընտրանքային աշխատանքային ծառայողի համար սահմանվում է վեցօրյա աշխատանքային շաբաթ և նրա աշխատաժամանակի տևողությունը չի կարող օրական 8 ժամից ավելի կամ պակաս լինել, բացառությամբ արտաժամյա ծառայության ներգրավման դեպքերի, որոնք կարող են իրականացվել ծառայության վայրում տարերային կամ տեխնաժին աղետի, հրդեհի, վթարի կանխման կամ դրանց հետևանքների վերացման, ինչպես նաև այնպիսի ծառայողական առաջադրանքների կատարման համար, որոնք, իրենց

առանձնահատկություններով պայմանավորված, չեն կարող կասեցվել կամ դադարեցվել:

Ինչ վերաբերում է արտակարգ դրության կամ աղետների ժամանակ աշխատունակ քաղաքացիների ներգրավմամբ իրականացվող աշխատանքների կանոնակարգմանը, ապա «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» (հոդված 11) և «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» (հոդված 5) ՀՀ օրենքներով սահմանված արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հիմնական միջոցառումներից մեկն էլ հանդիսանում է բնակչության պաշտպանության ապահովման աշխատանքների կատարման նպատակով աշխատունակ քաղաքացիների (նրանց համաձայնությամբ) ներգրավումն արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անհատական հատկանիշների:

Հոդված 9

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման կամ կալանավորման: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով:

2. Յուրաքանչյուր անձի ձերբակալման ժամանակ նրան հայտնում են ձերբակալման պատճառները և շտապ կարգով հաղորդում նրան ներկայացվող ամեն մի մեղադրանք:

3. Քրեական մեղադրանքով ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձ շտապ կարգով հասցվում է դատավորի կամ օրենքով՝ դատական իշխանություն իրականացնելու համար լիազորված պաշտոնատար անձի մոտ և ունի ողջամիտ ժամկետում դատական քննության կամ ազատ արձակվելու իրավունք: Դատական քննության սպասող անձին կալանքի տակ պահելն ընդհանուր կանոն չպետք է լինի, բայց ազատ արձակվելը կարող է կախման մեջ դրվել դատարան ներկայանալու, ցանկացած փուլում դատական քննության և, անհրաժեշտության դեպքում, դատավճիռն ի կատար ածելու համար ներկայանալու երաշխիքներ տալուց:

4. Ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու հետևանքով իր ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի դատարանում իր գործի քննության իրավունք, որպեսզի դատարանն անհապաղ կարողանա որոշել կալանավորման օրինականությունը և կարգադրել նրան ազատ արձակելու, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով եղել է անօրինական ձերբակալման կամ կալանավորման գոհ, իրավունք ունի հայցային ուժ ունեցող փոխհատուցման:

142. 2005թ.-ի նոյեմբերի 27-ին ՀՀ Սահմանադրությունում կատարված փոփոխությունները կարող են գնահատվել որպես առաջադիմական քայլ մարդու անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի ապահովման լրացուցիչ երաշխիքների սահմանադրական ամրագրման համատեքստում: Նախկինում Սահմանադրության 18-րդ հոդվածն անուղղակիորեն անդրադառնում էր վերոնշյալ իրավունքին, սակայն ոչ միայն սպառիչ չէր ներկայացնում անձին ազատությունից զրկելու օրինական դեպքերը, այլև օրենքի կարգավորման ոլորտից հանում էր ազատության սահմանափակման այն բոլոր ձևերը, որոնք չէին մտնում ձերբակալման, խուզարկության կամ կալանավորման հասկացության տակ: Փոփոխված Սահմանադրության 16-րդ հոդվածը սահմանադրական նորմի մակարդակի բարձրացնելով 1999թ.-ից ուժի մեջ մտած քրեադատավարական

նորմի երաշխիքները՝ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը հռչակեց Բարձրագույն և Բացարձակ իրավական արժեք:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝

1) անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից.

2) անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը.

3) օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով.

4) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով.

5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու այլ մարմին ներկայացնելու նպատակով.

6) վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, գինեմոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վտանգը կանխելու նպատակով.

7) ՀՀ անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով»:

143. Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին: Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից ապօրինի զրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով պատճառված վնասի հատուցման: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր ազատությունից զրկման կամ խուզարկության օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու վերադաս դատական ատյանում: Մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:

Մարդուն չի կարելի խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

144. Սահմանադրության 19-րդ հոդվածով սահմանվում է անձի՝ խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավաճարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և

անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը:

1998թ. ընդունված և 1999թ. ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 3-րդ կետը ենթարկվել է փոփոխության, որը նույնպես երաշխիք է մարդու անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի ապահովման գործընթացում: Ի ապահովումն ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի պահանջների, անձի ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահվելը 96 ժամից կրճատվել և դարձել է 72 ժամ: Համաձայն ՀՀ քր. դատ. 11-րդ հոդվածի 3-րդ կետի, մինչև դատարանի համապատասխան որոշումն ստանալն, անձը չի կարող ձերբակալման հետևանքով անազատության մեջ պահվել 72 ժամից ավելի:

145. Դաշնագրի 9-րդ հոդվածի պահանջների կիրառման ապահովման խնդրում մեծ դեր է ունեցել 2004թ. ընդունված ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 3-րդ հոդվածը ամրագրում է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի կիրառումը ձերբակալվածների և կալանավորվածների նկատմամբ:

Ձերբակալվածներին պահելու վայրերում անձին պահելու հիմքը քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան կազմված ձերբակալման արձանագրությունը կամ ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումն է: Կալանավորվածներին պահելու վայրերում անձին պահելու հիմքը քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան կայացված դատարանի որոշումն է՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին: Առանց վերը նշված հիմքերի ձերբակալվածներին պահելու վայրերում (ՁՊՎ) կամ կալանավորվածներին պահելու վայրերում անձին ընդունելն ու պահելն արգելվում է:

ՀՀ կառավարության 05.06.2008թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 574-Ն որոշման 2-րդ գլխի 11-րդ կետի համաձայն՝ ձերբակալվածները ՁՊՎ ընդունվում են շուրջօրյա: Ոստիկանության մարմնի հերթապահը ստուգում է ձերբակալվածներին ընդունելու և պահելու հիմքերը, ձերբակալվածներին ուղղված հարցերի միջոցով պարզում է ձերբակալման արձանագրության կամ որոշման մեջ նշված անձնագրային տվյալների իսկությունը, այնուհետև համապատասխան գրանցում է կատարվում ձերբակալվածների հաշվառման գրանցամատյանում և անհատական քարտում:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ձերբակալված անձ ՁՊՎ-ներում իրավունք ունի այդ մասին կապի հնարավոր միջոցով անհապաղ տեղեկացնելու իր ընտրած անձին:

ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է ձերբակալված անձի՝ ՁՊՎ ընդունելու կամ մեկ հիմնարկից մյուսը տեղափոխելու մասին անհապաղ տեղյակ պահել

ձերբակալված անձի ընտրած անձին, եթե հնարավոր չի եղել ձերբակալված անձի կողմից սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքից օգտվելը:

146. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը (Օրենսգիրք) որպես սկզբունք ամրագրում է անձի իրավունքների, ազատությունների և արժանապատվության հարգումը, անձի անձեռնմխելիությունը, իրավաբանական օգնության իրավունքի ապահովումը, կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը, դրա ապահովումը և այլն:

Օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն Օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: Կալանավորելը, կալանքի տակ պահելը, բժշկական կամ դաստիարակչական հաստատությունում անձին հարկադրաբար տեղավորելը թույլատրվում է միայն դատարանի որոշմամբ: Յուրաքանչյուր ձերբակալվածի և կալանավորվածի անհապաղ հաղորդվում են ձերբակալության կամ կալանավորման հիմքերը, ինչպես նաև այն հանցագործության փաստական հանգամանքները և իրավաբանական որակումը, որի կատարման մեջ նա կասկածվում կամ մեղադրվում է:

Դատարանը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը պարտավոր են անհապաղ ազատ արձակել անազատության մեջ ապօրինի պահվող յուրաքանչյուր անձի:

Կալանքի տակ պահելու վայրի վարչակազմի ղեկավարն իրավունք չունի կալանքը կրելու համար անձին ընդունել առանց համապատասխան դատական որոշման և պարտավոր է անհապաղ ազատ արձակել կալանքի տակ պահելու ժամկետը լրացած յուրաքանչյուր անձի:

Օրենսգրքի 17-րդ գլխով տրվում է ձերբակալման հասկացությունը, կարգն ու պայմանները: Այսպես, 128-րդ հոդվածում նշվում է, որ ձերբակալել կարելի է միայն անձին, որը կասկածվում է այնպիսի հանցագործության մեջ, որի կատարման համար կարող է նշանակվել պատիժ՝ կարգապահական գումարտակում պահելու, կալանքի, որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով և կիրառված խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալին: Ձերբակալումը կատարվում է հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա կամ քրեական հետապնդման մարմնի որոշման հիման վրա:

Օրենսգրքի 131.1 հոդվածով նշվում է, որ հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին: Ձերբակալման մասին արձանագրությունում նշում է արվում կասկածյալի պաշտպանության, ինչպես նաև Օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելու մասին: Հիշյալ հոդվածի համաձայն՝ կասկածյալն իրավունք ունի իմանալ՝ ինչու է կասկածվում, տեղեկացվել կասկածանքի բովանդակությանը, ձերբակալվելուց հետո հետաքննության մարմնից, քննիչից կամ դատախազից անմիջապես ստանալ

իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում, ձեռքակալվելուց կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումն իրեն հայտարարվելուց հետո, քրեական հետապնդման մարմնից անմիջապես անվճար ստանալ ձեռքակալվելու կամ խափանման միջոց ընտրելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշման պատճենը, իսկ ձեռքակալման արձանագրություն կազմվելուց հետո՝ դրա պատճենը, ձեռքակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձեռքակալման արձանագրությունը, կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումն իրեն հայտարարելու պահից ունենալ պաշտպան կամ հրաժարվել պաշտպանից և պաշտպանվել ինքնուրույն, բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները:

Օրենսգրքի 18-րդ գլխում (135-րդ հոդված) նշվում են խափանման միջոցներ կիրառելու հիմքերը: Ըստ 135-րդ հոդվածի 2-րդ մասի՝ կալանավորումը և դրա այլընտրանքային խափանման միջոցը (գրավը) մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցագործության համար, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել 135-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները (այն է՝ թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, խուսափել քրեական պատասխանատվությունից, և այլն):

Օրենսգրքի 136-րդ հոդվածում նշվում է, որ կալանավորումը կարող է կիրառվել միայն դատարանի որոշմամբ: 138-րդ հոդվածում խոսելով կալանքի տակ պահելու ժամկետի մասին, նշվում է, որ քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող լինել 2 ամսից ավելի: Նույն հոդվածի 5-րդ մասում նշվում է, որ քրեական գործով մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող գերազանցել 1 տարին, կամ մեղադրյալին վերագրվող հանցագործության համար քրեական օրենսգրքով ազատազրկման նախատեսված առավելագույն ժամկետը՝ այն դեպքում, երբ նշված ժամկետը պակաս է 1 տարուց:

Օրենսգրքի 65-րդ հոդվածը սահմանում է մեղադրյալի իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում և պաշտպանության իրավունքը: Քրեական վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալին հնարավորություն է ընձեռում օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնել պաշտպանության իր իրավունքը: Մեղադրյալն իրավունք ունի՝

1) իմանալ ինչում է մեղադրվում, որի համար մեղադրանք առաջադրվելուց, արգելանքի վերցվելուց կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը հայտարարվելուց հետո քրեական հետապնդման մարմնից անմիջապես անվճար ստանալ որպես մեղադրյալ ներգրավման մասին որոշման պատճենը:

2) արգելանքի վերցվելուց հետո հետաքննության մարմնից, քննիչից կամ դատախազից անմիջապես անվճար ստանալ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում:

3) մեղադրանք առաջադրելու պահից ունենալ պաշտպան, հրաժարվել պաշտպանից և պաշտպանվել ինքնուրույն և այլն:

Բացի դա, ՀՀ քրեական օրենսգիրքը որպես հանցանք է սահմանում ապօրինի ձեռքակալելը կամ կալանավորելը (348-րդ հոդված):

147. Սահմանադրության 19-րդ հոդվածով յուրաքնչյուր ոք ունի իր խախտված իրավունքների վերականգնման իրավունք:

Այս նորմն իր արտահայտումն է գտել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածում, որում նշվում է, որ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

148. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմում-բողոքների շարքում զգալի թիվ են կազմում անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի ոտնահարմանը վերաբերող բողոքները: Ընդ որում, վիճակագրությունը ցույց է տալիս, որ նախորդ տարիների համեմատ արձանագրվել է խնդրո առարկա բողոքների աճ, ինչը վկայում է քաղաքացիների կողմից իրենց իրավունքների իրազեկվածության աճի և դրանց պաշտպանության ուղղությամբ առավել ակտիվ կեցվածք ընդունելու մասին:

Հոդված 10

1. Ազատությունից զրկված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության հարգման իրավունք:

2. ա) Այն դեպքերում, երբ չկան բացառիկ հանգամանքներ, մեղադրյալները տեղավորվում են դատապարտյալներից առանձին, և նրանց առանձին ռեժիմը համապատասխանում է շրջապատված անձի կարգավիճակին,

բ) անչափահաս մեղադրյալներն առանձնացվում են չափահասներից և հնարավորինս կարճ ժամկետում հասցվում դատարան՝ որոշում կայացնելու համար:

3. Պատժի համակարգով բանտարկյալների համար նախատեսվում է այնպիսի ռեժիմ, որի էական նպատակը նրանց բարեփոխումն է և սոցիալական վերականգնումը: Անչափահաս օրինախախտներն առանձնացվում են չափահասներից, և նրանց ռեժիմը համապատասխանում է իրենց տարիքին ու իրավական կարգավիճակին:

149. Անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը պարտադիր է քրեական դատավարությանը մասնակցող բոլոր մարմինների և անձանց համար: Դատարանը թույլատրում է անձանց իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակում: Նրանց նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառվում են միայն այն դեպքում, երբ այդպիսի որոշման անհրաժեշտությունը հիմնավորված է պատշաճ իրավական ընթացակարգով: Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պահվի ստորացուցիչ պայմաններում: Անձին չի կարելի հարկադրել մասնակցելու իր արժանապատվությունը նվաստացնող դատավարական գործողությունների:

150. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ կալանավորումը օրենքով նախատեսված տեղերում և պայմաններում անձին կալանքի տակ պահելն է:

151. ՀՀ քրեակատարողական ծառայության մասին օրենքի (ընդունվել է 2005թ. հուլիսի 8-ին) 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ

քրեակատարողական հիմնարկներն են ուղղիչ հիմնարկները և կալանավորվածներին պահելու վայրերը:

152. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը և 2003թ. օգոստոսի 3-ի ՀՀ կառավարության 1543-Ն որոշումը հաստատում և սահմանում են ձերբակալվածներին ու կալանավորվածներին պահելու կարգն ու պայմանները:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով ասվում է, որ ձերբակալվածներին պահելու վայրերն ու կալանավորվածներին պահելու վայրերը գործում են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինների կառուցվածքներում և ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Վերոհիշյալ օրենքի 13-րդ հոդվածով, ի թիվս այլոց, սահմանվում է նաև ձերբակալվածի կամ կալանավորվածի՝ իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, դատարանին, դատախազությանը, մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին և կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին դիմելու իրավունքը: Իսկ Օրենքի 18-րդ հոդվածով սահմանվում է դիմումների և բողոքների քննարկման կարգը:

Օրենքի 27-րդ հոդվածով կարգավորվում են կանանց և անչափահասներին արգելանքի կամ կալանքի տակ պահելու առանձնահատկությունները, որի 1-ին մասով նշվում է, որ ձերբակալված կամ կալանավորված կանանց և անչափահասների համար ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում ստեղծվում են բարելավված նյութակենցաղային պայմաններ:

153. ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով, տալով պատժի հասկացությունը և նպատակները, սահմանում է, որ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները:

154. Դաշնագրի 10-րդ հոդվածի դրույթների ամբողջական իրականացումն ապահովելու համար մեծ նշանակություն է ունեցել 2004 թվականի դեկտեմբերի 24-ին ՀՀ «Քրեակատարողական օրենսգրքի» ընդունումը: Դրա խնդիրներն են՝ սահմանել քրեական պատիժներ կատարելու և պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու և կրելու կարգն ու պայմանները, ապահովել դատապարտյալի ուղղման համար անհրաժեշտ պայմաններ, պաշտպանել նրա իրավունքները և ազատությունները: Նշված խնդիրներն իրականացնելու համար Օրենսգիրքն ամրագրում է պատժի կատարման հիմքը, քրեակատարողական Օրենսդրության սկզբունքները,

դատապարտյալի իրավական վիճակը, նրա իրավունքները և ազատություններն ապահովելու երաշխիքները, պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու, առանձին պատժատեսակներ կատարելու, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջան նշանակելու և փորձաշրջանի ընթացքում վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև պատժից ազատելու կարգը:

Դատապարտյալի իրավունքների շարքում օրենսգրքում հստակ ամրագրված է առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ, բժշկական օգնություն ստանալու իրավունքը: Միաժամանակ, տարբեր հոդվածներում հստակ ընդգծված են դատապարտյալի՝ վերը նշված իրավունքի իրականացման երաշխիքները:

Օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալի ուղղման հիմնական միջոցներն են պատիժները կատարելու և կրելու սահմանված կարգն ու պայմանները, դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները, դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը: Ուղղման միջոցների առանձին տեսակներ անչափահասների համար կրում են պարտադիր բնույթ:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 100-րդ հոդվածով սահմանվում է պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելու կարգն ու այն որոշելու համար հաշվի առնվող առանձնահատկությունները:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրվում է, որ ուղղիչ հիմնարկում անչափահասներն անջատ են պահվում չափահասներից, իսկ 109-րդ հոդվածը՝ նշելով անչափահաս դատապարտյալների պատիժը կրելու առանձնահատկությունները՝ սահմանում է, որ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անչափահասը մինչև պատժի ժամկետը լրանալը պատիժը կրում է միևնույն ուղղիչ հիմնարկում, բայց ոչ ավելի, քան նրա քսանմեկ տարեկան դառնալը: Արգելվում է որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անչափահասի պատիժը կրելու նպատակով փակ ուղղիչ հիմնարկ ուղարկելը, որը ՀՀ քրեակատարողական օրենսգրքով նախատեսված ռեժիմներից ամենախիստն է:

155. 2001թ. հոկտեմբերի 19-ի ՀՀ կառավարության N 1015 որոշմամբ ՀՀ ներքին գործերի նախարարության քրեական պատիժների իրականացման վարչությանը ենթակա հաստատությունները վերակազմակերպել են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ենթակայությամբ գործող քրեակատարողական հիմնարկների և ՀՀ արդարադատության նախարարության համակարգում ստեղծվել է քրեակատարողական ծառայությունը, որը ներառում է քրեակատարողական վարչությունը և դրան ենթակա հիմնարկները:

Քրեակատարողական վարչությունը և դրան ենթակա հիմնարկները ՀՀ արդարադատության նախարարության ենթակայությանը հանձնելը նպատակ ուներ բարելավել քրեակատարողական ծառայության ողջ համակարգը, ինչպես

նան նպաստել կալանավորների պայմանների բարելավմանը, ապահովել նրանց իրավունքների առավելագույն պաշտպանությունը:

156. Մանրակրկիտ ուսումնասիրվում են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում ֆիզիկական վատ վերաբերմունք կիրառելու վերաբերյալ տեղեկությունները և մեղավորների նկատմամբ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նաև կալանավորված անձանց և դատապարտյալների հնարավոր վնասվածքների պատշաճ գրանցմանը և այդ առնչությամբ նրանց բողոքներին հստակ արձագանքելուն:

157. Այն ժամանակ, երբ քրեակատարողական ծառայողները կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից քրեակատարողական հիմնարկի անձնակազմի օրինական պահանջները չկատարելու, պարտականությունների կատարմանը խոչընդոտելու կամ հակաօրինական գործողություններ կատարելու դեպքերում, երբեմն, ստիպված են լինում օրենքին համապատասխան ֆիզիկական ուժ կամ հատուկ միջոցներ գործադրել, ապա ֆիզիկական ուժի կամ հատուկ միջոցների կիրառման յուրաքանչյուր դեպք արձանագրվում է: Համաձայն չլինելով վարչակազմի գործողություններին, բանտարկյալը կարող է բողոքարկել դրանք, ինչպես նաև նրա իրավունքը խախտող ցանկացած գործողություն:

Ֆիզիկական ուժի կամ հատուկ միջոցների գործադրմամբ բանտարկյալի առողջությանը վնաս կամ մահ պատճառելու դեպքում պարտադիր գրավոր հաղորդում է ուղարկվում քրեակատարողական վարչության պետին և դատախազին: Հսկող դատախազները պարբերաբար ծանոթանում են նաև ուժի կամ հատուկ միջոցների կիրառման այլ դեպքերին՝ դրանց գործադրումը իրավախախտման կամ դիմադրության վտանգավորության բնույթին և աստիճանին համաչափ լինելը որոշելու նպատակով: Ֆիզիկական ուժի կամ հատուկ միջոցների գործադրումը որպես պատիժ բացառված է:

Բոլոր դատապարտյալների նկատմամբ՝ համաձայն ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 95-րդ հոդվածի, կիրառվում են միայն նկատողություն, խիստ նկատողություն և պատժախուց տեղափոխում՝ մինչև տասնհինգ օր ժամկետով: Որևէ այլ տույժի միջոց, մասնավորապես ջրից, սննդից և բացօթյա զբոսանքից զրկում, դատապարտյալների նկատմամբ չի կիրառվել և չի կիրառվում:

158. ՀՀ քրեակատարողական օրենսգրքի (ընդունված 2004թ. դեկտեմբերի 24-ին) 99-րդ հոդվածը տալիս է ուղղիչ հիմնարկների տեսակները, որոնք ըստ մեկուսացվածության աստիճանի լինում են բաց ուղղիչ, կիսաբաց, կիսափակ, փակ և բուժական ուղղիչ հիմնարկներ:

159. Օրենսգրքի 107-րդ հոդվածն անդրադառնում է դատապարտյալներին բուժական ուղղիչ հիմնարկներում պահելուն, համաձայն որի բուժական ուղղիչ հիմնարկում դատապարտյալը պահվում է օրենսգրքով և իրավական այլ ակտերով կիսաբաց ուղղիչ հիմնարկի համար նախատեսված պայմաններում: Բուժական ուղղիչ հիմնարկում կարող է ստեղծվել առանձնացված ստորաբաժանում կամ

կացարան կամ խուց՝ դատապարտյալներին տարբեր մեկուսացվածության աստիճաններով պահելու նպատակով:

160. Իրականացվում են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների աշխատանքներ՝ համանուն ծրագրային հայեցակարգով: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրային հայեցակարգի հիմքում դրված են քրեական քաղաքականությունից բխող ծառայության ապագա ծավալների կանխատեսումները՝ առաջիկա տաս տարիների կտրվածքով:

Համաձայն նշված հայեցակարգի՝ ենթակառուցվածքային բարեփոխումների աշխատանքների շրջանակներում ծրագրված է մի քանի նոր քրեակատարողական հիմնարկների կառուցում և որոշ հին քրեակատարողական հիմնարկների գործունեության դադարեցում: Այդ համատեքստում՝ Էջմիածին քաղաքին հարակից տարածքում 2007 թվականից սկսված շինարարական աշխատանքների ավարտից հետո շահագործման կհանձնվի ամբողջովին նոր քրեակատարողական հիմնարկ, որի շահագործումից հետո կդադարեցվի ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկի գործունեությունը և դրա փոխարեն կկառուցվի ամբողջովին նոր քրեակատարողական հիմնարկ: Արդեն իսկ դադարեցվել է ՀՀ արդարադատության նախարարության «Գյումրի» քրեակատարողական հիմնարկի գործունեությունը, «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի հին և պատիժը կրողների համար անբարենպաստ շինությունների շահագործումը:

2007 թվականի մարտի 19-ին Վանաձոր քաղաքում բացվել է ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի նոր շենքը: Նոր շենքի շենքային, տարածքային և խցային պայմանները Հայաստանի տարածքում գտնվող այլ նմանատիպ հաստատությունների համեմատ օրինակելի են և հնարավորինս մոտ են միջազգային չափանիշներին: Խցերի մակերեսն ապահովում է ամեն բնակչին նվազագույնը 4 քառ. մետր տարածք, խցերն ունեն լայն պատուհաններ, սանհանգույցներն ամբողջությամբ առանձնացված են, առկա են անհրաժեշտ քանակության և մակերեսով զբոսահրապարակներ և այլն: Հաստատությունը նախատեսված է կալանքի տակ գտնվող անձանց և փակ տեսակի ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալներին պահելու համար:

Ներկայումս ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկում պահվող յուրաքանչյուր կալանավորված և դատապարտված անձ ապահովված է նվազագույնը 4 քառ. մետր բնակելի տարածքով: 2006 թվականին հաստատությունում սկսվել են վերանորոգման աշխատանքներ՝ առանձնացվել են զուգարանները, վերականգնվել է ջեռուցման համակարգը: Վերանորոգման աշխատանքները շարունակվում են: Նախատեսված է մոտ ապագայում ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր շենք կառուցել «Գորիս» քրեակատարողական հիմնարկի համար:

Կալանավորված անձանց և դատապարտյալների օրվա կարգացուցակով նախատեսված ազատ ժամանակի արդյունավետ անցկացումը խցերից դուրս ապահովելու, նրանց տարբեր բնույթի միջոցառումներին (սպորտ, կրթություն,

աշխատանք) ներգրավելու համար նոր կառուցվող հիմնարկներում ազատագրկվածների ժամանցը կազմակերպելու համար Վանաձորի նորակառույց քրեակատարողական հիմնարկում համապատասխան պայմաններ արդեն իսկ ստեղծվել են: Մյուս հիմնարկներում, որտեղ անհրաժեշտ է իրականացնել կապիտալ շինվերանորոգման աշխատանքներ, հաշվի է առնվում նաև նշված պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը:

161. Դատապարտյալների աշխատանքային գործունեությունը ապահովելու նպատակով, քրեակատարողական ծառայությունում գործում է ՀՀ կառավարության կողմից ստեղծված «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամը: Քրեակատարողական ծառայության և հիմնադրամի համագործակցությամբ ուղիներ են փնտրվում զբաղվածության այլընտրանքային միջոցներ ստեղծելու ուղղությամբ: Այդ նպատակով, 2006 թվականին Երևան քաղաքում բացվել է «Բանտային արվեստ» խանութ-սրահը, որտեղ վաճառվում են դատապարտյալների կողմից պատրաստված ստեղծագործությունները: Վաճառքից գոյացած գումարները փոխանցվում են դատապարտյալների անձնական հաշիվներին: Աստիճանաբար ընդլայնվում է այդ աշխատանքում ընդգրկված դատապարտյալների թվաքանակը:

162. Կալանավորված անձանց և դատապարտյալների կրթությունը և մասնագիտական ուսուցումը կազմակերպելու նպատակով, նախատեսվում է տարբեր ուսումնական հաստատությունների հետ ձեռք բերել համապատասխան պայմանավորվածություններ: Անչափահաս դատապարտյալների հանրակրթական ուսուցման կազմակերպման հարցն արդեն լուծվել է. 2006թ-ի դեկտեմբերի 1-ից ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից համապատասխան իրավասություն է վերապահվել Արուսյանի թիվ 2 արհեստագործական ուսումնարանին կազմակերպել նաև դատապարտյալների հանրակրթական ուսուցումը, որտեղ ներկայումս դասընթացներն իրականացվում են հանրապետությունում սահմանված կրթական ծրագրերին համապատասխան:

163. Զբաղվածության աստիճանի բարձրացման նպատակով նախատեսված է գործող քրեակատարողական հիմնարկներում ստեղծել փոքր արհեստանոցներ (աշխատանքներն իրականացվում են 2007 թվականի հունիսից), որոնք կբավարարեն կալանավորվածների և դատապարտյալների արհեստներով զբաղվելու նվազագույն պայմանները:

164. 2006թ. օգոստոսի 3-ին ՀՀ կառավարության կողմից թիվ 1543-Ն որոշմամբ ընդունված ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի համաձայն, կալանավորված անձը կամ դատապարտյալը կարող է իր հաշվից օգտվել համապատասխանաբար կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկի տարածքում տեղակայված հեռախոսակապից: Կալանավորված անձին հեռախոսակապից օգտվելու հնարավորություն տրամադրվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից, որից օգտվելու տևողությունը յուրաքանչյուր դեպքում չի կարող գերազանցել 15 րոպեն: Սակայն, անհրաժեշտության դեպքում, հեռախոսակապից օգտվելու տևողությունը կարող է երկարաձգվել ևս 10 րոպեով:

165. Հատուկ ուշադրություն է դարձվում նաև ցմահ ազատազրկման դատապարտվածներին: 2006 թվականի ընթացքում խոշոր աշխատանքներ են տարվել ցմահ ազատազրկման դատապարտվածների խցային պայմանները բարելավելու ուղղությամբ: Ցմահ ազատազրկման դատապարտվածների պահման պայմանները, այդ թվում՝ կրթության և աշխատանքի հարցերը մշտապես գտնվում են քրեակատարողական ծառայողների ուշադրության կենտրոնում: Ցմահ ազատազրկվածներին վերականգնողական ծրագրերում ներգրավելու հարցերը դեռևս նախորդ տարվանից քննարկվում են «Միջազգային բանտային բարեփոխումներ» կազմակերպության հետ, որի արդյունքում ակնկալվում է վերը նշված հարցերի արդյունավետ լուծում՝ հիմնվելով միջազգային փորձի վրա: Նրանց արտաքին աշխարհի հետ կապը ակտիվ պահպանելու համար, բացի այն, որ նրանք օգտվում են հեռախոսագանգերից, տեսակցություններից, գրադարանից, գրեթե բոլոր խցերում առկա են հեռուստացույցեր, ռադիոընդունիչներ, մագնիտոֆոններ, ինչպես նաև հաճախ դատապարտյալներին են բաժանվում լրատվական և ժամանցային մի շարք թերթեր, ամսագրեր և այլ պարբերական մամուլ, որոնց միջոցով նրանք կարողանում են կապ պաշտպանել արտաքին աշխարհի հետ:

Հոդված 11

Ոչ ոք չի կարող ազատազրկվել միայն այն հիմքով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային պարտավորությունը:

166. Սահմանադրության 16-րդ հոդվածում նշվում է, որ մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:

167. ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանվում է, որ անձը կարող է ազատազրկվել միայն որոշակի դեպքերում և որոշակի հանցանքներ կատարելու համար: Ավելին, քաղաքացիական իրավահարաբերությունները կարգավորող նորմերում բացակայում է անձին ազատազրկման միջոցով պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը:

Հոդված 12

1. Որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունք և բնակության վայրը փոխելու ազատություն:

2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, ներառյալ իր սեփական, երկրից մեկնելու իրավունք:

3. Վերը նշված իրավունքները չեն կարող ենթարկվել որևէ սահմանափակման, բացի օրենքով նախատեսված այն սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության կամ էլ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար, և համատեղելի են սույն Դաշնագրով ճանաչվող այլ իրավունքների հետ:

4. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր սեփական երկիրը մուտք գործելու իրավունքից:

168. ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածով սահմանվում է, որ ՀՀ-ում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ՀՀ տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

Եթե ՀՀ Սահմանադրության 1995թ. հուլիսի 5-ի խմբագրությամբ տեքստում 22-րդ հոդվածը տեղաշարժի իրավունքը վերապահում էր միայն յուրաքանչյուր քաղաքացու, ինչը լիովին չէր համապատասխանում Դաշնագրի 12-րդ հոդվածին, ապա նոր խմբագրությամբ տեքստում տեղաշարժի իրավունքն ամրագրող համարժեք 25-րդ հոդվածը սահմանում է, որ տեղաշարժի իրավունք ունի ոչ թե «յուրաքանչյուր քաղաքացի», այլ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվող «յուրաքանչյուր ոք»:

169. Ներկայումս ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունքի իրացմանն այս կամ այն կերպ առնչվում են մի շարք օրենքներ և իրավական-նորմատիվ ակտեր: Միևնույն ժամանակ, ՀՀ օրենսդրական բարեփոխումներն այս ուղղությամբ շարունակվում են, մասնավորապես, ներկայումս մշակվում է «ՀՀ քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ուղղված է կարգավորելու այս ասպարեզում գոյություն ունեցող օրենսդրական բացերը:

170. ՀՀ-ում ՀՀ քաղաքացիներին հաշվառելը իրականացվում է նրանց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև պետության և այլ քաղաքացիների նկատմամբ նրանց պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով:

ՀՀ քաղաքացիների հաշվառումը կատարվում է ըստ նրանց ժամանակավոր կամ մշտական բնակության վայրի՝ միայն մեկ հասցեով: Ժամանակավոր բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ ՀՀ քաղաքացին բնակվում է ժամանակավորապես: Մշտական բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ ՀՀ քաղաքացին բնակվում է մշտապես կամ առավելապես: ՀՀ քաղաքացու հաշվառումն ըստ ժամանակավոր բնակության վայրի, եթե քաղաքացին չունի մշտական բնակության վայր, և ըստ մշտական բնակության վայրի՝ անկախ բնակելի տարածության մակերեսից, կատարում են ներքին գործերի մարմինները՝ անձնագրում համապատասխան նշում կատարելու միջոցով: Հաշվառումը կատարող մարմինները փաստաթղթերի մուտքագրումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում մշտական բնակության վայր չունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացուն հաշվառում են ըստ ժամանակավոր բնակության վայրի՝ նրա բնակության վայր չհանդիսացող բնակելի տարածությունում: Մշտական բնակության վայրը փոխած ՀՀ քաղաքացին պարտավոր է նոր բնակության վայր ժամանելու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում մշտական հաշվառման վերցվելու համար դիմել հաշվառումը կատարող մարմիններ: Զինծառայողների հաշվառումը կատարվում է՝ ա) ըստ մշտական բնակության վայրի՝ ընդհանուր հիմունքներով (բացառությամբ պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող շարքային ու սպայական կազմի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կուրսանտների). բ) ըստ ժամանակավոր բնակության վայրի՝ գործուղման թերթիկի հիման վրա: Մշտական հաշվառման վայր չունեցող զինծառայողները և նրանց ընտանիքի անդամները, մինչև բնակելի տարածություն ստանալը, ժամանակավորապես

հաշվառվում են զինվորական մասի գտնվելու վայրում: Ըստ մշտական բնակության վայրի հաշվառման մեջ չգտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հաշվառվում են ըստ ժամանակավոր բնակության վայրի: Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների համար սահմանվում են կացության ժամանակավոր, մշտական և հատուկ կարգավիճակները: Ժամանակավոր կացության կարգավիճակը (ՀՀ Կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս բնակվելու ՀՀ տարածքում որոշակի ժամկետով) տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն ՀՀ տարածքում մեկ տարի և ավել ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ (ուսում, աշխատանքի թույլտվություն, ՀՀ քաղաքացու հետ ամուսնություն, ՀՀ քաղաքացու մերձավոր ազգական լինելը (ծնող, քույր, եղբայր, ամուսին, զավակ, պապ, տատ, թոռ)): Ժամանակավոր կացության կարգավիճակը (ժամանակավոր կացության քարտ) տրվում է մինչև 1 տարի ժամկետով, յուրաքանչյուր անգամ 1 տարով երկարաձգելու հնարավորությամբ: Մշտական կացության կարգավիճակը (ՀՀ Կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս մշտապես բնակվելու ՀՀ տարածքում) տրվում է օտարերկրացուն, եթե նա ապացուցում է ՀՀ-ում մերձավոր ազգականների առկայությունը, ՀՀ-ում ապահովված է բնակարանով և գոյության միջոցներով, մինչև մշտական կարգավիճակ ստանալու համար դիմելը օրենքով սահմանված կարգով առնվազն 3 տարի բնակվել է ՀՀ-ում: Մշտական կացության կարգավիճակը (մշտական կացության քարտ) տրվում է 5 տարի ժամկետով` յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ: Հատուկ կացության կարգավիճակը (ՀՀ Նախագահի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս բնակվելու ՀՀ տարածքում այդ կարգավիճակը հավաստող փաստաթղթի վավերականության ժամկետներում) տրվում է ծագումով հայ օտարերկրացիներին, ինչպես նաև ՀՀ-ում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների: Հատուկ կացության կարգավիճակը տրվում է 10 տարի ժամկետով, կարող է տրվել մեկից ավելի անգամ: Օտարերկրացուն կացության կարգավիճակ տալը կարող է մերժվել, եթե նա արտաքսվել է ՀՀ տարածքից կամ նախկինում գրկվել է կացության կարգավիճակից և արտաքսման կամ կացության կարգավիճակից գրկելու մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից չի անցել 3 տարի, եթե նա բանտարկվել է ՀՀ-ում` ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար և դատվածությունը չի հանվել կամ մարվել, եթե կարգավիճակ հայցելիս ներկայացրել է կեղծ տվյալներ, եթե գոյություն ունեն հավաստի տեղեկություններ, որ նա իրականացնում է այնպիսի գործունեություն, հանդիսանում է այնպիսի կազմակերպության անդամ, որի նպատակն է վնասել ՀՀ պետական անվտանգությանը, իրականացնել մարդկանց առևտուր, ապօրինի զենք տեղափոխել և այլն:

Օտարերկրացիները մուտք են գործում Հայաստանի Հանրապետություն պետական սահմանի անցման կետերով` վավերական անձնագրի առկայության, մուտքի վիզայի կամ կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթի հիման վրա և սահմանային հսկողություն իրականացնող Հայաստանի Հանրապետության

կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի թույլտվության դեպքում:

Մինչև 18 տարեկան օտարերկրացիները կարող են մուտք գործել Հայաստանի Հանրապետություն իրենց ծնողների, այլ օրինական ներկայացուցչի կամ ուղեկցողի հետ միասին կամ միայնակ, եթե նրանք գալիս են ՀՀ իրենց ծնողների, այլ օրինական ներկայացուցչի մոտ կամ ընդունող կազմակերպություն:

Այն պետության քաղաքացիները, որոնց համար սահմանված է Հայաստանի Հանրապետություն ժամանելու առանց մուտքի վիզայի ռեժիմ, ՀՀ տարածքում կարող են մնալ առավելագույնը 120 օր ժամկետով՝ մեկ տարվա ընթացքում: Օտարերկրացիները կարող են Հայաստանի Հանրապետությունից դուրս գալ վավերական անձնագրի և մինչև դուրս գալու պահը ՀՀ տարածքում նրա օրինական գտնվելը կամ բնակվելը հավաստող վավերական փաստաթղթի առկայության դեպքում: ՀՀ-ից օտարերկրացու ելքն արգելվում է, եթե օրենքով սահմանված կարգով նրա նկատմամբ որոշում է կայացված որպես մեղադրյալ ներգրավելու մասին՝ մինչև գործի վարույթի ավարտը կամ այդ անձի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցումը, եթե նրա նկատմամբ նշանակվել է այնպիսի պատիժ, որի կրումը հնարավոր է միայն ՀՀ-ում, մինչև պատիժը կրելու ժամկետի ավարտը կամ պատիժը կրելուց օրենքով սահմանված կարգով ազատվելը:

171. Յուրաքանչյուր քաղաքացու ՀՀ վերադառնալու իրավունքը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ:

Ներկայումս Հայաստանը ակտիվորեն ներգրավվել է ռեադմիսիոն (հետ վերադարձի) համաձայնագրերի կնքման գործընթացում: ՀՀ կնքել է ռեադմիսիոն համաձայնագրեր Դանիայի, Լիտվայի, Շվեյցարիայի, Գերմանիայի, Բուլղարիայի, Շվեդիայի և Բենիլյուքսի երկրների հետ: Ռեադմիսիոն համաձայնագրերի նախագծերի շուրջ բանակացություններն ավարտված են Լեհաստանի Հանրապետության, Նորվեգիայի Թագավորության հետ, իսկ Ռուսաստանի Դաշնության, Ռումինիայի, Ուկրաինայի, Էստոնիայի, Չեխիայի և Կիպրոսի հետ ռեադմիսիոն համաձայնագրերի նախագծերի շուրջ բանակացություններն ընթացքի մեջ են:

172. Փախստականի ազատ տեղաշարժման և սահմանված կարգով բնակավայր ընտրելու իրավունքը սահմանված է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով (2-րդ գլուխ, 27-րդ հոդված): Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականները, ինչպես նաև ՀՀ տարածքում օրինական հիմքերով գտնվող ապաստան հայցողները և նրանց ընտանիքի անդամները իրենց բնակության վայրի ընտրության և պետության տարածքում ազատորեն տեղաշարժվելու իրավունքի առումով օգտվում են ՀՀ քաղաքացիների համար սահմանված նույն իրավունքներից:

Հոդված 13

Սույն Դաշնագրի մասնակից որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող օտարերկրացին կարող է արտաքսվել միայն ի կատարումն օրենքին համապատասխան կայացված որոշման, և եթե պետական անվտանգության հրամայական նկատառում-

ները չեն պահանջում այլ բան, ունի իր արտաքսման դեմ փաստարկներ ներկայացնելու, իրավասու իշխանության կամ իրավասու իշխանության նշանակած անձի կամ անձանց կողմից իր գործը վերանայելու իրավունք և այդ նպատակով այդ իշխանության, անձի կամ անձանց առջև ներկայացվելու իրավունք:

173. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանվում է, որ անձին ազատությունից կարելի է զրկել ՀՀ անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

174. 2006թ. դեկտեմբերին ընդունվել և 2007թ. փետրվարի 3-ից ուժի մեջ է մտել «Օտարերկրացիների մասին», ՀՀ օրենքը (Օրենք), որը կարգավորում է օտարերկրյա քաղաքացիների կարգավիճակին վերբերող հարաբերությունները ՀՀ-ում: Օրենքի 5-րդ գլխով կարգավորվում են օտարերկրացու կամավոր հեռանալը և նրա՝ Հայաստանի Հանրապետության տարածքից արտաքսումը:

Օրենքի 31-րդ հոդվածը սահմանում է, որ եթե նրա 30-րդ հոդվածով նախատեսված դեպքերում օտարերկրացին կամավոր չի հեռացել Հայաստանի Հանրապետության տարածքից, ապա Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն արտաքսման վերաբերյալ գործ է հարուցում և ներկայացնում դատարան:

Օրենքի 30-36-րդ հոդվածները վերաբերում են օտարերկրացիների՝ ՀՀ տարածքից արտաքսմանը: Այն մանրամասն կարգավորում է օտարերկրացու արտաքսման վերաբերյալ գործի հարուցման, դրա քննման, կայացրած որոշումն ի կատար ածելու, ինչպես նաև օտարերկրացու արտաքսումը արգելող հանգամանքների վերաբերյալ: 33-րդ հոդվածով ՀՀ տարածքից արտաքսման ենթակա օտարերկրացին օգտվում է դատական պաշտպանության համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավունքներից, այդ թվում նաև՝ արտաքսման որոշումը բողոքարկելու իրավունքից:

Արգելվում է օտարերկրացուն արտաքսել այն պետություն, որտեղ նրան սպառնում է հետապնդում ռասայական, կրոնական պատկանելության, սոցիալական ծագման, քաղաքացիության կամ քաղաքական համոզմունքների պատճառով, կամ եթե տվյալ օտարերկրացիները կարող են ենթարկվել խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պատժի կամ մահապատժի:

Հետապնդման սպառնալիքի, խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, մահապատժի իրական վտանգի գոյության մասին ապացույցները դատարան է ներկայացնում տվյալ օտարերկրացին: Արգելվում է արտաքսել ՀՀ-ում բնակվող օտարերկրացուն, եթե նա անչափահաս է, և նրա ծնողները օրինական հիմքերով բնակվում են ՀՀ-ում, կամ իր խնամքի տակ ունի անչափահաս երեխա, կամ 80 տարեկանից բարձր տարիքի է: Արգելվում է օտարերկրացիների կոլեկտիվ արտաքսումը: Արտաքսման մասին դատարանի որոշման մեջ նշվում են օտարերկրացու արտաքսման օրը, երթուղին, պետական սահմանի անցման կետը, արտաքսման ծախսերը հոգալու, մինչև ՀՀ տարածքից հեռանալը նրա բնակվելու վայրի, որոշակի պարբերականությամբ ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի համապատասխան ստորաբաժանում ներկայանալու պարտավորության, ինչպես նաև առանց թույլտվության բնակության վայրը

թողնելու արգելքի մասին, ձեռքարկված լինելու դեպքում մինչև արտաքսումը ձեռքարկված մեջ պահելու կամ ազատ արձակելու մասին: Արտաքսման մասին որոշման վերաբերյալ նշում է կատարվում օտարերկրացու անձնագրում: Արտաքսման մասին արտաքսվող օտարերկրացու ծագման պետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնակը կամ տվյալ պետության շահերը ներկայացնող այլ պետության դիվանագիտական ներկայացուցչությունը տեղեկացվում է եռօրյա ժամկետում: Արտաքսման ծախսերը, օտարերկրացու կողմից չհոգալու դեպքում, կատարվում են ՀՀ պետական բյուջեից: Եթե 90 օրվա ընթացքում անհնար է լինում օտարերկրացու վերադարձը ծագման պետություն, ապա օտարերկրացուն ՀՀ ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից տրվում է ժամանակավոր թույլտվություն մինչև օտարերկրացու հեռացումը ՀՀ-ից, սակայն, ոչ ավել քան 1 տարի ժամկետով: Մինչ օրս արտաքսման դեպքեր չեն գրանցվել:

Հոդված 14

1. Բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Յուրաքանչյուր ոք իր դեմ ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքների ու պարտականությունների որոշման ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակային քննության իրավունք: Մամուլին ու հասարակայնությանը կարող է արգելվել մասնակցելու ողջ դատաքննությանը կամ դրա որևէ փուլի՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության նկատառումներով, կամ երբ այդ պահանջում են կողմերի մասնավոր կյանքի շահերը, կամ էլ հատուկ հանգամանքների դեպքում, երբ հրապարակայնությունը կիսախտի արդարադատության շահերը. նման արգելումը կատարվում է այն չափով, որչափ, դատարանի կարծիքով, այն խիստ անհրաժեշտ է, սակայն քրեական կամ քաղաքացիական գործի վերաբերյալ դատական ցանկացած որոշում պետք է լինի հրապարակային, բացառությամբ այն դեպքերի, երբ անչափահասների շահերը պահանջում են այլ բան, կամ գործը վերաբերում է ամուսնական վեճերին կամ երեխաների խնամակալությանը:

2. Քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձ իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա.

ա) շտապ կարգով և մանրամասն, այն լեզվով, որը նա հասկանում է, տեղեկացվել իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի ու հիմքի մասին,

բ) բավարար ժամանակ ու հնարավորություններ ունենալ իր պաշտպանությունը նախապատրաստելու և իր ընտրած պաշտպանի հետ հաղորդակցվելու համար,

գ) դատվել առանց չարդարացված հապաղման,

դ) դատվել իր ներկայությամբ և իրեն պաշտպանել անձամբ կամ իր ընտրած պաշտպանի միջոցով. պաշտպան չունենալու դեպքում տեղեկացվել այդ իրավունքի մասին և, ցանկացած դեպքում, ելնելով արդարադատության շահերից, ունենալ իր համար նշանակված պաշտպան՝ նրա համար անվճար բոլոր այն դեպքերում, եթե նա բավարար միջոցներ չունի դրա դիմաց վճարելու,

ե) հարցաքննել կամ հարցաքննել տալ իր դեմ ցուցմունք տվող վկաներին և ապահովել իր օգտին ցուցմունք տվող վկաների ներկայանալը և հարցաքննումը՝ նույն պայմաններով, ինչպես և իր դեմ ցուցմունք տվող վկաներինը,

զ) օգտվել թարգմանչի անվճար օգնությունից, եթե նա չի հասկանում դատարանում օգտագործվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով,

է) պարտադրված չլինել իր դեմ ցուցմունքներ տալու կամ իրեն մեղավոր ճանաչելու:

4. Անչափահասների դեպքում դատավարությունը պետք է լինի այնպիսին, որպեսզի հաշվի առնվի նրանց տարիքը և նպաստի նրանց վերականգնմանը:

5. Հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը և դատավճիռը վերանայվեն վերադաս դատական ատյանի կողմից, օրենքի համաձայն:

6. Եթե որևէ անձ վերջնական որոշմամբ դատապարտվել է քրեական հանցագործության համար և եթե նրա նկատմամբ կայացված դատավճիռը հետագայում բեկանվել է կամ նրան ներում է շնորհվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ անվիճելիորեն ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա նման դատապարտման հետևանքով պատիժ կրած անձն օրենքի համաձայն ստանում է փոխհատուցում, եթե չապացուցվի, որ հիշյալ անհայտ հանգամանքը ժամանակին չի բացահայտվել բացառապես կամ մասամբ նրա մեղքով:

7. Ոչ ոք չպետք է կրկին դատվի կամ պատժվի այն հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել՝ յուրաքանչյուր երկրի օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

175. Դաշնագրի 14-րդ հոդվածում սահմանված դրույթներն իրենց արտացոլում են գտել ՀՀ օրենսդրությունում: Այս նորմերն անմիջականորեն ներմուծված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, որի 2-րդ գլուխը որպես քրեական դատավարության սկզբունքներ է նշում Դաշնագրի վերը նշված հոդվածով արտահայտված դրույթները:

176. ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

Ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու ինչպես իր ներկայացուցչի կամ պաշտպանի միջոցով, այնպես էլ՝ անձամբ:

Նույն օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև:

Իրավունքների, ազատությունների և պարտականությունների խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից,

հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

177. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ Օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն Օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:

Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք:

Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել Օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ:

Անձը, որին քրեական վարույթն իրականացնող մարմինն առաջարկում է հայտնել կամ տրամադրել հանցանք գործելու մեջ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների մեղավորությունը հիմնավորող տեղեկություններ կամ նյութեր, իրավունք ունի հրաժարվել նման տեղեկություններ հայտնելուց և նյութեր տրամադրելուց:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար:

Նույն անձի վերաբերյալ, նույն դեպքի առիթով դատարանի՝ Օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման առկայությունը բացառում է քրեական գործը նորոգելը մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելու կամ ավելի խիստ պատիժ նշանակելու կամ մեկ այլ հիմքով, որն առաջ կբերի անձի վիճակի վատթարացում:

178. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ արդարացվածն իր իրավունքների վերականգնման, այդ թվում՝ քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից իրեն պատճառված նյութական վնասի հատուցման իրավունք ունի:

Պատճառված նյութական վնասի հատուցման իրավունք ունի նաև յուրաքանչյուր անձ, ով քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից անօրինական ենթարկվել է հարկադրանքի միջոցների:

179. Քրեական վարույթն իրականացնող մարմինները պարտավոր են իրականացնել սույն օրենսգրքով նախատեսված՝ արդարացվածի իրավունքների վերականգնմանն ուղղված բոլոր միջոցառումները:

180. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսվում է մեղադրյալի պաշտպանության իրավունքը: Քրեական վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալին հնարավորություն է ընձեռում օրենքով չարգելված բոլոր միջոցներով իրականացնել պաշտպանության իր իրավունքը:

Մեղադրյալը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

1) իմանալ՝ ինչու է մեղադրվում, որի համար մեղադրանք առաջադրելուց, արգելանքի վերցվելուց կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումը հայտարարելուց հետո քրեական հետապնդման մարմնից անմիջապես անվճար ստանալ որպես մեղադրյալ ներգրավման մասին որոշման պատճենը,

2) արգելանքի վերցվելուց հետո հետաքննության մարմնից, քննիչից կամ դատախազից անմիջապես անվճար ստանալ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում,

3) մեղադրանք առաջադրելու պահից ունենալ պաշտպան, հրաժարվել պաշտպանից և պաշտպանվել ինքնուրույն,

4) առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման.

5) հարցաքննվել պաշտպանի ներկայությամբ,

6) տալ ցուցմունքներ կամ հրաժարվել ցուցմունքներ տալուց, առերես հարցաքննվել իր դեմ վկայած անձանց հետ,

7) տալ բացատրություններ կամ հրաժարվել բացատրություններ տալուց,

8) իր միջնորդությամբ, հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի թույլտվությամբ անձամբ կամ պաշտպանի միջոցով մասնակցել քննչական և այլ դատավարական գործողություններին կամ հրաժարվել դրանց մասնակցելուց, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ,

9) արգելանքի վերցնելուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով մերձավոր ազգականներին, իսկ զինծառայող լինելու դեպքում՝ նաև զինվորական մասի հրամանատարությանը, տեղյակ պահել արգելանքի տակ պահելու իր տեղի և հիմքերի մասին:

Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձին արգելանքի վերցնելու դեպքում նրան պահելու տեղի և հիմքերի մասին քրեական վարույթն իրականացնող մարմինը 24 ժամվա ընթացքում դիվանագիտական ուղիներով հայտնում է արգելանքի վերցված անձի քաղաքացիության, իսկ եթե նա քաղաքացիություն չունի՝ նրա մշտական բնակության պետությանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև շահագրգիռ այլ պետությանը:

181. ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է հանցանք

կատարելու պահին հանցավորի անչափահաս լինելը: ՀՀ դատական օրենսգրքի 50-րդ գլխով կարգավորվում է անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 443-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, դատավճիռ կայացնելիս, գալով այն եզրակացության, որ անչափահասը կարող է ուղղվել առանց քրեական պատժի միջոցներ կիրառելու, կարող է անչափահասին ազատել պատժից և նրա նկատմամբ կիրառել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ:

182. ՀՀ դատական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում դատավարությունը տարվում է հայերեն:

Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը:

Քրեական գործով գործին մասնակցող և հայերենին չտիրապետող անձանց դատարանը, ՀՀ հաշվին, ապահովում է թարգմանչի ծառայություններով:

Վարչական գործերով և օրենքով սահմանված քաղաքացիական գործերով գործին մասնակցող ֆիզիկական անձանց դատարանը ՀՀ հաշվին ապահովում է թարգմանչի ծառայություններով, եթե նրանք չեն տիրապետում հայերենին և ապացուցում են, որ բավարար միջոցներ չունեն վճարովի թարգմանություն ապահովելու համար:

ՀՀ հաշվին թարգմանչի ծառայություններ մատուցելու անհրաժեշտության դեպքում դատարանի որոշման հիման վրա ՀՀ կառավարության (այսուհետ՝ կառավարություն) սահմանած կարգով նշանակվում է թարգմանիչ: Թարգմանիչների վարձատրության չափը և կարգը սահմանում է կառավարությունը:

183. ՀՀ դատական օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ դատարաններում գործերի քննությունը դռնբաց է: Դռնբաց դատական նիստերին կարող են ներկա գտնվել բոլոր չափահաս անձինք:

184. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և դռնբաց դատական նիստին ներկա գտնվողներն իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն և ձայնագրություն:

Դատական նիստի կինո և լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով ու հեռուստատեսությամբ կատարվում են կողմերի համաձայնությամբ՝ գործը քննող դատարանի թույլտվությամբ:

185. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տասնվեց տարեկանից փոքր անձանց դատական նիստի դահլիճ մտնել չի թույլատրվում, եթե նրանք կողմ կամ վկա չեն:

186. Դատական քննությունը կամ դրա մի մասն անցկացվում է դռնփակ՝ միայն դատարանի որոշմամբ, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով:

187. Որդեգրման գործերով որդեգրողի պահանջով դատական քննությունն անցկացվում է դռնփակ:

188. Դատարանների դատավճիռները և այլ վերջնական որոշումները հայտարարվում են հրապարակայնորեն: Դռնփակ դատական քննություն անցկացնելու դեպքում դատարանի որոշման հիման վրա կարող են հրապարակայնորեն հայտարարվել դատավճռի կամ այլ վերջնական որոշման միայն ներածական և եզրափակիչ մասերը. չեն հրապարակվում այն մասերը, որոնք հիմք են հանդիսացել դռնփակ դատական քննություն անցկացնելու համար:

189. ՀՀ դատական օրենսգրքով տրվում են անկախ և անկողմնակալ դատարանների գործունեության, դատավորների անկախության երաշխիքները:

190. ՀՀ սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ Օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ:

ՀՀ բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու Օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և Օրենքով:

191. Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

192. ՀՀ-ում գործում են նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները:

Առաջին ատյանի դատարաններն են՝

1) ընդհանուր իրավասության դատարանները.

2) մասնագիտացված դատարանը:

Մասնագիտացված դատարանն է՝

1) վարչական դատարանը:

Վերաքննիչ դատարաններն են՝

1) քրեական վերաքննիչ դատարանը,

2) քաղաքացիական վերաքննիչ դատարանը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր հերթին ունի երկու պալատ՝ քրեական պալատ և քաղաքացիական և վարչական պալատ:

193. Դատական մարմինների անկախությունը գործադիրից ապահովվում է հետևյալ երաշխիքներով՝

ՀՀ սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն՝ դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և Օրենքներով:

Դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և Օրենքներով:

Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին Օրենքով:

194. ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անկախ են, ենթարկվում են միայն Սահմանադրությանը և օրենքին:

Դատավորի և սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքները և պատասխանատվության հիմքերն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով:

Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրանց նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու գործ հարուցվել՝ առանց համապատասխանաբար արդարադատության խորհրդի կամ սահմանադրական դատարանի համաձայնության: Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալումն իրականացվում է հանցագործության կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Նման դեպքերում ձերբակալման մասին անմիջապես տեղեկացվում են Հանրապետության Նախագահը և համապատասխանաբար վճռաբեկ դատարանի նախագահը կամ սահմանադրական դատարանի նախագահը:

195. ՀՀ սահմանադրության 98-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ:

196. ՀՀ դատական օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ դատական իշխանությունն ինքնավար է:

Դատական իշխանության ինքնակառավարումն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված ինքնակառավարման մարմինների միջոցով:

ՀՀ դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատություն և օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դատավորն անկախ է:

Արդարադատություն և օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դատավորը հաշվետու չէ որևէ մեկին, այդ թվում՝ պարտավոր չէ որևէ բացատրություն տալ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Դատավորի գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտությունն արգելվում է: Նման արարքը քրեորեն հետապնդելի է: Պետական ծառայողների համար այն առաջացնում է նաև կարգապահական պատասխանատվություն՝ ընդհուպ մինչև զբաղեցրած պաշտոնից կամ ծառայությունից ազատում՝

պետական ծառայությունը կարգավորող համապատասխան օրենքներով սահմանված կարգով:

Արդարադատության և օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման կապակցությամբ իր գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտության մասին դատավորը պարտավոր է անմիջապես հայտնել ՀՀ դատարանների նախագահների խորհրդի (այսուհետ՝ Դատարանների նախագահների խորհուրդ) էթիկայի հանձնաժողովին: Եթե էթիկայի հանձնաժողովը համարի, որ տեղի է ունեցել օրենքով չնախատեսված միջամտություն դատավորի գործունեությանը, ապա նա պարտավոր է դիմել համապատասխան մարմիններին մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ:

Պաշտոնավարման ընթացքում և լիազորությունները դադարեցվելուց հետո դատավորը չի կարող հարցաքննվել որպես վկա իր քննած գործի վերաբերյալ: Դատավորն անփոփոխելի է:

ՀՀ դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը պաշտոնավարում է մինչև իր 65 տարին լրանալը, և նրա լիազորությունները դադարում են իր 65 տարին լրանալու հաջորդ օրը:

197. Դատավորների անկախության հարցում կարևորագույն դեր ունի Արդարադատության խորհուրդը, որպես անկախ մարմին, այդ թվում և գործադիրից, որին էլ վերապահված է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավունքը:

ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորի և դատարանի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունեն՝

1) արդարադատության նախարարը,

2) Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը:

Պետք է նշել նաև, որ Արդարադատության խորհուրդը դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումներում արդարադատության նախարարի կողմից դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հանգամանքը որոշակիորեն դիտել է որպես դատավորի անկախությունը վտանգող հանգամանք:

198. ՀՀ դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի համաձայն, եթե ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ Դատական դպրոցն ավարտած և Դատական դպրոցում սովորող անձանց ընդհանուր թիվը չի գերազանցում 12-ը, ապա վճռաբեկ դատարանի նախագահը ոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 10-ը հրապարակում է հայտարարություն՝ դատավորների թեկնածությունների ցուցակի լրացման նպատակով որակավորման ստուգումներ անցկացնելու մասին: Որակավորման ստուգումը կատարվում է մրցութային կարգով՝ գրավոր քննությունների արդյունքներով: Որակավորման ստուգմանը կարող են մասնակցել 22-ից 60 տարեկան Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք Հայաստանի Հանրապետությունում ստացել են բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան են ձեռք բերել Օտարերկրյա պետությունում, որոնց

Ճանաչումն ու համարժեքության հաստատումը ՀՀ-ում իրականացվել են օրենքով սահմանված կարգով, տիրապետում են հայերենին, սույն օրենսգրքի 185-րդ հոդվածի հիման վրա գրված չեն Դատական դպրոց դիմելու իրավունքից, և որոնք համապատասխանում են սույն օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի համաձայն՝ Արդարադատության խորհուրդն իր նիստում ուսումնասիրում է առաջարկված թեկնածությունները և հրավիրում նրանց գրույցի: Դատավորների թեկնածությունների ցուցակի լրացման նպատակով Արդարադատության խորհուրդն անցկացնում է քվեաթերթիկներով գաղտնի քվեարկություն: Քվեարկության արդյունքներով կազմվում է առավելագույն ձայներ ստացած 10 անձանց ցուցակ: Հավասար ձայների դեպքում ցուցակում ընդգրկվում են նաև հավասար ձայներ ստացած մյուս անձինք: Ցուցակը Հանրապետության Նախագահին է ներկայացվում ոչ ուշ, քան մինչև դեկտեմբերի 15-ը: Ցուցակի կազմման ժամանակ հաշվի է առնվում սեռային (գենդերային) հավասարակշռությունը: Եթե որևէ սեռի դատավորների թիվը պակասի դատավորների ընդհանուր թվի 25 տոկոսից, ապա այդ սեռի թեկնածուներին ցուցակում կերաշխավորվի առնվազն 5 տեղ:

Հանրապետության Նախագահը, ոչ ուշ, քան մինչև դեկտեմբերի 25-ը, հրամանագրով հաստատում է Արդարադատության խորհրդի կազմած ցանկը՝ իր համար ընդունելի թեկնածություններով:

199. ՀՀ դատական օրենսգրքի 136-րդ հոդվածի համաձայն՝ Արդարադատության խորհուրդը կազմում և Հանրապետության Նախագահի հաստատման է ներկայացնում դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակը:

ՀՀ դատական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ Արդարադատության խորհրդի անդամը, դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակի կազմման, դատարանի նախագահի, առաջին ատյանի մասնագիտացված, վերաքննիչ դատարանի դատավորի, վճռաբեկ դատարանի պալատի դատավորի և նախագահի նշանակման հետ կապված, քվեաթերթիկներով քվեարկելիս հաշվի է առնում հետևյալ հատկանիշները.

- 1) դատավորի մասնագիտական գիտելիքները՝ հաշվի առնելով դատավորի մասնագիտական գործունեությունը, դատավորի մասնագիտական և հետբուհական կրթությունը,
- 2) դատավորի մասնագիտական հեղինակությունը,
- 3) աշխատանքային ունակությունները,
- 4) դատավորի կայացրած ակտերի որակը,
- 5) դատավորի կողմից դատարանի և դատավորի հեղինակության պաշտպանությունը և դատավորի վարքագծի կանոնների պահպանումը,
- 6) գրավոր և բանավոր հաղորդակցության ունակությունները՝ ելնելով դատական նիստերի արձանագրություններից, կայացրած դատական ակտերից,
- 7) դատավորի մասնակցությունը սույն օրենսգրքով նախատեսված կրթական և մասնագիտական վերապատրաստման ծրագրերին,
- 8) դատավորի մասնակցությունը դատական իշխանության ինքնակառավարմանը,

9) դատավորի մասնակցությունը իրավունքի և օրենսդրության զարգացման ծրագրերին,

10) դատավորի պարտականությունները կատարելիս իր գործընկերների նկատմամբ դրսևորված վերաբերմունքը,

11) դատավորի կազմակերպչական ունակությունները, կառավարչական բնույթի աշխատանք իրականացնելու դեպքում այդ աշխատանքում դատավորի ցուցաբերած որակները:

200. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանների պալատը համարվում է Հայաստանի Հանրապետությունում գործող փաստաբանական միությունների իրավահաջորդը: Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ-ում գործող փաստաբանական մյուս միությունների լիազորությունները պահպանվում են մինչև փաստաբանների պալատի կազմավորումը: Հայաստանում օրենքով գործում է մեկ փաստաբանական միավորում՝ փաստաբանների պալատը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով:

Փաստաբանական գործունեությունը ներառում է՝

1) խորհրդատվությունը, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը, նրանց իրավունքների և պարտավորությունների, դատական համակարգի՝ վստահորդի իրավունքներին առնչվող գործունեության կապակցությամբ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը,

2) ներկայացուցչությունը, ներառյալ՝ դատական ներկայացուցչությունը,

3) քրեական գործերով պաշտպանությունը:

Սույն հոդվածով նախատեսված դատական ներկայացուցչությունը կամ քրեական գործերով պաշտպանությունը՝ որպես ձեռնարկատիրական գործունեություն, իրականացնում է միայն փաստաբանը:

Փաստաբանական գործունեություն չի համարվում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող և ի շահ գործատուի գործող անձանց կողմից ցույց տրվող իրավաբանական օգնությունը:

Սույն օրենքի գործողությունը չի տարածվում այն անձանց վրա, ովքեր փաստաբան չեն եւ օրենքով սահմանված կարգով իրականացնում են ներկայացուցչություն կամ քրեական գործերով պաշտպանություն՝ ոչ որպես ձեռնարկատիրական գործունեություն:

201. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (այսուհետ՝ փաստաբանների պալատ) փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող իրավաբանական անձ է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով: Փաստաբանների պալատն իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք է բերում օրենքով սահմանված կարգով գրանցվելու պահից:

Փաստաբանների պալատի խնդիրներն են՝

1) պայմաններ ստեղծել իր անդամների կողմից մասնագիտական գործունեություն իրականացնելու համար.

2) պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում.

3) կազմակերպել իր անդամների մասնագիտական ուսուցումը և վերապատրաստումը.

4) վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից փաստաբանի վարքագծի կանոնադրի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջների պահպանման նկատմամբ.

5) միջոցներ ձեռնարկել փաստաբանության հեղինակության բարձրացման ուղղությամբ.

6) ապահովել սույն Օրենքով նախատեսված դեպքերում յուրաքանչյուրի համար հավասարապես մատչելի և արդյունավետ անվճար իրավաբանական օգնության իրականացումը:

Փաստաբանների պալատը կարող է համագործակցել այլ երկրների փաստաբանական կառույցների, միջազգային և այլ կազմակերպությունների հետ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանների պալատի մարմիններն են՝

- 1) փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը,
- 2) փաստաբանների պալատի խորհուրդը,
- 3) փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը,
- 4) փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը:

Փաստաբանների պալատի մարմինների անդամներն այդ մարմիններում աշխատում են առանց վարձատրության, բացառությամբ փաստաբանների պալատի նախագահի:

Փաստաբանների պալատի մարմինների անդամներն այդ մարմիններում աշխատանքը կարող են համատեղել փաստաբանական գործունեության հետ:

Փաստաբանների պալատի անդամը կարող է ընտրվել փաստաբանների պալատի մեկ մարմնում:

Փաստաբանների պալատի մարմինների լիազորությունները, կազմավորման կարգը, գործունեության կարգը, խնդիրներն ու գործառնությունները սահմանվում են սույն Օրենքով և փաստաբանների պալատի կանոնադրությամբ:

202. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանն իրավունք ունի փոխհատուցում ստանալու իր ծառայությունների դիմաց:

Փաստաբանական գործունեության վճարի չափն ու վճարման կարգը որոշվում են փաստաբանի ու վստահորդի միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագրով:

Պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնությունը քրեական գործերով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված

կարգով և նախատեսված դեպքերում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և հետևյալ դեպքերում.

1) ալիմենտի գանձման վերաբերյալ գործերով,

2) խեղման կամ առողջությանն այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով:

Անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է փաստաբանների պալատը պետության հաշվին՝ սույն օրենքի 41-րդ և 42-րդ հոդվածներով սահմանված կարգով:

Անվճար իրավաբանական օգնություն կարող է ցույց տրվել նաև փաստաբանի նախաձեռնությամբ:

Հոդված 15

1. Ոչ որ չի կարող հանցագործության համար մեղավոր ճանաչվել, եթե գործողության կամ անգործության պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն դա հանցագործություն չի համարվել: Նմանապես, չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառման էր ենթակա քրեական հանցագործության կատարման պահին: Եթե հանցագործության կատարվելուց հետո օրենքով ավելի մեղմ պատիժ է սահմանվում, այդ օրենքի գործողությունը տարածվում է տվյալ հանցագործի վրա:

2. Սույն հոդվածում ոչինչ չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալուն և պատժելուն ցանկացած գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, ըստ միջազգային հանրության կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքների, հանդիսացել է քրեական հանցագործություն:

203. Սահմանադրության 22-րդ հոդվածով ամրագրված նորմերը լիովին համապատասխանում են Դաշնագրի 15-րդ հոդվածով արտահայտված դրույթներին (տես նաև զեկույցի 49-րդ կետը): Մասնավորապես, հոդվածում ասվում է, որ արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության կատարման պահին գործող օրենքով: Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ: Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

Վերը նշված նորմերն արտացոլված են նաև ՀՀ քրեական օրենսգրքում (Օրենսգիրք), որի 3-րդ հոդվածով սահմանվում է, որ քրեական պատասխանատվության միակ հիմքը՝ հանցանքը, քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշներն իր մեջ պարունակող արարք կատարելն է:

Օրենսգիրքը որպես սկզբունք սահմանում է պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը՝ հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի կամ քրեաիրավական այլ ներգործության:

Ըստ Օրենսգրքի 10-րդ հոդվածի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու

հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Արգելվում է անձին երկրորդ անգամ դատապարտել նույն հանցագործության համար:

Օրենսգրքի 13-րդ հոդվածով սահմանվում է քրեական օրենքի հետադարձ ուժը, նշելով, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն: Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի: Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը:

Հոդված 16

Յուրաքանչյուր ոք, որտեղ էլ գտնվելիս լինի, ունի իր իրավասուբյեկտության ճանաչման իրավունք:

204. Քաղաքացիական իրավունքում իրավասուբյեկտությունն իր մեջ ներառում է անձի իրավունակությունն ու գործունակությունը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (Օրենսգրք) 20-րդ հոդվածով սահմանվում է, որ քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը (քաղաքացիական իրավունակություն) բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես:

Նույն հոդվածի 2-րդ մասով ասվում է, որ քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահին և դադարում է մահվամբ:

Օրենսգրքի 24-րդ հոդվածը սահմանում է քաղաքացու գործունակությունը:

Մասնավորապես, հոդվածի 1-ին մասում նշվում է, որ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից:

Օրենսգրքի 25-րդ հոդվածով ամրագրվում է քաղաքացուն իրավունակությունից և գործունակությունից զրկելու և դրանք սահմանափակելու անթույլատրելիությունը նշելով, որ դա կարող է կատարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Միաժամանակ, հոդվածի 3-րդ կետով նշվում է, որ քաղաքացու իրավունակությունից կամ գործունակությունից լրիվ կամ մասնակի հրաժարվելուն և նրա իրավունակության կամ գործունակության սահմանափակելուն ուղղված գործարքներն առոչինչ են:

Հոդված 17

1. Արգելվում է կամայական կամ անօրինական միջամտությունն անձի անձնական, ընտանեկան կյանքին, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիությանը, ինչպես նաև անօրինական ոտնձգությունը նրա պատվի ու հեղինակության դեմ:

2. Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգություններից օրենքով պաշտպանվածության իրավունք:

205. Սահմանադրությամբ, ամրագրելով մարդու և քաղաքացու անձնական իրավունքներն ու ազատությունները, 23-րդ և 24-րդ հոդվածներով սահմանվում է անձի անձնական և ընտանեկան կյանքի, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը: Այս իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատարանի որոշման հիման վրա:

206. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (Օրենսգիրք) 11-14-րդ հոդվածներով որպես սկզբունք սահմանվում է անձի, բնակարանի, գույքի անձեռնմխելիությունը, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը:

Օրենսգրքի 31-33-րդ գլուխներով մանրամասն կարգավորվում են այն քննչական գործողությունների կատարման հիմքերը և կարգը, որոնց ընթացքում կարող են սահմանափակվել վերը նշված իրավունքները:

Ելնելով Սահմանադրությամբ և օրենսդրությամբ տրված մարդու իրավունքների ապահովման վերոհիշյալ երաշխիքներից, ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ, 146-147-րդ հոդվածներով քրեականացված է անձնական կամ ընտանեկան կյանքի, բնակարանի անձեռնմխելիությունը, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելը:

Անձի անձնական և ընտանեկան կյանքին, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիությանը կամայական կամ անօրինական միջամտությունը, ինչպես նաև անօրինական ոտնձգությունը նրա պատվի ու հեղինակության դեմ արգելվում են ՀՀ Սահմանադրության 18, 23, 24, 26, 27 հոդվածներով:

207. 2002 թվականի հոկտեմբերի 8-ին ընդունվել է «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է «պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անհատական տվյալների մշակմանն առնչվող հարաբերությունները»: Սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանվում է անհատական տվյալների մշակման օրինականությունը և, մասնավորապես, 1-ին կետով ամրագրվում է, որ «անհատական տվյալները մշակվում են տվյալների սուբյեկտի համաձայնությամբ»: Օրենքի 7-րդ հոդվածում շեշտվում է, որ «պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, պետական կամ համայնքային հիմնարկներն իրավասու են անհատական տվյալներ մշակել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով»: Ինչ վերաբերում է իրավապահ մարմիններին, ապա օրենքի 10-րդ հոդվածում հստակ նշվում է, որ «իրավապահ մարմինների գործունեության ընթացքում

հավաքված անհատական տվյալների իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով: Օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքերում, «եթե տվյալների սուբյեկտը համարում է, որ իր անհատական տվյալների նկատմամբ իրականացվել են անօրինական գործողություններ, ապա նա իրավունք ունի այդ գործողությունները բողոքարկել վերադասության կամ դատական կարգով»:

208. 2003 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունվել է «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքը, որի 5-րդ հոդվածի համաձայն «սոցիալական քարտերի համակարգի ստեղծման նպատակը տեղեկատվական համակարգերում անհատական տվյալների մշակման ընթացքում քաղաքացու նույնականացումը (իդենտիֆիկացումը), օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության փոխանակման գործընթացների կանոնակարգումը, բարելավումը և քաղաքացու անհատական տվյալների գաղտնիության ապահովումն է:

209. 2007 թվականի հոկտեմբերի 22-ին ընդունվել է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որի նպատակներից են՝ հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, հանցագործությունները նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումը, ազգային անվտանգության համար անհրաժեշտ տեղեկությունների ձեռքբերումը և այլն (հոդված 4): Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններն են.

- 1) ոստիկանությունը,
- 2) ազգային անվտանգության մարմինները,
- 3) հարկային մարմինները,
- 4) մաքսային մարմինները՝ մաքսանենգության և այլ հանցագործությունների խափանման ու բացահայտման նպատակով,
- 5) քրեակատարողական ծառայությունը՝ միայն քրեակատարողական հիմնարկներում:

Նշված օրենքի 14-րդ հոդվածով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակներից են նաև նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, ինչպես նաև հեռախոսային խոսակցությունների վերահսկումը:

Հոդված 18

1. *Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այդ իրավունքն ընդգրկում է իր ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը և միանձնյա կամ այլոց հետ համատեղ և հրապարակալ, կամ մասնավոր կարգով, իր կրոնը կամ համոզմունքը պաշտամունքի, արարողությունների, ծեսերի և քարոզչության միջոցով արտահայտելու ազատությունը:*

2. *Ոչ ոք չպետք է ենթարկվի այնպիսի հարկադրանքի, որը նսեմացնում է սեփական ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը:*

3. *Կրոնի կամ համոզմունքի արտահայտման ազատությունը ենթարկվում է միայն օրենքով սահմանված և հասարակական անվտանգության, կարգի, առողջության ու բարո-*

յականության, ինչպես և այլ անձանց հիմնարար իրավունքների ու ազատությունների պահպանման համար անհրաժեշտ սահմանափակումների:

4. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել ծնողների և, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալների ազատությունը՝ ապահովելու իրենց երեխաների կրոնական ու բարոյական դաստիարակությունը սեփական համոզմունքներին համապատասխան:

210. Խղճի, դավանանքի և համոզմունքի ազատության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է.

ա/ ՀՀ Սահմանադրությունից,

բ/ ՀՀ համար ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերից,

գ/ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքներից,

դ/ խղճի, դավանանքի, համոզմունքի ազատությունը և կրոնական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող այլ օրենքներից ու իրավական ակտերից:

211. Ինչպես նշվել է նախորդ գեկույցում (տես CCPR/C/92/Add.2 para.197) ՀՀ անկախությունից հետո ընդունված առաջին օրենքների շարքին է դասվում «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 1991 թվականի հունվարի 17-ին) :

212. ՀՀ 2005թ. Սահմանադրությունը հստակ սահմանում է իշխանությունների և կրոնական կազմակերպությունների միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքը: Սահմանադրության 8.1 Հոդվածը սահմանում է. «ՀՀ-ում եկեղեցին անջատ է պետությունից»: Սահմանադրությունը նախատեսում է նաև պետության և կրոնական տարբեր կազմակերպությունների փոխշահավետ համագործակցություն և գործունեության ազատությունը՝ նշելով. «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը»:

Ճանաչելով և ընդունելով կրոնի և, մասնավորապես, Հայ առաքելական եկեղեցու բացառիկ դերը որպես ազգի հոգևոր, բարոյական ու մշակութային արժեքի, նույն հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»: Նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով: Ղեկավարվելով Սահմանադրության այս դրույթով 2007 թվականի փետրվարի 27-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը: Նշված օրենքն ընդունվել է հաշվի առնելով Հայ առաքելական եկեղեցու պատմական դերը հայ ժողովրդի կյանքում: Մինչև ժամանակ պետք է նշել, որ սույն օրենքի դրույթները որևէ կերպ չեն նսեմացնում մյուս կրոնական կազմակերպությունների ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով սահմանված իրավունքներն ու ազատությունները: Այս քայլով նաև պետությունը փորձում է հատուցել այն վնասը, որ պատճառվել է եկեղեցուն արեւիզմի ռեժիմի տակ գտնված տարիներին:

213. 2001 թվականին անդամակցելով Եվրոպայի խորհրդին, ՀՀ-ը ստանձնեց պարտավորություն՝ ընդունելու «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը: 2003 թվականի դեկտեմբերի 12-ին նման օրենքի ընդունմամբ, ՀՀ-ը կատարեց իր պարտավորությունը: Այսպիսով, օրենքը հնարավորություն է տալիս իրականացնել երկիրը պաշտպանելու քաղաքացիական պարտքը թե՛ ռազմական, և թե՛ այլընտրանքային ծառայության միջոցով: Օրենքը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով, այն երկու անգամ փոփոխվել է՝ 2004 և 2006 թվականներին:

214. Անկախությունից հետո անցած տարիներին Հայաստանը լուրջ քայլեր է ձեռնարկել երկրում կրոնական բազմազանությունն ապահովելու ուղղությամբ: Եթե 1997 թվականին երկրի պետական ռեգիստրում գրանցված էին 14 կրոնական կազմակերպություններ, (տես CCPR/C/92/Add.2 para.204), ապա 2009 թվականի դրությամբ դրանց թիվը հասել է 66-ի:

215. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի համաձայն քաղաքացիների խումբը ճանաչվում է որպես կրոնական կազմակերպություն, եթե քաղաքացու նկատմամբ չի թույլատրվում որևէ հարկադրանք կամ բռնություն, հիմնվում է պատմականորեն կանոնացված որևէ սուրբ գրքի վրա, իր դավանանքով մտնում է համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի մեջ, գերծ է նյութապաշտությունից և ուղղված է դեպի հոգևոր ոլորտները, ընդգրկում է առնվազն 200 հավատացյալ անդամ: Մինչև 18 տարեկան երեխաները չեն կարող անդամագրվել կրոնական կազմակերպությանը՝ անկախ կրոնական ծեսերին իրենց մասնակցելու պարագայից և այլ հանգամանքներից: Օրենքի 14-16-րդ հոդվածներն անդրադառնում են կրոնական կազմակերպությունների գրանցման կարգի առանձնահատկություններին:

216. Նշված կազմակերպությունները ներկայացնում են 13 կրոնական հոսանքներ.

- Հայաստանյայց առաքելական Սբ. եկեղեցի – 1
- Հայ կաթոլիկներ - 3
- Ավետարանական հարանվանություններ – 4
- Ավետարանական-մկրտական հարանվանություններ – 10
- Ադվենտիստական հարանվանություն – 1
- Հոգեգալստական հարանվանություններ – 23
- Էքյումենիկ կազմակերպություններ – 1
- Նոր կրոնական շարժումներ – 6
- Կրոնական-բարեգործական կազմակերպություններ – 6
- Ազգային փոքրամասնությունների կրոնական կազմակերպություններ – 8, այդ թվում՝
 - «Ռուս ուղղափառ եկեղեցի» - 4
 - Եզդիների կրոնական կազմակերպություն - 2
 - «Հայաստանի Հրեական կրոնական համայնք» - 1
 - ասորական կրոնական կազմակերպություն - 1
- Հեթանոսական կրոնական կազմակերպություն – 1
- Այլ կրոնական կազմակերպություն – 1

Աստվածաբանական ուսումնասիրությունների կենտրոն – 1

Առանց գրանցման գործում են մոլորկանները (ոռու հնաձիսականներ), Երևանում գործող իրանական Կապույտ մզկիթը:

Կան կրոնական համայնքներ, որոնք գրանցվել են որպես հասարակական կազմակերպություն՝ օգտվելով այդ ոլորտի օրենսդրության թերությունից:

217. ՀՀ-ում գործող կրոնական միավորումները (կրոնական կազմակերպություններ և խմբեր կամ համայնքներ)՝ իրենց իրավական և փաստական կարգավիճակով կարելի է բաժանել երեք մասի.

- ա) որպես կրոնական կազմակերպություններ գրանցված միավորումներ,
- բ) որպես հասարակական կազմակերպություն գրանցված, սակայն կրոնական պրակտիկա իրականացնող կամ աշխարհում որպես կրոնական հայտնի խմբեր,
- գ) պետական գրանցում չունեցող, սակայն գործող կրոնական, աշխարհայացքային կամ փիլիսոփայական, վարքականոնային խմբեր, որոնց իրավական կարգավիճակը դեռևս սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ:

ՀՀ Նախագահի 2001թ. մարտի 15-ի ՆՀ-836 հրամանագրով ուժը կորցրած ճանաչվեց ՀՀ Նախագահի 1993թ. դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում կրոնական գործունեության օրինականությունն ապահովելու միջոցառումների մասին» N ՆՀ-269 հրամանագիրը: Արդյունքում դադարեցվեցին ՀՀ կառավարությանն առնթեր կրոնի գործերի պետական խորհրդին տրված հետևյալ լիազորությունները.

- հսկողություն իրականացնել կրոնական թեմաներով գրականության և ծիսական նշանակության առարկաների արտադրության և վաճառքի նկատմամբ,
- պետական զանգվածային լրատվության միջոցներով կրոնադավանաբանական քարոզչություն իրականացնել միայն պետխորհրդի գիտությամբ,
- տարածքներ հատկացնել միայն նախապես պետխորհրդի հետ համաձայնեցնելով,
- օտարերկրյա կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներին կարող են հրավիրել միայն պետխորհրդի միջոցով,
- օտարերկրյա կրոնական կազմակերպությունների հրավերով ՀՀ քաղաքացիների մեկնումը արտասահման միայն պետխորհրդի գիտությամբ:

218. ՀՀ կառավարության 2002թ. մարտի 6-ի N 204 որոշմամբ լուծարվել է ՀՀ կառավարությանն առնթեր կրոնի գործերի պետական խորհուրդը: Վերջինիս վերապահված գործառնությունները, այդ թվում նաև «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի “բ”-“ե” ենթակետերի համաձայն փորձագիտական եզրակացություն տալու լիազորությունը վերապահվել է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմին: Սկզբնական շրջանում այս գործառնություն իրականացրել է աշխատակազմի սոցիալական հարցերի վարչությունը: ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 27-ի N1556-Ն որոշմամբ ՀՀ կառավարության աշխատակազմին տրվել է նաև ազգային փոքրամասնությունների հարցերով լիազոր մարմնի

գործառնությունները, և ստեղծվել է ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը:

219. Հայաստանում պետական պաշտպանության տակ են առնված Հայաստանի Հանրապետության տարածքի բոլոր պատմաճարտարապետական, մշակութային և կրոնական կառույցները, անկախ դրանց էթնիկ կամ կրոնական պատկանելությունից: Հայ առաքելական եկեղեցու պատմական հուշարձաններից բացի (օրինակ՝ հեթանոսական տաճար, քաղկեդոնիկ եկեղեցիներ և այլն), այս պահին Հայաստանի տարածքում առկա և արդեն բացակայող կրոնական ու էթնիկ համայնքների պատմական պաշտամունքային օջախներից, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության տվյալներով, պետության կողմից պաշտպանվում են հետևյալ հուշարձանները.

- Հայ կաթոլիկ եկեղեցի Գյումրիում, կառուցված 1848-1855թթ. Կանոնիկոս վարդապետ Արարատյանի կողմից,
- Ռուսական եկեղեցի Վանաձորում, կառուցված 1895թ., վերանորոգված 1977թ.,
- Ռուսական եկեղեցի Գյումրիում (Պլավյան ժամ), կառուցված 1904թ.,
- Ռուսական եկեղեցի Երևանում, կառուցված 1913թ.,
- Կապույտ մզկիթ (Գեոյ մզկիթ) Երևանում, կառուցված 1766թ. (1992թ. վերականգնվել է, այսօր այն բաց է այցելուների համար, մզկիթին կից գործում են գրադարան, թանգարան, մշակութային կենտրոն, պարսկերեն լեզվի դպրոց, Երևանի Կապույտ մզկիթը արժեվորվում է որպես Հարավային Կովկասում պահպանված ուշ պարսկական շինարարական արվեստի աչքի ընկնող օրինակ),
- Աբաս Միրզայի (Սարգսի) մզկիթ Երևանում, կառուցված 19-րդ դ. վերջերին,
- Եկեղեցի Սբ. Կիրիլ (ասորական եկեղեցի), Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ, գյուղ Դիմիտրով, կառուցված 1840թ.,
- Եկեղեցի Սբ. Թովմաս (ասորական եկեղեցի), Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ, գյուղ Վերին Դվին, կառուցված 19-րդ դ. վերջերին,
- Եկեղեցի Սբ. Սավա (հունադավան եկեղեցի), Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, գյուղ Շամլուղ, կառուցված 1909թ., արժեվորվում է որպես Հայաստանում պահպանված հունադավան եկեղեցու օրինակ,
- Հունադավան եկեղեցիներ Հանքավանում (Կոտայքի մարզ) և Յաղդան (Լոռու մարզ) գյուղում,
- Հրեական գերեզմանոց, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ, Եղեգնաձորի տարածաշրջան, գյուղ Եղեգիս, հարավ-արևելյան եզրին, Եղեգիս գետի ձախ ափին, 14-17-րդ դդ.,
- Քրդական գերեզմաններ, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ, Արագածի ենթատարածք, գյուղ Ռյա թագա, 16-18-րդ դդ.:

220. ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը 2004թ. հունիսին հրատարակել է «Խղճի, դավանանքի և համոզմունքի ազատություն (Իրավունքներ,

Հնարավորություններ, Պարտավորություններ)» գիրքը, որը պարունակում է կրոնի և խղճի ազատության վերաբերյալ ՀՀ-ում գործող օրենքները և այլ իրավական ակտերը, այդ թվում ՀՀ համար ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերը, ՀՀ-ում գրանցված կրոնական կազմակերպությունների ցանկը, տեղեկություններ չգրանցված կամ այլ կարգավիճակով գործող կրոնական համայնքների մասին, և ուղեկցվում է ՀՀ կրոնական իրավիճակի համառոտ վերլուծությամբ:

Հոդված 19

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի առանց միջամտության սեփական կարծիք ունենալ:

2. Յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, լինեն դրանք բանավոր, գրավոր, թե՛ տպագիր, լինի արվեստի, թե իր ընտրած ցանկացած այլ միջոցով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքների իրականացումը հանգեցնում է հատուկ պարտավորությունների և պատասխանատվության: Ուստի այն ենթակա է որոշ սահմանափակումների, որոնք, սակայն, պետք է միայն սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ.

ա) այլ անձանց իրավունքները կամ հեղինակությունը հարգելու համար,

բ) պետական անվտանգության կամ հասարակական կարգի, կամ բնակչության առողջության, կամ բարոյականության պաշտպանության համար:

221. Ինչպես նշվել է նախորդ գեկույցում (տես CCPR/C/92/Add.2 para.209), ՀՀ անկախության ընդունումից անմիջապես հետո ՀՀ կողմից 1991 թվականի հոկտեմբերի 8-ին ընդունված առաջին օրենքների թվին է դասվել «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» օրենքը:

2003թ. դեկտեմբերի 13-ին ընդունված «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» օրենքը ուժը կորցրած ճանաչվեց: Օրենքի դրույթներից կարևոր են հետևյալները:

Օրենքի 4-րդ հոդվածը երաշխիքների համակարգ է նախատեսում լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման համար: Դրանք են՝

ա) լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա:

Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

բ) Լրատվության միջոցները թողարկվում և տարածվում են առանց նախնական կամ ընթացիկ պետական գրանցման, լիցենզավորման, պետական կամ որևէ այլ մարմնում հայտարարագրման կամ որևէ մարմնի ծանուցման:

Օրենքի 7-րդ հոդվածով, սահմանելով լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները, նշում է, որ արգելվում է օրենքով

սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը: Արգելվում է տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության տարածումը, եթե դա ստացվել է տեսաձայնագրման կատարման մասին առանց անձին զգուշացնելու, և այդ անձն ակնկալել է, որ գտնվում է տեսաձայնագրումը կատարողի տեսադաշտից դուրս, լսելի չէ նրա համար և դրա համար ձեռնարկել է բավարար միջոցներ, բացառությամբ, երբ տեսաձայնագրումը կատարած անձի տեսադաշտից դուրս լինելու կամ նրա համար լսելի չլինելու համար ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն անբավարար են եղել:

222. Դաշնագրի 19-րդ հոդվածով նախատեսված իրավունքի հետ սերտորեն առնչվում է նաև 2003թ. սեպտեմբերի 23-ին ընդունված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որի 4-րդ հոդվածում ամրագրված տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները կարևոր երաշխիք են հանդիսանում տեղեկատվություն ստանալու իրավունքի իրականացման գործում: Այդ սկզբունքներն են՝

- ա) տեղեկությունները գրանցելու, դասակարգելու և պահպանելու միասնական կարգի սահմանում,
- բ) տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության պաշտպանությունը,
- գ) տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը,
- դ) հրապարակայնությունը:

Օրենքի 5-րդ հոդվածով նշվում է, որ տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցումը, դասակարգումը և պահպանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, իսկ 10-րդ հոդվածի 1-ին մասով նշում է, որ ՀՀ կառավարության սահմանած կարգով է իրականացվում նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրումը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է, որ.

«1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

2. Օտարերկրյա անձինք սույն օրենքով նախատեսված իրավունքներից և ազատություններից կարող են օգտվել միայն օրենքով և (կամ) միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում:

3. Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում»:

223. Տեղեկատվության ազատության հետ սերտորեն առնչվում է 2000թ. հոկտեմբերի 9-ին ընդունված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, որի 4-րդ հոդվածն ամրագրում է, որ ՀՀ-ում երաշխավորվում է

հեռուստառադիոհաղորդումների ազատ ընտրության, արտադրության ու տարածման իրավունքը, և արգելվում է հեռուստառադիոհաղորդումների գրաքննությունը:

Սպառողներն իրավունք ունեն ազատ ընդունել հեռուստառադիոհաղորդումներ և լրացուցիչ տեղեկատվություն, այդ թվում՝ արբանյակային, կաբելային (լարային) ցանցերով, անվճար կամ վճարովի, ինչպես ապակոդավորող միջոցներով, այնպես էլ հեռուստառադիոհեռարձակման բաց ցանցերով:

Պետությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում և միջոցներ է ձեռնարկում ՀՀ ամբողջ տարածքում Հանրային հեռուստառադիոընկերության (առնվազն 1 հեռուստաալիքի և 1 ռադիոալիքի) ծրագրերի ընդունման համար:

Եթերային հեռուստառադիոհեռարձակում իրականացնող ընկերությունը, համապատասխան սփռման գոտիների համընկնման շրջաններում, չպետք է սահմանափակի հեռուստառադիոլսարանի՝ այլ հեռուստառադիոծրագրեր ընդունելու իրավունքը:

224. Քննարկվող իրավունքի հետ առնչության եզրեր ունի նաև 2001թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը, որով սահմանվում է, որ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը կարգավորող անկախ մարմին է, որի նպատակն է ապահովել հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորել և վերահսկել հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը:

225. Դաշնագրի 19-րդ հոդվածում ամրագրված դրույթները ՀՀ օրենսդրության մեջ հնարավորինս լայն արտացոլումը հնարավոր դարձավ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Մասնավորապես, Սահմանադրության 27-րդ հոդվածում ասվում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: ՀՀ 2005 թվականի Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն «պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը:

226. Անձի տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքի իրականացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովումը: Այս առումով 2005թ. սահմանադրական փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը լրացվեց 83.2 հոդվածով, որը սահմանեց, որ հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման

նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին, որի անդամների կեսը ընտրվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակվում է ՀՀ Նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով: Սահմանադրության անցումային դրույթներով (հոդված 117-րդ, կետ 11-րդ) ամրագրվեց, որ այդ անկախ մարմնի գործող անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանված իրենց լիազորությունների ժամկետի ավարտը, իսկ նրանց պաշտոնավարության ժամկետը լրանալու կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքերում թափուր տեղերը լրացվում են հաջորդաբար Ազգային ժողովի և Հանրապետության Նախագահի կողմից: Գործող օրենսդրությունը Սահմանադրությանը համապատասխանեցնելու նպատակով 2007 թվականի փետրվարի 26-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեցին «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի Ազգային հանձնաժողովի կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքները, որոնցով Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 9 անդամներից բաղկացած կազմը փոխարինվեց 8 անդամով և, ի տարբերություն նախկինի, երբ հանձնաժողովի անդամներին միանձնյա նշանակում էր Հանրապետության Նախագահը, սահմանվեց, որ հանձնաժողովի չորս անդամներ ընտրվում են Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս չորսին՝ նշանակում է Հանրապետության Նախագահը: Կատարված փոփոխություններն անչափ կարևոր են զանգվածային լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման տեսանկյունից, քանի որ ապահովում են Ազգային ժողովի մասնակցությունը հանձնաժողովի կազմավորմանը:

227. 2008թ. սեպտեմբերի 10-ին «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության համաձայն մինչև 2010 թվականի հուլիսի 20-ը հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորման մրցույթներ չեն հայտարարվում: Այն հեռուստաընկերությունները, որոնց լիցենզիայի գործողության ժամկետը լրանում է մինչև 2011 թվականի հունվարի 21-ը, կարող են լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտ ներկայացնել Ազգային հանձնաժողով: Լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվում է հայցվող ժամկետով, բայց ոչ ավելի, քան մինչև 2011 թվականի հունվարի 21-ը (59-րդ հոդված): Նման քայլը թելադրված էր մինչև 2012թ. թվային հեռարձակման անցնելու ՀՀ միջազգային պարտավորություններից:

228. 2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով, 6-րդ մասը լրացվել է նոր «գ» կետով, համաձայն որի Հանրային հեռուստատեսությունը պետք է եթերային ժամանակ տրամադրի Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար: Այդ հաղորդումների ընդհանուր ժամաքանակը չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ՝ շաբաթական մինչև 2 ժամ, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամ ժամաքանակը: Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերը և հեռուստահաղորդումները պետք է ուղեկցվեն հայերեն լուսագրով: Նման սահմանափակումը պայմանավորված է լսարանի (հեռուստադիտողների և ռադիոհոսնակողների) փոքրաթիվ լինելու փաստով:

Նշենք, որ ազգային փոքրամասնությունները կազմում են ՀՀ ազգաբնակչության ընդհանուր թվի 2 տոկոսը:

229. 2008թ. դեկտեմբերի 1-3-ը ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովում Եվրախորհրդի անկախ փորձագետի, ինչպես նաև Հայաստանում ԵԽ գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի մասնակցությամբ տեղի են ունեցել քննարկումներ, այդ թվում՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ:

2009 թվականի ապրիլի 29-ին ընդունվել են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» «ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ձևավորման նոր կարգ: Նոր կարգի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամ կարող են լինել լրագրության, տնտեսագիտության, կրոնի, իրավագիտության, հեռուստատեսության, արվեստի բնագավառներում մասնագիտական փորձ ունեցող անձինք: Անդամների նշանակումն իրականացվում է մրցութային կարգով:

Նշյալ օրենքով փոփոխություններ և լրացումներ են կատարվել նաև հեռուստառադիոհաղորդումների հովանավորությանը, հեռուստառադիո-ընկերությունների կողմից իրենց ֆինանսական միջոցների թափանցիկության ապահովմանը, հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին, հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին առնչվող և մի շարք այլ հոդվածներում:

2009թ. ապրիլի 28-ին ընդունված «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով, ի թիվս մի շարք այլ փոփոխությունների և լրացումների, լրացում է կատարվել 36-րդ հոդվածում, համաձայն որի Ազգային հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը ՀՀ Ազգային ժողով է ներկայացնում Ազգային հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության մասին հաղորդում: Հաղորդումը ՀՀ Ազգային ժողով է ներկայացնում Ազգային հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ տեղակալը: Հաղորդումը Ազգային ժողովում քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ընդունվում ի գիտություն: Ազգային հանձնաժողովն իր հաղորդումը հրապարակում է մամուլում և տեղադրում Ազգային հանձնաժողովի կայքում: Ազգային հանձնաժողովի ընդունած նորմատիվ բնույթի բոլոր որոշումները հրապարակվում են մամուլում:

230. Ինչ վերաբերում է լրատվամիջոցներին առնչվող բողոքների քննության ընթացակարգերին, ապա ՀՀ օրենսդրությունը պետական բոլոր մարմինների կողմից բողոքների քննարկման վերաբերյալ սահմանել է միասնական կանոններ: Ազգային հանձնաժողովը ևս բողոքների քննարկումն իրականացնում է այդ կանոնների համաձայն: Բացի այդ, հանձնաժողովում բոլոր

քննարկումներն իրականացվում են դռնբաց նիստերի միջոցով, որոնց մասին զանգվածային լրատվամիջոցները նախապես տեղեկացվում են:

231. Դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվում է հոդվածով սահմանված իրավունքների որոշակի սահմանափակում:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 1996թ. դեկտեմբերի 12-ին) 2-րդ հոդվածով ասվում է, որ պետական գաղտնիքը ՀՀ ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար, ինչը համապատասխանում է Դաշնագրի վերը նշված հոդվածի կետի պահանջներին:

232. Սահմանադրության 33.1 հոդվածով արգելվում է շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունը: Ավելին, 2005թ. հուլիսի 8-ին ընդունվել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքը (Օրենք), որով կարգավորվում է այդ ոլորտի լիցենզավորման և գործունեության կարգը: Օրենքով լիցենզավորումն իրականացվում է հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից (Կարգավորող), որը կազմավորվում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի (ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 25) 7-րդ հոդվածի համաձայն: Այն կազմված է հինգ անդամներից, որոնց նշանակում է Հանրապետության Նախագահը՝ վարչապետի ներկայացմամբ՝ տարեկան ռոտացիոն սկզբունքով (յուրաքանչյուր տարի հանձնաժողովի մեկ անդամի նշանակմամբ), հինգ տարի պաշտոնավարման ժամկետով: Հանձնաժողովի անդամները պաշտոնավարում են մինչև 65 տարեկան:

233. Օրենքի 10-րդ հոդվածով սահմանվում է լիցենզիայի կամ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության կարգը (վերջինս տրամադրվում է մրցույթային դիմումների կամ աճուրդի միջոցով): Լիցենզիաների և ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների համար դիմումները պետք է Կարգավորողին ներկայացվեն այդ մարմնի սահմանած ձևով, պարունակեն «Լիցենզավորման մասին» ՀՀ Օրենքի (ընդունվել է 2001թ. մայիսի 30-ին) համաձայն պահանջվող տեղեկությունները և Կարգավորողի կանոններով պահանջվող այլ անհրաժեշտ տեղեկություններ և պետք է ուղեկցվեն դիմելու համար սահմանված վճարով: Դիմումում ներառված տեղեկությունները պետք է հասանելի լինեն հանրությանը: Կարգավորողը չի կարող մերժել լիցենզիա կամ թույլտվություն տրամադրելու համար բոլոր պահանջները բավարարող դիմողին միայն այն հիմնավորմամբ, որ վերջինս ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է որևէ Օտարերկրյա պետության քաղաքացու կամ որևէ Օտարերկրյա պետության օրենքների համաձայն ստեղծված կազմակերպության:

Լիցենզավորման մասին ՀՀ օրենքի 3-րդ գլխով սահմանվում են լիցենզավորման պայմանները և պահանջները, որոնք են՝ բնապահպանական, հիգիենիկ և սանիտարահամաճարակային անվտանգության, հակահրդեհային նորմերն ու կանոնները, պահպանելը, մասնագիտական որակավորման

պահանջները բավարարելը, ներկայացվող տեխնիկական պահանջներին և պայմաններին համապատասխանելը և այլն:

234. Օրենքի 4-րդ գլխով տրվում են մրցակցության երաշխիքները: Օրենքի 24-րդ հոդվածը սահմանում է, որ Կարգավորողը կարող է սահմանել կանոններ, որոնցով կարգելի հակամրցակցային գնորդումը և այլ երևույթներ, պահանջել գերիշխող Օպերատորից կամ ծառայությունների մատուցողից, որպեսզի նա մրցակցային կարգով հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցի մեկ կամ ավելի, բայց իրենից լիովին առանձնացված դուստր ձեռնարկությունների կամ փոխկապակցված անձանց միջոցով, կառուցվածքային առումով առանձնացնի իր գերիշխող գործունեությունը մրցակցային գործունեությունից, սահմանափակի գործարքները, կամ տեղեկատվության փոխանակումը, կամ աշխատողների համատեղումը, կամ ձեռնարկի այլ քայլեր, որոնք կհամարի ողջամիտ և անհրաժեշտ՝ մրցակցությունը երաշխավորելու համար:

Հոդված 20

1. Պատերազմի ցանկացած քարոզչություն արգելվում է օրենքով:

2. Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քարոզչություն, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, արգելվում է օրենքով:

235. Պատերազմի, ինչպես նաև ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քարոզչություն ՀՀ տարածքում արգելվում է: Օրենքի առջև հավասարության և անխտրականության սկզբունքը սահմանվում է ՀՀ Սահմանադրության 14.1, 26 և 47-րդ հոդվածներով: ՀՀ քրեական օրենսգրքի 63, 104, 112, 113, 119, 226, 185, 265, 393, 397.1 հոդվածներով ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցող գործողությունները պատժելի են: Մասնավորապես, Քրեական օրենսգրքի 226 հոդվածում ասվում է. «Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործադրությունները պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով: Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են հրապարակայնորեն կամ լրատվության միջոցներ օգտագործելով, բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, պաշտոնական դիրքն օգտագործելով, կազմակերպված խմբի կողմից՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով »:

236. ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունն իրականացնում է զանգվածային լրատվամիջոցների ամենօրյա մոնիտորինգ՝ հետևելով, որ դրանցում ռասիստական կամ այլատյաց գաղափարներ, ցանկացած դավաճանքի կամ դրա հետևորդների մասին խտրականություն, բռնություն կամ ատելություն բորբոքող նյութեր լինելու դեպքում արագորեն արձագանքվի կամ իրավապահ

մարմինների կողմից, կամ կատարվի վերլուծական քննարկում: Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը ակտիվ համագործակցում է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի հետ ատելության դրդապատճառներով կատարված հանցագործությունների խնդիրների շուրջ:

237. Ազգային ատելության քարոզչության տեսակետից վերջին տարիներին խիստ մտահոգության առիթ է դարձել Ադրբեջանի կողմից հայերի հանդեպ ատելության հրահրումը և պատերազմական գործողություններ սկսելու ակնհայտ քարոզչությունը: Նման գործողությունները նշված երկրի կողմից դիտվում են որպես ՄԱԿ-ի և, մասնավորապես, տվյալ Դաշնագրով սահմանված պարտավորությունների խախտում: Ադրբեջանի նման վարքագծի վերաբերյալ իրենց խորը անհանգստությունն են արտահայտել Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հեղինակավոր շատ կառույցներ և առաջին հերթին անկախ մոնիտորինգային մարմինները, որոնք վերահսկում են Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների ոլորտում ստանձնած պարտավորությունների իրականացումը:

Եվրոպայի խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի Ադրբեջանի վերաբերյալ 2007 թվականի նոյեմբերի 9-ին ընդունված երկրորդ կարծիքում (ACFC/OP/II(2007)007`

http://www.coe.int/t/dghl/monitoring/minorities/3_FCNMdocs/PDF_2nd_OP_Azerbaijan_en.pdf, ինչպես նաև ԵԽ CM/ResCMN(2008)11 բանաձևը` http://www.coe.int/t/dghl/monitoring/minorities/3_FCNMdocs/PDF_2nd_CM_Res_Azerbaijan_en.pdf) նշվում է. «չնայած դատական նախադեպի և իրավական հիմքերի բացակայությանը, Խորհրդատվական կոմիտեն այնուամենայնիվ տարբեր աղբյուրներից տեղեկատվություն է ստացել, որ հայ փոքրամասնությանը պատկանող անձինք լայնածավալ խտրականության են ենթարկվում տարբեր ասպարեզներում: Այդ թվում հասարակական աշխատանքի ընդունվելիս, բնակարան ստանալուց, հանրային ծառայություններից օգտվելիս, թոշակները և այլ սոցիալական նպաստները ստանալիս, ինչպես նաև ունեցվածքի վերադարձի հարցերում: Խորհրդատվական կոմիտեն մտահոգված է այցի ընթացքում իշխանության ներկայացուցիչների կողմից արված հայտարարություններով: Վերջիններս կամ ժխտում էին խնդրի առկայությունը, կամ էլ փորձում արդարացնել դա Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման բացակայությամբ:

Խորհրդատվական կոմիտեն մտահոգված է անհանդուրժողականության դրսևորումներով և հայկական ծագում ունեցող անձանց հասցեին հնչող ատելություն պարունակող ելույթներով: Հայերը նշում են, որ մամուլն ակտիվորեն նպաստում է նրանց հանդեպ թշնամանք սերմանելու գործին: Ավելին, իշխանությունները հանդուրժում են նման դրսևորումները Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցի չլուծվածության պատճառաբանությամբ: Խորհրդատվական կոմիտեն անթույլատրելի է համարում, որ անձը կարող է վտանգվել և կասկածվել դավաճանության մեջ միայն այն բանի հիման վրա, որ հայկական ծագում ունի կամ շփումներ է հաստատել Հայաստանի հետ»:

Ռասայական խտրականության դեմ Եվրոպական հանձնաժողովի (ECRI), Ադրբեջանի վերաբերյալ երկրորդ զեկույցում, որը հրապարակվել է 2007թ. մայիսին (CRI(2007)22` http://hudoc.ecri.coe.int/XMLEcri/ENGLISH/Cycle_03/03_CbC_eng/AZE-CbC-III-2007-22-ENG.pdf), Հանձնաժողովը այլ տիպի խտրականությունների թվում, մասնավորապես, զեկույցի 110-րդ պարբերությունում նշում է. «մեկ այլ խնդիր է Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ բանավոր և գրավոր հայատյաց ելույթները: Նման ելույթները ոչ միայն վերաբերում են Հայաստանին և Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին: Այդ ելույթներում Ադրբեջանում բնակվող հայերը նկարագրվում են որպես թշնամիներ և դավաճաններ: Հանձնաժողովը մտահոգված է ստանալով այն տեղեկատվությունը, որ որոշ լրատվամիջոցներ և մասնավորապես որոշակի հեռուստաալիքներ և հասարակության անդամներ, քաղաքական գործիչներ և նույնիսկ տեղական և ազգային մակարդակի պաշտոնյաներ ակնհայտորեն արտահայտում են իրենց բացասական գզացմունքները հայերի հանդեպ ընդհանրապես և Ադրբեջանի տարածքում բնակվող էթնիկ հայերի հանդեպ մասնավորապես: Հանձնաժողովը ուշադրություն է հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ որևէ քայլ չի ձեռնարկվել կիրառելու համար Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածները` արգելելու հայերի նկատմամբ ռասայական ատելության փաստացի հրահրումը: Ինչպես արդեն նշվել է Հանձնաժողովի առաջին զեկույցում, զուտ միայն հայկական ծագում ունենալու փաստը կարող է անձի հանդեպ հարձակումների առիթ դառնալ»:

Նույն հանձնարարականի 114 և 115-րդ պարբերություններում նշվում է. «Հանձնաժողովը պահանջում է, որ ադրբեջանական իշխանությունները ավելի ակտիվ մասնակցություն ունենան այնպիսի մթնոլորտի ձևավորման գործում, որտեղ հայերի հանդեպ սպառնալիքներ չեն հնչի, երբ նրանք հրապարակայնորեն ներկայացնեն իրենց ինքնությունը: Հանձնաժողովը մեկ անգամ ևս հորդորում է Ադրբեջանի իշխանություններին համարժեք պատասխան տալ խտրականության բոլոր դրսևորումներին և հայերի դեմ ուղղված ատելություն պարունակող ելույթներին, այդ թվում համապատասխան օրենսդրական դրույթների կիրառման միջոցով»:

ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատարը 2007 թվականի սեպտեմբերի 3-7-ը Ադրբեջան կատարած այցից հետո, իր զեկույցում (CommDH(2008)2` <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1251577&Site=CommDH&BackColorInternet=FEC65B&BackColorIntranet=FEC65B&BackColorLogged=FFC679>) նշում է. «Հայերը չպետք է ապրեն վախի մթնոլորտում: Իշխանությունները պետք է նախաձեռնեն իրազեկման արշավներ` խուսափելու համար հայերի հանդեպ սոցիալական նախապաշարմունքներից: Նրանք պետք է համապատասխան ուսուցում անցկացնեն իրավապահների համար` բացառելու խտրականության որևէ դրսևորում»:

Հոդված 21

Ճանաչվում է խաղաղ հավաքների իրավունքը: Այդ իրավունքի իրականացումը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարա-

կույթյան մեջ՝ ի շահ պետական կամ հանրային անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության, կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության:

238. Եթե 1995 թվականին ընդունված Սահմանադրությամբ միայն ՀՀ քաղաքացիներն ունեին խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունք, ապա 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում այդ իրավունքը վերապահվեց յուրաքանչյուր անձի, այսինքն այդ իրավունքը տարածվեց նաև օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց վրա:

Զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամների կողմից այդ իրավունքների իրականացման սահմանափակումներ կարող են նախատեսվել միայն օրենքով (Սահմ. հոդվ. 29, 2-րդ մաս):

239. ՀՀ Սահմանադրությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների (այդ թվում՝ խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքի) սահմանափակման երկու մեխանիզմ է նախատեսում: Մեկը սովորական պայմաններում, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխարգելման, հանրության առողջության և բարքերի, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար (հոդված 43): Մյուսը՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ: (Մանրամասները տես Դաշնագրի հոդված 4-ի պատասխանում՝ 89 և 90 կետերում:)

240. Խաղաղ հավաքների իրավունքի իրացման կոնկրետ կառուցակարգեր նախատեսվեցին 2004թ. ապրիլի 28-ին ընդունված «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի 1-ին հոդվածն ամրագրում է. «Սույն օրենքի նպատակը Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով ամրագրված՝ ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և իրավաբանական անձանց խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է: Այս իրավունքի իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակական անվտանգության, անկարգությունները և հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսելուն ոստիկանության և պետական մարմինների կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ»:

Օրենքով մանրամասն կարգավորվում են հրապարակային միջոցառումներ անցկացնողների իրավունքներն ու պարտականությունները, լիազոր մարմինների և ոստիկանության լիազորությունները, հրապարակային միջոցառումների կազմակերպման և անցկացման սահմանափակումները, հրապարակային միջոցառումների մասին իրազեկման կարգը և այլն:

Օրենքում նշվում է, որ զանգվածային հրապարակային միջոցառումներ կարող են անցկացվել միայն լիազոր մարմին գրավոր իրազեկելուց հետո: Կազմակերպիչներն իրազեկում են զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման վայրի համայնքի ղեկավարին, Երևանում՝ Երևանի քաղաքապետին, իրազեկումը համարվում է օրինական և քննարկման ենթակա, եթե ներկայացված է միջոցառումն անցկացնելու նախատեսված օրվանից ոչ ուշ քան 3 աշխատանքային

օր առաջ, և ոչ շուտ, քան 20 օր առաջ: Եթե զանգվածային հրապարակային միջոցառումն անցկացվելու է երթի ձևով, ապա պետք է իրազեկվեն երթի անցկացման բոլոր տարածքների լիազոր մարմինները:

Իրազեկման քննարկմանն իրավունք ունեն մասնակցելու նաև կազմակերպիչները, որի արդյունքում, եթե բացակայում են զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման արգելման հանգամանքները, իրազեկումն ընդունվում է ի գիտություն, իսկ արգելման հանգամանքների առկայության դեպքում որոշում է կայացվում զանգվածային հրապարակային միջոցառումն արգելելու մասին:

Լիազոր մարմինն իրազեկման քննարկման արդյունքում ընդունած իր որոշման մասին անմիջապես հայտնում է կազմակերպիչներին և ոստիկանությանը:

Հարյուրից ավելի մասնակիցներով անցկացվող հանրահավաքները, երթերը, ցույցերը համարվում են զանգվածային միջոցառում, որոնց ընթացքում հասարակական կարգի և անվտանգության ապահովման ուղղությամբ ոստիկանության աշխատակիցները պետք է առաջնորդվեն «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքով: Ոստիկանության իրավունքները սահմանված են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով, իսկ ոստիկանության գործողությունների հաջորդականությունը և գործառնության պարտականությունները՝ «Պարեկապահակետային ծառայության կանոնագրքով»:

241. «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով սահմանվում է պատասխանատվություն օրենքի պահանջների խախտման համար. 1. «Պետությունը կամ համայնքը պարտավոր է փոխհատուցել իր մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից հրապարակային միջոցառման կամ այլ միջոցառման անցկացումն ապօրինի արգելելու և հրապարակային միջոցառման կամ այլ միջոցառման ապօրինի դադարեցման հետևանքով դրանց կազմակերպիչներին և մասնակիցներին հասցված իրական վնասը»:

Հրապարակային միջոցառումն իրականացնելուն ապօրինի խոչընդոտելու, միջոցառմանը միջամտելու կամ միջոցառումը դադարեցնելու համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

Սակայն, օրենքով պատասխանատվություն է նախատեսված նաև Օրենքի պահանջների խախտմամբ անցկացված հրապարակային միջոցառման կամ այլ միջոցառման կազմակերպիչների կամ դա դադարեցնելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարած կազմակերպիչների և մասնակիցների համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածով քրեական հանցագործություն է համարվում օրինական ժողովներ, հանրահավաքներ, երթեր կամ ցույցեր անցկացնելուն կամ դրանց մասնակցելուն խոչընդոտելը կամ դրանց, ինչպես նաև ժողովներին, հանրահավաքներին, երթերին կամ ցույցերին մասնակցելուն բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով հարկադրելը, իսկ

225.1 հողվածով քրեականացված է օրենքով սահմանված կարգի խախտմամբ հրապարակային միջոցառում կազմակերպելը և անցկացնելը:

242. Թեև օրենքը դրական գնահատականի էր արժանացել ԵՄ Վենետիկի հանձնաժողովի կողմից, սակայն գործնականում ծագեցին որոշ վիճելի հարցեր, հատկապես 2008թ. նախագահական ընտրությունների ժամանակահատվածում անցկացվող հավաքների ընթացքում: Մասնավորապես, Օրենքում չէր տրվում «ինքնաբուխ հրապարակային միջոցառում» հասկացության սահմանումը, ինչը հիմք հանդիսացավ ընդդիմության կողմից կազմակերպված, իրավական առումով վիճելի հանրահավաքների համար: Օրենքում կատարված վերջին փոփոխությամբ սահմանվեց, որ ինքնաբուխ հրապարակային միջոցառումը կոնկրետ երևույթի կամ իրադարձության կապակցությամբ անհապաղ արձագանքման անհրաժեշտություն ունեցող՝ մինչ այդ երևույթը կամ իրադարձությունը չհայտարարված խաղաղ հրապարակային միջոցառումն է: Միաժամանակ սահմանվեց, որ ինքնաբուխ զանգվածային հրապարակային միջոցառումը չի կարող տևել վեց ժամից ավելի, ինչպես նաև նույն երևույթի կամ իրադարձության առնչությամբ անցկացվող ցանկացած հաջորդող զանգվածային միջոցառում չի կարող ինքնաբուխ համարվել և պետք է անցկացվի իրազեկման սահմանված ընթացակարգով:

243. 2008թ. մարտի 17-ին օրենքում կատարվեց փոփոխություն, որը հանգեցնում էր այս իրավունքի որոշակի սահմանափակումների. ««Այն դեպքերում, երբ զանգվածային հրապարակային միջոցառումները վերածվել են զանգվածային անկարգությունների, որոնք հանգեցրել են մարդկային զոհերի, նոր հանցագործությունների կանխման նպատակով լիազոր մարմինը կարող է ժամանակավորապես արգելել զանգվածային հրապարակային միջոցառումների անցկացումը մինչև հանցագործությունների հանգամանքների և հանցանք կատարած անձանց բացահայտումը» (հոդված 13, 6-րդ մաս): 2008 թվականի հունիսի 11-ի ՀՀ Ազգային ժողովի կողմից նախատեսված սահմանափակումը վերացվեց:

Հոդված 22

1. Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու ազատության իրավունք, ներառյալ՝ արհմիություններ ստեղծելու և իր շահերի պաշտպանության նպատակով դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այդ իրավունքի իրականացումը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսվում են օրենքով, և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հանրային անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության, կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության: Սույն հոդվածը չի խոչընդոտում այդ իրավունքի իրականացման օրինական սահմանափակումների կիրառումն այն անձանց համար, ովքեր մտնում են զինված ուժերի և ոստիկանության կազմի մեջ:

3. Սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս միավորումներ կազմելու ազատության և կազմակերպվելու իրավունքի պաշտպանության վերաբերյալ Աշխատանքի միջազգային կազմակերպության 1948թ. կոնվենցիայի մասնակից պետություններին՝ ընդունելու Կոնվենցիայով նախատեսվող երաշխիքներին ի վնաս օրենսդրական ակտեր կամ օրենքը կիրառելու ի վնաս այդ երաշխիքներին:

244. Հասարակական քաղաքական միավորումների ստեղծումը և դրանց գործունեության կարգը սահմանվում են 1991թ. ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին», 2001թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» և 2003թ. հուլիսի 3-ին ընդունված «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքներով: Միավորումների գրանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են 2001թ. ապրիլի 3-ին ընդունված «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով և վերը նշված օրենքներով:

245. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հասարակական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝ հասարակական միավորման տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքները և շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով: Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպությունը կարող է ստեղծվել հիմնադիրների կողմից հիմնադրվելու կամ հասարակական միավորման որևէ կազմակերպական-իրավական տեսակ ունեցող կազմակերպության (կազմակերպությունների) վերակազմակերպման հետևանքով: Կազմակերպությունն ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Իսկ օրենքի 12-րդ հոդվածով սահմանվում է հասարակական կազմակերպության պետական գրանցման առանձնահատկությունները: Հայաստանում կա 3000-ից ավելի գրանցված հասարակական կազմակերպություն, որոնցից ոչ բոլորն են ակտիվորեն գործում:

246. Տալով կուսակցության հասկացությունը՝ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ կուսակցությունը անհատական անդամության հիման վրա ստեղծված հասարակական միավորում է, որի գործունեության նպատակը հասարակության և պետության քաղաքական կյանքին մասնակցելն է: Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն պետական գրանցման պահին կուսակցությունը պարտավոր է ունենալ ոչ պակաս, քան 200 անդամ: Կուսակցությունը պարտավոր է ունենալ տարածքային ստորաբաժանումներ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն 1/3-ում, ներառյալ՝ Երևանում: Պետական գրանցման պահից ոչ ուշ, քան վեց ամիս հետո, կուսակցությունը պետք է ունենա ոչ պակաս, քան 2000 անդամ, ընդ որում, Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում ոչ պակաս, քան 100 անդամ: Օրենքի 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներն համապատասխանաբար անդրադառնում են կուսակցությունների ստեղծման ձևերին, հիմնադիր համագումարի անցկացմանը և կուսակցությունների պետական գրանցման առանձնահատկություններին:

Հայաստանում գրանցված է 74 քաղաքական կուսակցություն, որոնցից հինգը, 2007թ.-ին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում, ներկայացված են Ազգային ժողովում: Դրանք են՝ Հայաստանի հանրապետական կուսակցություն, Բարգավաճ Հայաստան, Հայ հեղափոխական դաշնակցություն, Օրինաց երկիր, Ժառանգություն կուսակցությունները:

247. Միավորումներ կազմելու իրավունքը ամրագրող ՀՀ Սահմանադրության 28-րդ (նախկինում 25-րդ) հոդվածը լրացվել է նոր պարբերությամբ, որում ասվում է՝ «Կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ:

Միավորումներ կազմելը կանոնակարգվում է նաև 2004 թվականի նոյեմբերի 9-ին ընդունված և ՀՕ-140-Ն, 03.08.05, ՀՕ-210-Ն, 25.11.05, ՀՕ-22-Ն, 14.01.06. ՀՕ-23-Ն, 14.01.06, ՀՕ-39-Ն, 27.02.06 օրենքներով փոփոխված և լրացված ՀՀ աշխատանքային օրենսգրքով (ՀՀ ԱՕ), որի հոդված 21-ի համաձայն «Իրենց իրավունքների ու շահերի պաշտպանության և ներկայացման նպատակով գործատուները և աշխատողները կարող են օրենքով սահմանված կարգով իրենց կամքով ազատորեն միավորվել՝ ստեղծելով արհեստակցական ու գործատուների միություններ»:

248. «Արհեստակցական միություններն աշխատողների աշխատանքային, մասնագիտական, տնտեսական և սոցիալական իրավունքներն ու շահերը պաշտպանելիս ղեկավարվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով, արհեստակցական միությունների գործունեությունը կարգավորող օրենքներով և իրենց կանոնադրություններով:» (ՀՀ ԱՕ՝ հոդված 24):

249. 2000թ. դեկտեմբերի 5-ին ընդունվել է «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքը, որը փոփոխվել է 2006թ. նոյեմբերի 13-ի ՀՕ-171-Ն օրենքով, ըստ որի (4-րդ և 5-րդ հոդվածներ) արհեստակցական կազմակերպությունը հիմնադրվում է նրա հիմնադիրների (առնվազն երեք

աշխատողի) նախաձեռնությամբ հրավիրված հիմնադիր ժողովի (համաժողովի, համագումարի) որոշմամբ:

Հիմնադիր ժողովը հաստատում է կազմակերպության կանոնադրությունը, ընտրում է ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններ:

Երկու և ավելի արհեստակցական կազմակերպություններ և (կամ) արհեստակցական կազմակերպությունների միություններ իրենց ներկայացուցիչների ժողովի (համաժողովի, համագումարի) որոշմամբ կարող են հիմնադրել արհեստակցական կազմակերպությունների մեկ միություն՝ հաստատելով նրա կանոնադրությունը և ընտրելով ղեկավար ու վերահսկողություն իրականացնող մարմիններ:

Արհեստակցական կազմակերպությունների հանրապետական և ճյուղային հանրապետական միություններն իրավունք ունեն իրենց անվանման մեջ օգտագործել «Հայաստանի Հանրապետություն» անվանումը կամ դրա հապավումը:

Համաձայն «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 9.1. հոդվածի, արհեստակցական միության պետական գրանցումը, վերագրանցումը, ինչպես նաև կանոնադրության փոփոխությունների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության գրանցումը և լուծարման պետական գրանցումն իրականացվում են սույն օրենքով և իրավաբանական անձանց պետական գրանցման համար օրենքով սահմանված կարգով:

Արհեստակցական միության պետական գրանցման նպատակով պետական գրանցման մարմին են ներկայացվում համապատասխան դիմում և օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր:

Պետական գրանցման մարմինը արհեստակցական միության գրանցման մասին դիմումն ու պահանջվող փաստաթղթերը ընդունելու մասին հաշվառման գրանցամատյանում գրառում կատարելուց հետո՝ 30-օրվա ընթացքում, պարտավոր է քննարկել դիմումը և գրանցել արհեստակցական միությունը կամ համապատասխան հիմնավորումներով մերժել արհեստակցական միության գրանցումը: Արհեստակցական միության պետական գրանցումը կարող է մերժվել օրենքով սահմանված կարգով և դեպքում:

Նույն օրենքի հոդված 13-ի համաձայն արհեստակցական միությունն անկախ է պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, գործատուներից, այլ կազմակերպություններից և կուսակցություններից, նրանց հաշվետու չէ և նրանց կողմից վերահսկողության ենթակա չէ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, գործատուներին, այլ կազմակերպություններին և ֆիզիկական անձանց արգելվում է խոչընդոտել կամ միջամտել արհեստակցական միության կանոնադրությամբ սահմանված իրավունքների իրականացմանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

250. Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կազմում այսօր գործում են 24 հանրապետական ճյուղային միություններ (անդամ կազմակերպություն), 726 արհեստակցական կազմակերպություններ:

Արհեստակցական կազմակերպություններում ընդգրկված են 278949 արհմիության անդամներ:

251. «Գործատուների միության գործունեությունը կարգավորվում է աշխատանքային օրենսգրքով, օրենքով և իր կանոնադրությամբ:» (ՀՀ ՍՕ հոդված 27):

252. 2007թ. փետրվարի 27-ին ընդունված «Գործատուների միությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի համաձայն՝ «Գործատուներն իրավունք ունեն կամավոր հիմունքներով ստեղծելու գործատուների միություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, արհեստակցական միությունների, աշխատողների կոլեկտիվների և աշխատողների հետ փոխհարաբերություններում իրենց անդամների իրավունքները պաշտպանելու, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի մշակման և քննարկման գործընթացում ու աշխատանքային և դրա հետ անմիջականորեն կապված սոցիալ – տնտեսական հարաբերություններում նրանց օրինական շահերը ներկայացնելու նպատակով:

Գործատուների միությունը ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որը միավորում է գործատու կազմակերպություններին և գործատու քաղաքացիներին:»:

2009 թվականի ապրիլի 27-ին ՀՀ կառավարությունը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան և Հայաստանի գործատուների հանրապետական միությունը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն, ստորագրել են Հանրապետական կոլեկտիվ պայմանագիր, որով սահմանվում են սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կարգավորման լրացուցիչ երաշխիքներ և Կողմերի համատեղ գործողությունները դրանց իրականացման համար: Կոլեկտիվ պայմանագիրը կնպաստի սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կայուն զարգացմանը՝ ուղղված երկրում զբաղվածության արդյունավետ ապահովմանը, արժանապատիվ աշխատանքի խրախուսմանը, սոցիալական գործընկերության և համերաշխության կայացմանն ու զարգացմանը: Պայմանագիրը միտված է նաև աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում սոցիալական գործընկերների հնարավորինս լայն մասնակցության ապահովմանը, ինչպես նաև գործատուների և արհմիությունների ինստիտուցիոնալ և գործառնական կարողությունների զարգացմանը: Պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովման նպատակով ձևավորվել է հանձնաժողով՝ կողմերի ներկայացուցիչների հավասար թվաքանակով մասնակցային սկզբունքով: Հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը կգործի մինչև 2012թ. հունիսի 30-ը:

Հոդված 23

1. Ընտանիքը հասարակության բնական ու հիմնարար խմբային միավորն է և ունի հասարակության ու պետության կողմից պաշտպանվելու իրավունք:

2. Ամուսնության տարիքի հասած տղամարդկանց և կանանց համար ճանաչվում է ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը:

3. Ոչ մի ամուսնություն չի կարող կայանալ առանց ամուսնացողների ազատ ու լիակատար համաձայնության:

4. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ձեռնարկում են պատշաճ միջոցներ՝ ապահովելու ամուսինների իրավունքների և պարտականությունների հավասարությունն ամուսնության պահին, ամուսնության ընթացքում և ամուսնալուծվելիս: Ամուսնալուծության դեպքում պետք է նախատեսվի երեխայի անհրաժեշտ պաշտպանություն:

253. Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար:

254. Սահմանադրության 35-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է:

255. Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներից է պաշտպանել և հովանավորել ընտանիքը, մայրությունը և մանկությունը:

256. 2004 թվականի նոյեմբերի 9-ին ընդունվել է ՀՀ ընտանեկան օրենսգրքը: Օրենսգրքի համաձայն՝ ընտանիքը, մայրությունը, հայրությունը և մանկությունը Հայաստանի Հանրապետությունում հասարակության ու պետության հովանավորության և պաշտպանության ներքո են:

257. Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք:

Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից:

Ամուսնությունը կնքվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ամուսնացող անձանց պարտադիր ներկայությամբ:

Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծագում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնության պետական գրանցման պահից:

Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական տարիքի՝ կանանց համար՝ տասնյոթ, իսկ տղամարդկանց համար՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը:

258. Արգելվում է ամուսնության կնքումը սույն օրենսգրքի 11-րդ հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Արգելվում է ամուսնություն կնքել՝

ա) այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկը գտնվում է օրենքով սահմանված կարգով գրանցված մեկ այլ ամուսնության մեջ.

բ) մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև.

զ) որդեգրողների և որդեգրվածների միջև.

դ) այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկին դատարանը ճանաչել է անգործունակ:

259. Ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև դատական կարգով:

Ամուսինների միջև ամուսնալուծվելու վերաբերյալ փոխադարձ համաձայնության առկայության դեպքում նրանց ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում:

Ամուսիններից մեկի դիմումի հիման վրա ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում, եթե մյուս ամուսինը՝

ա) դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող.

բ) դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ.

գ) դատապարտվել է ազատազրկման՝ երեք տարուց ոչ պակաս ժամկետով:

Ամուսինների ընդհանուր գույքի բաժանման, անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոցը հոգալու վերաբերյալ վեճերը, ինչպես նաև երեխաների պատճառով ամուսինների միջև ծագող վեճերը քննարկվում են դատական կարգով՝ անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնությունը լուծելուց՝ սույն օրենսգրքի 17-րդ հոդվածով սահմանված կարգով:

Դատական կարգով ամուսնալուծվելիս, ինչպես նաև անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնալուծվելիս ամուսինները կարող են դատարան ներկայացնել համաձայնություն այն մասին, թե նրանցից ում հետ են ապրելու երեխաները, երեխաներին և (կամ) անաշխատունակ անապահով ամուսնուն պահելու համար ապրուստի միջոցները հոգալու կարգի, այդ միջոցների չափերի կամ ամուսինների ընդհանուր գույքի բաժանման մասին:

260. Ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է՝

ա) որոշել, թե ամուսնալուծությունից հետո ծնողներից ում հետ պետք է ապրեն երեխաները,

բ) որոշել, թե որ ծնողից և ինչ չափով պետք է ալիմենտ (ապրուստավճար) բռնագանձվի,

գ) ամուսինների (ամուսիններից մեկի) պահանջով կատարել նրանց ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանումը,

դ) ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեցող մյուս ամուսնու պահանջով որոշել այդ միջոցների չափը:

Եթե գույքի բաժանումը շոշափում է երրորդ անձանց շահերը, ապա դատարանը կարող է գույքի բաժանման մասին պահանջն առանձնացնել որպես առանձին վարույթ:

261. Ամուսիններից յուրաքանչյուրն ազատ է աշխատանք, զբաղմունք, մասնագիտություն, բնակության վայր ընտրելու հարցում:

Մայրության, հայրության, երեխաների դաստիարակության և կրթության, ինչպես նաև ընտանեկան կյանքի այլ հարցեր ամուսինները համատեղ լուծում են՝ ելնելով ամուսինների իրավահավասարության սկզբունքից:

Ամուսիններն ընտանիքում պարտավոր են իրենց հարաբերությունները կառուցել փոխադարձ օգնության և հարգանքի վրա, նպաստել ընտանիքի ամրությանը, հոգ տանել իրենց երեխաների բարեկեցության ու զարգացման համար:

Ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրով:

Ամուսնական պայմանագիրը ամուսնացող անձանց համաձայնությունն է կամ ամուսինների համաձայնությունը, որով որոշվում են ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները ամուսնության և (կամ) այն լուծվելու ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված պայմանագրով:

Մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է:

Անհատական օգտագործման գույքը (հագուստը, կոշիկը և այլն), բացառությամբ թանկարժեք իրերի և պերճանքի առարկաների, եթե նույնիսկ այն ձեռք է բերվել ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր միջոցների հաշվին, համարվում է այն ամուսնու սեփականությունը, որն այդ գույքն օգտագործել է:

Ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ճանաչվել նրանց համատեղ սեփականություն, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք նշանակալի չափով ավելացրել են այդ գույքի արժեքը (հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերամարքավորում և այլն), եթե այլ բան նախատեսված չէ ամուսինների միջև կնքված պայմանագրով:

Ամուսիններից մեկի պարտավորությունների համար կարող է բռնագանձում տարածվել նրա սեփականության ներքո գտնվող գույքի, ինչպես նաև ամուսինների ընդհանուր գույքում նրա բաժնի վրա:

Հոդված 24

1. Յուրաքանչյուր երեխա, առանց ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության կամ ծննդի հատկանիշով որևէ խտրականության, իրավունք ունի իր ընտանիքի, հասարակության և պետության կողմից

պաշտպանվածության այնպիսի միջոցների, որոնք անհրաժեշտ են նրան որպես անչափահասի:

2. Յուրաքանչյուր երեխա ծնվելուց անմիջապես հետո պետք է գրանցվի և ունենա անուն:

3. Յուրաքանչյուր երեխա ունի քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

262. Հայաստանի Հանրապետությունն, առաջնային համարելով երեխաների խնդիրները, մշակել է 2004-2015 թվականների երեխայի իրավունքների պաշտպանության ազգային ծրագիր: Այն հստակորեն սահմանում է այն մեխանիզմները, որոնց միջոցով հնարավոր է ի կատար ածել երեխաների հանդեպ ստանձնած պարտավորությունները: Ազգային ծրագրում սահմանվում են խնդիրները և առաջարկվում կոնկրետ միջոցառումներ, որոնք պետք է իրականացվեն պետական կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և այլ համակարգերի միջոցով: Վերոհիշյալ ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ N1745-Ն որոշմամբ:

263. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային կարևորագույն փաստաթղթերը, որոնք առանձին դրույթներ են բովանդակում նաև երեխայի իրավունքների մասին: Բացի այդ, մեր պետության կողմից վավերացվել են նաև երեխայի իրավունքներին ուղղակիորեն առնչվող մի շարք կարևոր Կոնվենցիաներ, որպիսիք են՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, Կոնվենցիային կից՝ Զինված հակամարտություններին երեխաների մասնակցության և մանկավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությունները:

«Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցման մասին» Հաագայի 1980թ., Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի 1993թ. կոնվենցիան, «Ծնողական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցառումների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին» Հաագայի 1996թ. կոնվենցիան և այլն:

Ստանձնած միջազգային պարտավորությունների համապատասխան, ՀՀ-ի կողմից ընդունվել են երեխայի իրավունքներին առնչվող մեծ թվով օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, կատարվել են համապատասխան փոփոխություններ ու լրացումներ գործող իրավական ակտերում:

Երեխայի իրավունքների պաշտպանության հիմնաքարը ՀՀ Սահմանադրությունն է, որի 36-րդ հոդվածով սահմանվում է. «Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ՝ Օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը մանրամասն անդրադառնում է երեխայի իրավունքների ոլորտին առնչվող հիմնարար խնդիրներին:

264. «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է 29.05.1996 թվականին, 4-րդ հոդվածով ամրագրում է բոլոր երեխաների իրավահավասարությունը. «Երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից»:

Նույն օրենքի 10-րդ հոդվածը շեշտում է «Երեխայի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը»՝ մասնավորապես «Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք:

Երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքը արժանի են նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության»:

265. 2002թ. սեպտեմբերի 24-ին ընդունվել է «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը: Օրենքի գործողությունը տարածվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների (18 տարին չլրացած), ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձանց վրա:

Օրենքի նպատակն է իրականացնել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականություն՝ այն է՝ ապահովել այդպիսի երեխաների՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, նրանց իրավունքների խախտման դեպքում՝ վերականգնել դրանք, չթույլատրել նրանց նկատմամբ որևէ խտրականություն, նպաստել այդ երեխաների ֆիզիկական, մտավոր, հոգևոր զարգացմանը և հասարակության մեջ նրանց ինտեգրմանը, կանխարգելել սոցիալական դժվարությունների առաջացումը:

Հիշյալ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանությունը սոցիալական ապահովության պետական քաղաքականության առաջնահերթ խնդիրներից է:

Օրենքի 9-րդ հոդվածին համապատասխան՝ 2003թ. հուլիսի 23-ի թիվ 983-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգ:

266. 2001թ. դեկտեմբերի 29-ի ՀՀ կառավարության որոշմամբ հիմնադրվել է «Աջակցություն երեխաներին» հիմնադրամը, որի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը: Հիմնադրամի գործունեության հիմնական նպատակներից է առանց ծնողական խնամքի մնացած (որբ, մուրացկան, թափառաշրջիկ և այլն), ինչպես նաև բնածին, ֆիզիկական և մտավոր արատներ ունեցող երեխաներին ընտանիքներում տեղավորելուն աջակցելը, նրանց հանգիստը, ուսուցումը և բուժումը կազմակերպելը, երեխաների համար և նրանց մասնակցությամբ համերգներ, ցուցահանդեսներ, սեմինարներ կազմակերպելը, աշխատանքային

գրադվածությունն ապահովելը (աշխատանքային տարիք ունեցողների, ուսուցմանը և պաշտպանությունն ուղղված հրատարակչական, քարոզչական և տեղեկատվական գործունեության իրականացնելը):

267. Երեխայի իրավունքների պաշտպանության նպատակով հիմնադրվել են մի շարք կառույցներ հանրապետական և տեղական մակարդակներով (այդ թվում՝ Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով, մարզպետարաններում (Երևանի քաղաքապետարանում) երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, տեղական ինքնակառավարման մարմիններում խնամակալության և հոգաբարձության մարմիններ:

268. 2003թ. նոյեմբերի 27-ի թիվ 1654-Ն որոշմամբ ՀՀ կառավարության կողմից հաստատվել է երեխաների խնամքի հարցերով զբաղվող հաստատությունների բարեփոխման պետական ռազմավարական ծրագիր:

269. Պետության հատուկ պաշտպանության և հոգաձության լավագույն իրականացման նպատակով 2006թ. հունվարի 12-ի թիվ 206-Ն որոշմամբ հաստատվել է Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010 թվականների ռազմավարությունը, իսկ 2007թ. նոյեմբերի 8-ի թիվ 1288-Ն որոշման համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրի մշակման կարգը:

270. 2008թ. մայիսի 8-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է նաև երեխային խնամատար ընտանիքի հանձնելու կարգը, յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների և երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողների վարձատրության վճարման կարգն ու չափը:

271. ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ գլխով սահմանվում են ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները:

272. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 49-րդ հոդվածով սահմանվում է պետական գրանցման ենթակա քաղաքացիական կացության ակտերը, որոնցից առաջինը ծնունդն է, որը կատարում են քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մատյաններում (ակտերի գրքեր) համապատասխան գրառումներ կատարելու և այդ գրառումների հիման վրա քաղաքացիներին վկայականներ տալու միջոցով:

Քաղաքացիական օրենսգրքի 22-րդ հոդվածով ասվում է, որ քաղաքացին իրավունքներ և պարտականություններ է ձեռք բերում ու իրականացնում իր անվամբ, որը ներառում է նրա ազգանունը և անունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը (1-ին մաս): 3-րդ մասով սահմանվում է, որ ծննդյան ժամանակ քաղաքացու ստացած անունը, ինչպես նաև նրա անվան փոփոխությունը ենթակա են գրանցման՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար սահմանված կարգով:

273. Ընտանեկան օրենսգրքի 45-րդ հոդվածով նախատեսվում է, որ երեխան ունի անուն, հայրանուն և ազգանուն ունենալու իրավունք:

Երեխային անուն տրվում է ծնողների համաձայնությամբ, իսկ հայրանուն տրվում է հոր անունով՝ սույն Օրենսգրքով նախատեսված կարգով (45-րդ հոդված 2-րդ մաս):

Երեխայի ազգանունը որոշվում է ծնողների ազգանունով: Եթե ծնողները կրում են տարբեր ազգանուններ, ապա երեխային ծնողների համաձայնությամբ տրվում է հոր կամ մոր ազգանունը (45-րդ հոդված 3-րդ մաս):

Ծնողների միջև երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունները լուծում է խնամակալության և հոգաբարձության մարմինը (45-րդ հոդված 4-րդ մաս):

Եթե երեխայի հայրությունը չի որոշվել, ապա նրան անուն է տրվում մոր ցուցումով, հայրանուն՝ որպես երեխայի հայր գրառված անձի անունով, ազգանուն՝ մոր ազգանունով (45-րդ հոդված 5-րդ մաս):

274. Քաղաքացիության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով (ընդունված 1995թ. նոյեմբերի 6-ին), որի 11-12-րդ հոդվածներով կարգավորվում են երեխաների քաղաքացիության հարցերը:

275. ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանվում է քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքը, ըստ որի քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը: Այն անձինք, որոնց տասնչորս տարին լրացել է մինչև հանցանքը կատարելը, ենթակա են քրեական պատասխանատվության սպանության (104-108-րդ հոդվածներ), դիտավորությամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու (112-116-րդ հոդվածներ), մարդուն առևանգելու (131-րդ հոդված), բռնաբարության (138-րդ հոդված), սեքսուալ բնույթի բռնի գործողությունների (139-րդ հոդված), ավազակության (175-րդ հոդված), գողության (177-րդ հոդված), կողոպուտի (176-րդ հոդված), շորթման (182-րդ հոդված), առանց հափշտակելու նպատակի ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալու (183-րդ հոդված), ծանրացուցիչ հանգամանքներում գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու (185-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասեր), զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու (238-րդ հոդված), թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր հափշտակելու կամ շորթելու (269-րդ հոդված), տրանսպորտային միջոցները կամ հաղորդակցության ուղիները փչացնելու (246-րդ հոդված), խուլիգանության (258-րդ հոդված) համար: Եթե անձը հասել է քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ընդունակ չի եղել ամբողջ չափով գիտակցել իր արարքի բնույթն ու նշանակությունը կամ դեկավարել դա, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության:

276. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն տասնվեց տարին լրացած անչափահասը կարող է լրիվ գործունակ ճանաչվել, եթե նա աշխատում է աշխատանքային պայմանագրով կամ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ զբաղվում է ձեռնարկատիրական

գործունեությամբ: Անչափահասին լրիվ գործունակ ճանաչելը (Էմանսիպացիա) կատարվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման հիման վրա՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի վճռով: Ծնողները, որդեգրողները և հոգաբարձուն պատասխանատվություն չեն կրում լրիվ գործունակ ճանաչված անչափահասի պարտավորությունների, մասնավորապես նրա կողմից պատճառված վնասի հետևանքով առաջացած պարտավորությունների համար: Օրենսգրքի 29-րդ հոդվածի համաձայն տասնչորս տարեկան չդարձած անչափահասների (փոքրահասակների) փոխարեն գործարքները, բացառությամբ հոդվածի 2-րդ կետում նշվածների, նրանց անունից կարող են կնքել միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները: Վեցից մինչև տասնչորս տարեկան փոքրահասակներն իրավունք ունեն ինքնուրույն կնքել մանր կենցաղային գործարքներ, նոտարական վավերացում կամ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում չպահանջող՝ անհատույց օգուտներ ստանալուն ուղղված գործարքներ, օրինական ներկայացուցչի կամ վերջինիս համաձայնությամբ երրորդ անձանց կողմից որոշակի նպատակով կամ ազատորեն տնօրինելու համար տրամադրված միջոցները տնօրինելու գործարքներ: Փոքրահասակի գործարքներով՝ ներառյալ նրա կողմից ինքնուրույն կնքված գործարքները, գույքային պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չապացուցեն, որ պարտավորությունն իրենց մեղքով չի խախտվել: Այդ անձինք, օրենքին համապատասխան, պատասխանատվություն են կրում նաև փոքրահասակի պատճառած վնասի համար:

277. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, աշխատանքային իրավունակությունը և իր գործողություններով աշխատանքային իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար աշխատանքային պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (աշխատանքային գործունակություն) լրիվ ծավալով ծագում է տասնվեց տարեկան դառնալու պահից:

Օրենսգրքի 17-րդ հոդվածը, տալով աշխատողի սահմանումը, նշում է, որ աշխատող են համարվում նաև ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անչափահաս քաղաքացիները: Մինչև տասնչորս տարեկան քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագիր կնքելը կամ նրանց աշխատանքի ներգրավելը արգելվում է: Օրենսգրքի 257-րդ հոդվածով նախատեսվում է, որ մինչև տասնութ տարեկան անձինք չեն կարող ներգրավվել կատարելու ծանր աշխատանքներ, թունավոր, քաղցկեղածին կամ առողջության համար վտանգավոր գործոնների ազդեցությամբ արտադրություններում աշխատանքներ, աշխատանքներ, որոնց կատարման ժամանակ հնարավոր է իոնացած ռադիացիայի ազդեցությունը, աշխատանքներ, որոնց կատարման ժամանակ առկա է դժբախտ պատահարների կամ մասնագիտական հիվանդություններով հիվանդանալու մեծ հավանականություն, ինչպես նաև աշխատանքներ, որոնց անվտանգ իրականացումը պահանջում է բարձր զգոնություն կամ փորձառություն:

278. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ գլխով սահմանվում են անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները, որոնք կիրառվում են այն անձանց հանցագործությունների վերաբերյալ գործերով, ում տասնութ տարին չի լրացել հանցանքը կատարելու պահին:

279. 2004թ. ընդունված ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածն ամրագրում է, որ ուղղիչ հիմնարկներում անչափահաս դատապարտյալները անջատ են պահվում չափահասներից: 109-րդ հոդվածով սահմանվում է անչափահաս դատապարտյալի պատիժը կրելու առանձնահատկությունները, համաձայն որի որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անչափահասը մինչև պատժի ժամկետը լրանալը պատիժը կրում է միննույն ուղղիչ հիմնարկում, բայց ոչ ավելի, քան նրա քսանմեկ տարեկան դառնալը: Տասնութ տարին լրացած դատապարտյալի՝ բացասական վարքագիծ դրսևորելու դեպքում հոդվածի 1-ին մասով նախատեսված առանձնահատկությունը չի գործում: Արգելվում է որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անչափահասի պատիժը կրելու նպատակով փակ ուղղիչ հիմնարկ ուղարկելը:

280. Երեխաների իրավունքների պաշտպանության խնդիրները նաև գտնվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո: Այս ոլորտին առնչվող խնդիրների վերաբերյալ 2008թ. ընթացքում Պաշտպանին հասցեագրվել է 11 դիմում-բողոք: Դրանք հիմնականում վերաբերել են ալիմենտի վճարման վերաբերյալ դատական ակտերի կատարման դժվարություններին, միմյանցից առանձին ապրող ծնողների կողմից երեխայի հանդեպ ունեցած իրենց իրավունքները չարաշահելու դեպքերին, խնամակալության և հոգաբարձության մարմինների գործողություններին (անգործությանը)՝ երեխայի խնամքը ծնողներից որևէ մեկին հանձնելու, ծնողներից որևէ մեկի մոտ երեխայի մնալու նպատակահարմարությունը որոշելու և երեխայի կապակցությամբ այլ վեճերի առնչությամբ նրանց տված եզրակացություններից և որոշումներից դժգոհություններին:

Պաշտպանի գրասենյակը չի բավարարվում միայն իրենց հասցեագրած սակավաթիվ դիմում-բողոքների քննարկմամբ, այլև սեփական նախաձեռնությամբ սկսել է երեխայի իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության ուսումնասիրության և դրա կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկների մշակման գործընթաց: Առաջին արդյունքներն արտացոլվել են 2008 թվականի «Երեխայի իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության մեջ առկա որոշ խնդիրների վերաբերյալ» Պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցում:

Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները պարբերաբար այցելություններ են կատարում երեխաների խնամքի ու դաստիարակության տարբեր հաստատություններ, կանանց և անչափահասների գաղութ, ծանոթանում տիրող իրավիճակին, պայմաններին:

Հոդված 25

*Յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրակա-
նության ու անհիմն սահմանափակումների, իրավունք և հնարավորություն ունի:*

ա) մասնակցելու պետական գործերը վարելուն՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով,

բ) ընտրելու և ընտրվելու իրական պարբերական ընտրություններում, որոնք անցկացվում են համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ և երաշխավորում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը,

գ) իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնելու պետական ծառայության:

281. ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

282. Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

283. Սահմանադրության 30-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք:

Օրենքով կարող է սահմանվել ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները:

Ընտրական հարաբերություններին վերաբերող վերոհիշյալ հիմնարար դրույթների լույսի ներքո ՀՀ ազգային ժողովի կողմից 05.02.1999թ. ընդունվել է ՀՀ ընտրական նոր օրենսգիրքը, իսկ 12.09.2001թ.՝ «Հանրաքվեի մասին» ՀՀ նոր օրենքը, որոնք նշված սահմանադրական երաշխիքները լիիրավ ապահովելու ճանապարհին բազմաթիվ անգամ ենթարկվել են լրացումների և փոփոխությունների:

ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանվում է, որ ՀՀ-ում ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նաև համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուր ոք: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ Օրենսգրքով ՀՀ քաղաքացիների համար նախատեսված իրավունքներն ու պարտականությունները տարածվում են նաև ՀՀ

քաղաքացիություն չունեցող ընտրական իրավունքով օժտված անձանց վրա: ՀՀ և միաժամանակ այլ պետության քաղաքացի հանդիսացող և ՀՀ-ում հաշվառում ունեցող քաղաքացիները ընտրությունների ժամանակ քվեարկություններին մասնակցում են օրենսգրքով սահմանված կարգով:

284. Ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքի ղեկավար կարող է ընտրվել 25 տարին լրացած, առնվազն մեկ տարի տվյալ համայնքի բնակիչ համարվող ՀՀ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի:

Համայնքի ղեկավարը պետք է ունենա միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն կրթություն:

Իսկ «ՀՀ ընտրական օրենսգրքի» համաձայն՝ համայնքի ղեկավար կարող է ընտրվել 25 տարին լրացած, տվյալ համայնքում, Երևան քաղաքի թաղային համայնքներում՝ Երևան քաղաքում առնվազն վերջին երկու տարվա հաշվառում ունեցող՝ ՀՀ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի, ինչպես նաև սույն օրենսգրքի 2-րդ հոդվածով նախատեսված անձինք:

Այս հակասության մեջ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ուժով, գերակայությունը տրվում է «ՀՀ ընտրական օրենսգրքին», քանի որ օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում ՀՀ մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին:

285. Մայրաքաղաք Երևանին համայնքի կարգավիճակ շնորհելուց հետո հռչակվեց Երևանի քաղաքապետի ընտրովիության սկզբունքը: 2008 թվականի դեկտեմբերի 26-ից գործում է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը: 2009 թվականի մայիսի 31-ին առաջին անգամ անցկացվեցին Երևան քաղաքի քաղաքապետի ընտրություններ:

286. Հանրաքվեների ու ընտրությունների անցկացման օրինականության նկատմամբ դատական հսկողությունը իրականացնում է ՀՀ վարչական դատարանը, բացառությամբ ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերի, որոնք քննում են պատասխանողի գտնվելու վայրի՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները: Իսկ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի համաձայն՝ հանրաքվեների արդյունքների հետ կապված և ՀՀ նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը օրենքով սահմանված կարգով լուծում է ՀՀ Սահմանադրական դատարանը: Համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամների ընտրության արդյունքների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարանում:

287. Հանրաքվեների արդյունքները վիճարկելու վերաբերյալ Սահմանադրական դատարան կարող են դիմել ՀՀ Նախագահը, Ազգային ժողովը և պատգամավորների առնվազն մեկ հիգերորդը: Ընտրությունների արդյունքները վիճարկելու վերաբերյալ Սահմանադրական դատարան կարող են դիմել նախագահի և պատգամավորության թեկնածուները: Սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

288. 2005 թվականին իրականացված սահմանադրական փոփոխություններով սահմանվեց Ազգային ժողովի ընտրության հնգամյա ժամկետը՝ նախորդ չորսի փոխարեն, ինչպես նաև համայնքների ղեկավարների և ավագանու ընտրության քառամյա ժամկետը՝ նախորդ երեքի փոխարեն:

Բացի այդ սահմանադրական փոփոխություններով սահմանվեց, որ Կառավարությունը օրենքով նախատեսված դեպքերում սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին, այն դեպքում, երբ նախկինում մարզպետի ներկայացմամբ կառավարությունը օրենքով նախատեսված դեպքերում կարող էր պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին:

Այսպիսով, Սահմանադրությամբ նախատեսվում է պետության կառավարմանը քաղաքացիների մասնակցելու երկու եղանակ՝ անմիջական մասնակցություն /այսինքն՝ հանրաքվեի միջոցով/ և մասնակցություն ընտրությունների միջոցով:

289. Ի տարբերություն 02.04.1991թ. «Հանրաքվեի մասին» ՀՀ չգործող օրենքի՝ համաձայն որի՝ հանրաքվեն (համաժողովրդական քվեարկությունը) ժողովրդի իշխանությունը անմիջականորեն իրականացնելու՝ պետական կյանքի առավել կարևոր հարցեր լուծելու, ՀՀ օրենքներ և որոշումներ ընդունելու, հասարակական կարծիքը բացահայտելու միջոց է, 12.09.2001թ.՝ «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը ամբողջությամբ սահմանում է հանրաքվեի նպատակը՝ նշելով, որ հանրաքվեն (համաժողովրդական քվեարկությունը, այսուհետ՝ հանրաքվե) ՀՀ քաղաքացիների կողմից անմիջականորեն ժողովրդի իշխանություն իրականացնելու, Սահմանադրություն ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու, օրենքներ ընդունելու եղանակ է:

Սկզբունքային տարբերություններից են նաև հետևյալ հարցերը.

- եթե նախկին օրենքով սահմանված էր, որ հանրաքվեի անցկացման ամբողջ ընթացքում ապահովվում է հասարակության մասնակցությունը, ապա ներկայումս մասնակցությունը հանրաքվեին ազատ է, իսկ քաղաքացիների կամքի արտահայտման վրա հսկողությունն արգելվում է,
- եթե նախկին օրենքով հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեին միայն ՀՀ տարածքում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիները, ապա ներկայումս այդ իրավունքը վերապահված է նաև արտասահմանում բնակվող կամ գտնվող՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիներին,
- եթե նախկինում հանրաքվե նշանակելու իրավունքը պատկանում էր ՀՀ գերագույն խորհրդին, ապա գործող օրենքով Սահմանադրություն ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու հարցով հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունքը վերապահել է ՀՀ Նախագահին և Ազգային ժողովին, իսկ օրենքների ընդունման հարցով հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունքը՝ Ազգային ժողովին և կառավարությանը:

290. Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումից հետո հանրապետության տարածքում հանրաքվե անցկացվել է չորս անգամ. առաջինը՝ 1991 թվականին, որով ժողովուրդը որոշում ընդունեց ԽՍՀՄ-ի կազմից ՀՀ դուրս գալու մասին, երկրորդը՝ 1995 թվականին, որով ժողովուրդն ընդունեց ՀՀ նոր

Սահմանադրությունը, երրորդը՝ 2003թ.-ին, որով ժողովուրդը մերժեց ՀՀ Սահմանադրության փոփոխությունները, և չորրորդը՝ 2005 թվականին, որով ժողովուրդն ընդունեց ՀՀ Սահմանադրության փոփոխությունները: Հանրաքվեն չորս անգամ էլ անցկացվել է հրապարակայնության պայմաններում և միջազգային անկախ դիտորդների մասնակցությամբ:

291. ՀՀ Սահմանադրության համաձայն, ՀՀ-ում անցկացվում են հետևյալ ընտրությունները.

ա) նախագահական ընտրություններ

բ) ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրություններ և

գ) տեղական ինքնակառավարման մարմինների /համայնքապետերի և համայնքի ավագանիների անդամների/ ընտրություններ:

Ներկայումս վերոհիշյալ երեք տեսակի ընտրությունները կարգավորվում են ՀՀ ընտրական օրենսգրքով:

Ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի, ՀՀ-ում ընտրություններն անցկացվում են միայն ՀՀ տարածքում: Բացի այդ, ելնելով այն հանգամանքից, որ Սահմանադրությունը հռչակել է երկքաղաքացիությունը, ՀՀ ընտրական օրենսգրքը սահմանել է, որ ՀՀ և միաժամանակ այլ պետության քաղաքացի հանդիսացող և ՀՀ-ում հաշվառում ունեցող քաղաքացիները ընտրությունների ժամանակ քվեարկություններին մասնակցում են սույն օրենսգրքով սահմանված կարգով: Իսկ ՀՀ և միաժամանակ այլ պետության քաղաքացի հանդիսացող և ՀՀ-ում հաշվառում չունեցող քաղաքացիները ընտրությունների ժամանակ քվեարկություններին չեն մասնակցում, քանի որ արտերկրում ՀՀ կողմից ընտրություններ չեն կազմակերպվում:

292. Սահմանադրության 30.2-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք:

Հանրային ծառայության սկզբունքները և կազմակերպման կարգը սահմանվում են օրենքով:

Հանրային ծառայության ոլորտում կարևորագույն քայլ էր Ազգային ժողովի կողմից 04.12.2001թ.-ին «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումը:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հանրային ծառայությունը պետությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքականություն իրականացնելը, պետական ծառայությունը և համայնքային ծառայությունը, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիական աշխատանքը:

293. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքականությունն իրականացնում են քաղաքական, հայեցողական ու քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանց միջոցով՝ ՀՀ օրենսդրությամբ նրանց վերապահված լիազորությունների շրջանակներում, քաղաքական որոշումների ընդունմամբ և դրանց կատարման համակարգմամբ:

294. Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է ՀՀ օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը:

Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, փրկարար ծառայության հանրապետական գործադիր մարմիններում, Ազգային անվտանգության խորհրդում, ինչպես նաև դիվանագիտական և օրենքներով նախատեսված այլ ծառայությունները:

295. Համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով՝ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը:

296. Քաղաքացիական աշխատանքը ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է վարձու աշխատողների միջոցով:

Այդ օրենքով սահմանվում են ՀՀ-ում քաղաքացիական ծառայության հիմնական սկզբունքները և կարգավորում են քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգման և քաղաքացիական ծառայության դասային աստիճանների, քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակման, քաղաքացիական ծառայողների ատեստավորման և վերապատրաստման, քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվի, քաղաքացիական ծառայողների իրավական վիճակի, քաղաքացիական ծառայության կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ և կոչված է երաշխավորելու հավասարության ընդհանուր պայմաններով քաղաքացիական ծառայության անցնելը:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից: Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցվում է արտամրցութային կարգով կամ մրցությամբ:

Քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման գործում կարևորագույն դեր ունի քաղաքացիական ծառայության խորհուրդը, որը իրականացնում է քաղաքացիական ծառայության միասնական պետական քաղաքականություն:

Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամներին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ ՀՀ վարչապետի ներկայացմամբ:

297. Ներկայումս ՀՀ-ում գործում են «Հյուպատոսական ծառայության մասին», «Դիվանագիտական ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Հարկային ծառայության մասին», «ՀՀ Ազգային ժողովում պետական ծառայության մասին», «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին», «Համայնքային ծառայության մասին», «Քրեակատարողական ծառայության մասին», «Փրկարար ծառայության մասին», «Դատական ծառայության մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին», «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենքները, որոնք ևս առաջին հերթին կոչված են ապահովելու հավասարության ընդհանուր պայմաններով պետական ծառայության անցնելու սկզբունքը:

Հոդված 26

Բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանվածության իրավունք: Այդ կապակցությամբ օրենքով պետք է արգելվի ցանկացած խտրականություն և բոլորի համար երաշխավորվի հավասար ու արդյունավետ պաշտպանություն խտրականությունից այնպիսի հիմքերով, ինչպիսին են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը:

298. Ինչպես արդեն նշվել է, Սահմանադրության 14.1 հոդվածով սահմանվում է բոլորի հավասարությունն օրենքի առաջ և արգելում խտրականությունը կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Այդ հոդվածին առնչվող տեղեկատվություն ներկայացվել է նաև Դաշնագրի մի շարք այլ հոդվածների մասին նշված տեղեկատվության մեջ: Օրենքի առջև հավասարության և օրենքով հավասար պաշտպանվածության իրավունքի սկզբունքներն ամրագրվել են նաև ՀՀ Սահմանադրության 19, 20, 25 և 27 հոդվածներում:

299. 2005թ.-ի սահմանադրական փոփոխություններով սահմանվեց նաև, որ սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը: Սույն նորմը ևս օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքի կարևորագույն երաշխիք է:

300. Որպես օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքի երաշխիք, պետք է նշել նաև Սահմանադրությամբ ամրագրված՝ արտակարգ դատարանների ստեղծումն արգելող նորմը:

301. Դատական պաշտպանության իրավունքի և օրենքի ու դատարանի առջև հավասարության սկզբունքները իրենց տեղն են գտել նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.02.2007թ. ընդունված ՀՀ դատական օրենսգրքում, որի 7-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

Ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու ինչպես իր ներկայացուցչի կամ պաշտպանի միջոցով, այնպես էլ անձամբ:

Նույն օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև:

302. Իրավունքների, ազատությունների և պարտականությունների խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

303. Յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով ՀՀ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները):

304. Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Որպես օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքի կարևորագույն երաշխիք պետք է նշել վերը նշված հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում ամրագրված՝ դատական նախադեպի ինստիտուտի նորամուծությունը ՀՀ օրենսդրությունում:

305. Վարչական մարմինների հետ փոխհարաբերություններում օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքն իր տեղն է գտել 18.02.2004թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում, որի 7-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով:

Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում:

306. Սույն հոդվածի իմաստով պետք է նշել նաև «Քաղաքացիների առաջարկությունները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի՝ սույն օրենքը կարգավորում է պետական, հասարակական և մյուս մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, կազմակերպությունների կողմից քաղաքացիների և իրավաբանական անձանց, ինչպես նաև ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց առաջարկություններն օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում քննարկելու, քաղաքացիների, իրավաբանական անձանց իրավունքների և օրենքով պաշտպանվող շահերի խախտման փաստերին արձագանքելու և այդ խախտումները վերացնելու ու կանխելու առնչությամբ ծագող հարաբերությունները:

Սույն օրենքը չի տարածվում քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման այն կարգի վրա, որը սահմանվում է ՀՀ քրեական դատավարության, քաղաքացիական դատավարության, աշխատանքային և այլ օրենսդրությամբ:

307. Օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքի դրսևորում է նաև սահմանադրական նորմն այն մասին, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը: Սահմանադրական սույն նորմի լույսի ներքո «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանել է, որ պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական և այլ հայացքներից ու գործունակությունից:

Պաշտպանին բողոք ներկայացնելը կամ նրա միջամտությունը չպետք է հանգեցնի բողոքողի նկատմամբ քրեական, վարչական կամ այլ պատժամիջոցի կիրառման կամ որևէ խտրականության:

Պաշտպանին կարող են դիմել նաև իրավաբանական անձինք:

308. 2008 թվականի հունիսի 17-ին ընդունվել և 2008թ.-ի օգոստոսի 2-ին ուժի մեջ է մտել «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքը, որով հավասար պայմաններ են ապահովվել յուրաքանչյուր հաճախորդի համար ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու կապակցությամբ: Ֆինանսական հաշտարարի գրասենյակը իր գործունեությունը ծավալել է 2009 թվականի հունվարի 24-ից: Ստորև ներկայացնում ենք 2009 թվականի հունվարի

24-ից մինչ 2009 թվականի նոյեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածի վիճակագրությունը.

Մտացված բողոքների քանակ	292
Ենթակա են քննության հաշտարարի կողմից	136
Խնդիրը լուծվել է առանց գրավոր պահանջի քննության ընդունման	23
Ընդունվել է գրավոր պահանջ	45
Պահանջի քննությունը մերժվել է	2
Քննության ընդունած պահանջներ	43
Պահանջների վերաբերյալ որոշումներ	
Հաշտեցման հիմքով՝ պահանջի քննության դադարեցում	27
Պահանջի մերժում	7
Գտնվում են քննության գործընթացում	8
Պահանջի քննության դադարեցում՝ հաճախորդի դիմումի հիման վրա	1

Հոդված 27

Այն պետություններում, որտեղ գոյություն ունեն ազգային, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններ, դրանց պատկանող անձանց չի կարող մերժվել նույն խմբի այլ անդամների հետ համատեղ իրենց մշակութից օգտվելու, իրենց կրոնը դավանելու և դրա ծեսերը կատարելու, ինչպես նաև մայրենի լեզուն օգտագործելու իրավունքը:

309. Ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովման խնդիրը մշտապես գտնվում է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում: Հայաստանը, դեռ չլինելով Եվրոպայի խորհրդի անդամ, 1997 թվականին ստորագրել և 1998թ. վավերացրել է ԵԽ Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան /01.11.1998/: 2001 թվականին Հայաստանը ստորագրել է նաև Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան /01.05.2002/: Այսպիսով, ՄԱԿ-ի և ԵԱՀԿ շրջանակներում այս հարցի վերաբերյալ ստանձնած պարտավորությունների հետ միասին, ՀՀ-ն իր վրա է վերցրել նաև ԵԽ շրջանակներում իրավական պարտադիր ուժ ունեցող փաստաթղթերից բխող պարտավորություններ (փոքրամասնությունների ոլորտին վերաբերող Հայաստանի կողմից վավերացրած միջազգային փաստաթղթերի ցանկը տես հավելված 1-ում):

310. ՀՀ-ում հայերի հետ միասին ապրում են 20-ից ավելի ազգություններ, որոնցից 11-ը ազգային փոքրամասնություններ են: Դրանք են ասորիները, հույները, վրացիները, հրեաները, եզդիները, քրդերը, գերմանացիները, լեհերը, ռուսները, բելառուսները, ուկրաինացիները:

311. Ըստ 2001 թվականի մարդահամարի տվյալների, ազգային փոքրամասնությունները կազմում են ՀՀ մշտական բնակչության 2.2 տոկոսը՝ 67 657 մարդ (տես Հավելվածը՝ ՀՀ մարզերի բնակչության բաշխումն ըստ ազգությունների, քաղաքային/գյուղական բաշխումով՝ 2001 թվականի մարդահամարի արդյունքներով)

ընդամենը	հայ	ասորի	եզդի	հույն	ռուս	ուկրաի- նացի	քուրդ	այլ
3 213 011	3 145 354	3 409	40 620	1 176	14 660	1 633	1 519	4 640

Ազգային փոքրամասնությունների մեջ մեծամասնությունը կազմում են եզդիները՝ 40 620 մարդ կամ ՀՀ բոլոր ոչ այլազգի քաղաքացիների մոտ 73 տոկոսը։ Նրանց նկատելի մասը բախշված է հանրապետության մարզերում, ապրում են դիսպերս, ինչը որոշ իմաստով բարդացնում է ազգային փոքրամասնությունների առանձին խմբերի կրթության ու մշակույթի, ինքնության հավաքական-խմբային իրավունքների իրականացումը։ Բնականաբար նրանք բոլորը միասին, և առանձին-առանձին՝ որպես էթնիկ համայնքներ, ինչպես նաև որպես անհատ քաղաքացիներ ազգային փոքրամասնությունների իրավունքի կրող են, սակայն նրանց թվաքանակը և ցրվածությունը բարդացնում են ազգային փոքրամասնությունների իրավունքների իրականացմանն ուղղված պետական աջակցության իրագործումը։ Այնուամենայնիվ, ՀՀ կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում ՀՀ տարածքում ապրող և ազգային պետականություն չունեցող էթնիկ համայնքների կրթամշակութային խնդիրներին։ Այդպիսիք են այս պահին եզդիները, ասորիները և քրդերը։

Մշակույթ

312. 2002թ. նոյեմբերի 20-ին ընդունվել է «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքը, որի 8-րդ հոդվածը սահմանում է «Ազգային փոքրամասնությունների մշակույթների նկատմամբ վերաբերմունքը»։ Հռչակվածում մասնավորապես ասվում է. «ՀՀ-ն աջակցում է իր տարածքում բնակվող փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը, պետական ծրագրերի իրականացման միջոցով նպաստում է նրանց կրոնի, ավանդույթների, լեզվի, մշակութային ժառանգության, մշակույթի պահպանման, տարածման և զարգացման համար պայմանների ստեղծմանը»։ Նույն օրենքի 9-րդ հոդվածը յուրաքանչյուրի համար երաշխավորում է ՀՀ-ում մշակութային կյանքին մասնակցելը և մշակութային գործունեություն իրականացնելը անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, համոզմունքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից։ Օրենքի 6-րդ հոդվածը մշակութային արժեք է համարում նաև լեզուները, ազգային ավանդույթները և սովորույթները, աշխարհագրական տեղանունները։

313. 2000թ. սկսած ՀՀ պետական բյուջեից տարեկան 10 մլն դրամ դրամաշնորհային գումար է հատկացվում ազգային փոքրամասնությունների կրթամշակութային խնդիրների զարգացման համար։ Այն իրացվում է Ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների կողմից։

«Մշակույթի պահպանման, տարածման և զարգացման 2004թ. պետական տարեկան ծրագրի մասին» ՀՀ օրենքում 2005-2008թթ. պետական եռամյա ծրագրում ներառվել են դրույթներ և համապատասխան միջոցառումներ ազգային փոքրամասնությունների հարցերի վերաբերյալ:

314. ՀՀ մշակույթի նախարարությունը ամեն տարի ազգային փոքրամասնություններին ուղղված և նախարարության կողմից օժանդակություն ստացող ծրագրերը՝ ցուցահանդեսները, երաժշտական փառատոները քննարկում և նախապես համաձայնեցնում ու ծրագրում է ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հայաստանում ազգային փոքրամասնություններին ուղղված պետության և մշակութային գործունեության կազմակերպման պաշտոնական պատասխանատվությունների կողմից որևէ միջոցառում չի կարող իրականացվել առանց համապատասխան էթնիկ համայնքների հետ խորհրդակցության և քննարկման: Սակայն էթնիկ համայնքները իրավունք ունեն առանց պետական մարմինների հետ համաձայնացնելու ունենալ և իրականացնել բազմաթիվ մշակութային ծրագրեր: Այդ դեպքերում նույնպես նրանք կարող են հուսալ համապատասխան պետական մարմինների կազմակերպական, մեթոդական, երբեմն նաև՝ նյութական աջակցությունը: Ազգությամբ ասորի Ռազմիկ Խոսրոնի ջանքերով և ՀՀ կառավարության ֆինանսական օժանդակությամբ 2005թ. բեմադրվել է նրա հեղինակած «Ասորուհին» դրաման: 2006թ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում հրատարակվել է Ամինե Ավդալի «Քուրդ-եզդիների հավատալիքները» գիրքը, նշվել է Ամինե Ավդալի ծննդյան հարյուրամյակը: ՀՀ գրողների միությունն ունի «քուրդ գրողների» բաժին, իսկ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը՝ «քրդագիտության» բաժին:

Բոլոր փառատոներին և ցուցահանդեսներին հանդես են գալիս հունական «Պոնտոս» խումբը, հույն ստեղծագործողները:

315. Մեծ հաջողությամբ շարունակում է գործել Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոնը, որը սիրված է ոչ միայն ռուսական համայնքում, այլև՝ ողջ Հայաստանի բնակչության կողմից: Միայն նախորդ երկու տարում ռուսական համայնքում կազմակերպվել են 100-ից ավելի միջոցառումներ: Այդ շարքում՝ ռոմանսի միջազգային մրցույթը, Ռուսաստանի մշակույթի օրերը Հայաստանում, ռուսական կինոնկարների փառատոնը, երաժշտական երեկոյթները և այլ հետաքրքիր ձեռնարկներ: Նշենք, որ շատ միջոցառումներ կյանքի են կոչվում Ռուսաստանի հայերի միության աջակցությամբ: Ռուսական համայնքում այժմ գործում են «Օրֆեյ» և «Սոլնիշկո» պարախմբերը, որոնք համերգներով հանդես են գալիս տարբեր բեմահարթակներում: Այս համայնքում ավանդական են հանդիպումները ռուս և հայ արվեստագետների, դեսպանների ու քաղաքական գործիչների հետ:

316. 2007թ. ընթացքում նկարահանվել են Հայաստանի ազգային փոքրամասնություններին նվիրված մի շարք ֆիլմեր, որոնցից հիշատակելի են Նիկա Շեկի նկարահանած ֆիլմերը հրեաների, ասորիների և եզդիների մասին, և Գեորգի Փարաջանովի ֆիլմը եզդիների հարսանիքի մասին:

317. 2004թ. Երևանի Նոր Նորք թաղամասի զբոսայգիներից մեկում տեղադրվել են այլազգի մշակութային և պատմական-քաղաքական գործիչների քանդակներ, այդ թվում եզդի Ջհանգիր աղայի մոնումենտալ կիսանդրին:

318. Հունական, եգիպտական, բելառուսական, ասորական, լեհական համայնքների ներկայացուցիչներից բաղկացած խմբեր մասնակցել են 2008 թվականի դեկտեմբերի 8-13 Ծաղկաձորում տեղի ունեցած «Հայաստանի մշակույթների փառատոն»-ին:

319. Բոլոր էթնիկ համայնքները ներառված են ՀՀ Մշակույթի նախարարության կողմից իրականացվող ամենամյա երկու ծրագրերում՝ «Ազգային փոքրամասնությունների կերպարվեստի և դեկորատիվ առարկաների արվեստի ցուցահանդեսին» և «Ազգային փոքրամասնությունների մանկական երաժշտական փառատոնին»: Երկու ծրագրերն էլ լայնորեն ներկայացվում և մեկնաբանվում են զանգվածային լրատվամիջոցներով:

320. «Տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքը հատուկ հոդված ունի ՀՀ ազգային փոքրամասնությունների կողմից իրենց ազգային տոները նշելու իրավունքի մասին:

321. ՀՀ կառավարության 22 ապրիլի 2004թ. թիվ 565-Ա որոշմամբ Երևանի կենտրոնում 800 քառակուսի մետր տարածք է հատկացվել ազգային փոքրամասնությունների մշակութային կենտրոնի ստեղծման համար: 2006թ. ընթացքում տարածքը վերանորոգվել է, բարեկարգվել և կահավորվել է: Կենտրոնը, որը բացվել է 2007 թվականին, մեծապես նպաստում է ազգային փոքրամասնությունների մշակութային բազմազանության ցուցադրությանն ու զարգացմանը, դրանց մասին տեղեկատվության մեծացմանը: Այն բոլոր հնարավորությունները տրամադրում է ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցման, օգտագործման և զարգացման համար: Այդ հնարավորությունն ունեն ՀՀ բոլոր էթնիկ համայնքները:

Լեզու

322. ՀՀ օրենսդրությունը հնարավորություն է ընձեռնում ՀՀ տարածքում ապրող բոլոր ազգային փոքրամասնություններին պահպանել իրենց մայրենի լեզուն: ՀՀ լեզվական քաղաքականության հիմնական դրույթները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, Լեզվի մասին ՀՀ օրենքով, ինչպես նաև «ՀՀ լեզվաքաղաքականության պետական ծրագրով»: Սահմանադրության մեջ և օրենքում նշվում է, որ ՀՀ-ը իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը, այդ թվում՝ կրթության ոլորտում: Գործող Սահմանադրության հոդված 41-ում ձևակերպված է. «Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունք: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք»: ՀՀ գործող օրենսդրությունը որևէ արգելք չի նախատեսում փոքրամասնությունների լեզուների գործածման ոլորտում, ինչպես նաև օրենսդրական կամ գործնական միջոցներ չի նախատեսում կամ իրականացնում, որոնք ուղղված լինեին որևէ լեզվի պահպանմանը կամ զարգացմանը վնասելուն կամ վտանգելուն: Լեզվաքաղաքականության պետական ծրագրում նշվում է, որ

լեզվական և մշակութային բազմազանության նկատմամբ հարգանքը, ազգային փոքրամասնությունների լեզվի և մշակույթի զարգացման խրախուսումը միջազգային ասպարեզում ՀՀ վարկն ապահովող պայմաններից է: ՀՀ պետական լեզվի գերակայությունը ներդաշնակորեն զուգակցվում է ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանման, բոլոր մշակույթների փոխադարձ հարգանքի սկզբունքներին՝ միջազգային իրավունքին և Եվրախորհրդի լեզվաքաղաքական նորմերին համապատասխան: Ծրագրի նպատակներից մեկն է համարվում ՀՀ բոլոր քաղաքացիների՝ մայրենի լեզվով կրթություն և դաստիարակություն ստանալու իրավունքի ապահովումը: Լեզվաքաղաքականության պետական ծրագրի 7-րդ բաժինը վերնագրված է «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովումը լեզվի բնագավառում»: Որպես այդ բնագավառի հիմնախնդիրներ են նշված հետևյալները:

ա) Ազգային փոքրամասնությունների լեզուները ՀՀ լեզվամշակույթի անբաժան մասն են, նրա հարստությունը: Այդ լեզուների նկատմամբ պետական հոգածությունը մեր երկրի ժողովրդավարացման հետագա ընթացքի և քաղաքացիական հասարակության զարգացման համար ունի հանգուցային նշանակություն:

բ) ՀՀ քաղաքացիների իրավունքները լեզվի բնագավառում երկբնույթ են՝ ազգային և հասարակական: Ազգային մակարդակում ապահովվում է մայրենի լեզվի իմացության՝ դրանով կրթվելու և այն գործածելու իրավունքը՝ հասարակականում՝ պետական լեզվի՝ հայերենի իմացության և գործածության՝ ՀՀ բոլոր քաղաքացիների իրավունքն ու պարտականությունը:

գ) Որոշ ազգային փոքրամասնությունների՝ ազգային ինքնության պահպանմանը պետականորեն սատարելը շահեկանորեն կարող է ավելի կամրջել մեր երկիրը այդ ժողովուրդների հայրենի պետությունների հետ:

Որպես ծրագրային գործողություններ նշված են.

ա) համակողմանի աջակցություն ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանմանն ու զարգացմանը,

բ) աջակցությունն ազգային փոքրամասնությունների միջև արդյունավետ լեզվական հաղորդակցմանն ու փոխըմբռնմանը՝ Եվրախորհրդի լեզվաքաղաքական նորմերին համապատասխան,

գ) մայրենի լեզվով կրթություն և դաստիարակություն ստանալու՝ ազգային փոքրամասնությունների իրավունքի ապահովման նպատակով տվյալ ազգության մտավորականության գիտամանկավարժական ներուժի ներգրավումը,

դ) աջակցությունն ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման աշխատանքներին:

2002թ. ընդունված «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի մի շարք հոդվածներ ուղղված են ազգային փոքրամասնությունների և լեզուների իրավունքներին: Հոդված 8-ը նշում է. «ՀՀ-ն աջակցում է իր տարածքում բնակվող փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը, պետական ծրագրերի իրականացման միջոցով նպաստում է նրանց

կրոնի, ավանդույթների, լեզվի, մշակութային ժառանգության, մշակույթի պահպանման, տարածման և զարգացման համար պայմանների ստեղծմանը»: Նույն օրենքի 9-րդ հոդվածը յուրաքանչյուրի համար երաշխավորում է ՀՀ-ում մշակութային կյանքին մասնակցելը և մշակութային գործունեություն իրականացնելը անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, համոզմունքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրույթունից: Օրենքի 6-րդ հոդվածը մշակութային արժեք է համարում նաև լեզուները, ազգային ավանդույթները և սովորույթները, աշխարհագրական տեղանունները: Ներկայումս քննարկման ընթացքում է լեզվաքաղաքականության պետական նոր ծրագրի նախագիծը, որի մի բաժինը նվիրված է ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզվական խնդիրների լուծմանը:

323. Իրականում դժվար է բացարձակ թվերով ներկայացնել ազգային փոքրամասնությունների կամ էթնիկ համայնքների ներկայացուցիչների կողմից իրենց մայրենի կամ փոքրամասնության լեզվի իմացության պատկերը ՀՀ-ում: 2001թ. մարդահամարի նյութերը հավաքելիս ազգային փոքրամասնությունների կամ էթնիկ համայնքների ներկայացուցիչների որոշ մասը որպես մայրենի լեզու անվանել են իրենց էթնիկ լեզուն, ինչը, սակայն, չի նշանակում, որ նրանք տիրապետում են այդ լեզվին: Այլոք որպես մայրենի լեզու նշել են այն լեզուն, որին ավելի լավ են տիրապետում: Մասնավորապես՝ ուկրաինացիների, լեհերի, գերմանացիների, հրեաների, բելոռուսների զգալի մասը, հույների և ասորիների մի մասն ավելի լավ է տիրապետում ռուսերենին և որպես մայրենի լեզու նշել է ռուսերենը: Շատ քիչ թվով այլազգիներ կան Հայաստանում, որ հայերենը համարում են իրենց առաջին լեզուն: Այդպիսիք հանդիպում են եզդիների, հույների, ասորիների միջավայրում: Հայերի հետ այլէթնիկ քաղաքացիներով բնակեցված խառը բնակավայրերում հայերի նկատելի մասը այս կամ այն չափով տիրապետում է ազգային փոքրամասնության լեզվին: Այդպես, ասորական Դիմիտրով, Վերին Դվին գյուղերում ապրող հայերի մի մասը կարող է խոսել ասորերեն, եզդի բնակչություն ունեցող Ամրե Թազա/Մադունց, Ալագյազ, Դերեկ, Զամշլու, Ավշեն, Երասխահուն, Զովունի և այլ գյուղերում ապրող հայերը այս կամ այն չափով տիրապետում են եզդիերենին: Այսպիսով, հնարավոր չէ փոքրամասնության լեզվի կրողներին տվյալ էթնիկ համայնքի հետ նույնականացնել:

324. ՀՀ-ում ինքնակազմակերպված գործում են շուրջ 11 էթնիկ համայնքների 50-ից ավելի հասարակական կազմակերպություններ, որոնց աշխատանքների մի մասն ուղղված է նաև մայրենի լեզուների պահպանությանն ու զարգացմանը: Ակտիվորեն գործում են ասորական, եզդիական, ռուսական, հունական, քրդական ուկրաինական, հրեական, լեհական, վրացական, բելոռուսական, գերմանական էթնիկ համայնքների հասարակական կազմակերպությունները:

325. ՀՀ մշակույթի նախարարության գրահրատարակչության գործակալությունը վերջին տարիներին տարեկան մեկ միլիոն դրամից ավելի գումար է հատկացնում ազգային փոքրամասնությունների մամուլի տպագրության համար: Այդ սուբսիդիաներով տպագրվում են եզդիական «Լալըշ», «Էզդիխանա» («Էզդիների ձայն») հայերեն, քրդական «Ռյա թազա» («Նոր ուղի») և «Զագրոս»

քրդերեն թերթերը, ուկրաինական «Դնիպրո», ռուսական «Ռեսպուբլիկա Արմենիա», «Ուրարտու», «Նովոյե վրեմյա» թերթերը, «Լիտերատուրնայա Արմենիա» հանդեսը և հունական «Բյուզանդական ժառանգություն» ամսագիրը: 2009թ. պետական ֆինանսավորմամբ հրատարակվում է նաև վրացական «Իվերիա» թերթը:

ՀՀ-ում ազգային փոքրամասնությունների լեզուներով տպագրվում են նաև հրեական համայնքի «Մագեն Դավիթ» («Դավիթի վահան») ռուսերեն, «Կոհելետ» պաշտոնաթերթ (Հայաստանի հրեական կրոնական համայնք), քրդական համայնքի, «Պուկի մի ժիվեմի» լեհական եռամսյա թերթը: Վրացերենով իրականացվում են պարբերական ռադիոհաղորդումներ, գերմանական էթնիկ համայնքը գրքեր է տպագրել Հարավային Կովկասում և մասնավորապես Հայաստանում գերմանական համայնքի պատմության և առօրյայի մասին: Թվարկված էթնիկ համայնքների մեծ մասը /լեհական, ուկրաինական, վրացական, բելոռուսական/ ունեն գեղարվեստական խմբեր՝ ազգային լեզվով երգչախմբեր, ժողովրդական պարային համույթներ, որոնք, մյուս էթնիկ խմբերի հետ միասին, պարբերաբար մասնակցում են զանազան փառատոների Հայաստանի տարբեր մարզերում և Երևան քաղաքում՝ ներկայացնելով ազգային լեզուներով երգեր: Հասարակական կազմակերպությունների այս նախաձեռնությունը մեծապես օգնում է հիշյալ լեզուների եթե ոչ հասարակական, ապա գոնե մշակութային օգտագործման ակտիվացմանը, ինչպես նաև երիտասարդ սերնդի կողմից մայրենի լեզվի հետ առնչման հնարավորություններին: Նրանց բոլորի մշակութային գործունեությանը մեծապես օգնում և խրախուսում է Հայաստանի Հանրապետության մշակութի նախարարությունը, սակայն զգալի թվով միջոցառումներ են կազմակերպվում նաև հասարակական կազմակերպությունների կողմից:

326. Հայաստանի ներսում տարբեր էթնիկ համայնքների համագործակցությունն ունի բազմաթիվ ձևեր: Գործում են ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների միություններ, ասոցիացիաներ: ՀՀ նախագահի կից գործող Ազգային փոքրամասնությունների համակարգող խորհուրդը հիմնադրվել է 2000թ., որտեղ ներկայացված են 11 էթնիկ համայնքների երկուական ներկայացուցիչներ /եզդիական, ռուսական, ասորական, քրդական, վրացական, լեհական, ուկրաինական, բելոռուսական, հրեական, գերմանական/: Համակարգող խորհուրդը ստեղծվել է ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունն ապահովելու, նրանց միջհամայնքային հարաբերություններն ակտիվացնելու, ինչպես նաև հատուկ կրթամշակութային, իրավական և այլ խնդիրների նկատմամբ պետական հոգածությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Համակարգող խորհրդի միջոցով է կատարվում պետության կողմից էթնիկ համայնքներին հատկացվող բյուջետային միջոցների բաշխումը: Ֆինանսավորվող ծրագրերի ընտրությունը կատարում և բաշխման կարգը որոշում են հենց իրենք՝ էթնիկ համայնքների ներկայացուցիչները:

Ձևավորված ավանդույթի համաձայն՝ էթնիկ համայնքների մշակութային փառատոների, ցուցահանդեսների մեծ մասն անց են կացվում համատեղ, այլ դեպքերում տարբեր էթնիկ համայնքների ներկայացուցիչներ փոխադարձաբար

մասնակցում են միմյանց բոլոր կարևոր տոներին, ցուցահանդեսներին: ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը իրավունքների կամ տեղեկատվության իրազեկման, ազգային փոքրամասնությունների կյանքին առնչվող որոշումների, օրենսդրական նախաձեռնությունների կամ այլ քննարկումների ժամանակ համագործակցում է բոլոր էթնիկ համայնքների ներկայացուցիչների հետ՝ համաժամանակյա ծրագրերով: Այսօր, երբ ՀՀ կառավարության օժանդակությամբ ստեղծվել է մշակութային կենտրոն, նրանց հանդիպումներն ու համագործակցությունը, կապերի սերտացումը դարձել է ավելի հեշտ և արդյունավետ:

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին աջակցելու նպատակով, պետական բյուջեից ֆինանսական խրախուսման միջոցներ են հատկացվում էթնիկ համայնքների հասարակական կազմակերպություններին, սուբսիդավորվում է նրանց կողմից հրատարակվող տպագիր մամուլը, մի շարք լեզուներով եթեր են տրվում ռադիոհաղորդումներ /ռուսերեն, ասորերեն, քրդերեն, եզդիերեն, վրացերեն/, ռուսերենով թարգմանվել և շարունակվում են թարգմանվել ազգային օրենքների մեծ մասը, փորձ է արվել եզդիերենով թարգմանել ՀՀ նոր, գործող Սահմանադրությունը: Չնայած պետության կողմից իրականացվող քաղաքականությանը՝ խրախուսել ազգային փոքրամասնությունների լեզուների գործածումը, իրենք՝ լեզվի կրողներից ոմանք, զգալի չափով թերի են օգտագործում այդ հնարավորությունները: Այսպես, ՀՀ-ում տպագրվող հրեական համայնքի «Մազեն Դավիթ» («Դավթի աստղ»), Հայաստանի հրեական կրոնական համայնքի կողմից տպագրվող «Կոհելետ» ռուսալեզու պաշտոնաթերթը լույս են տեսնում ռուսերենով: Ուկրաինական «Դնիպրո» թերթը երկլեզու է՝ ուկրաիներեն և հայերեն, իսկ լեհական համայնքի «Պոկի մի ժիվեմի» պարբերականը հրատարակվում է երեք լեզվով (լեհերեն, հայերեն և ռուսերեն):

327. Վերջին շրջանում զգալիորեն ակտիվացել է նաև գրահրատարակչությունը: Գերմանական էթնիկ համայնքի կողմից 2003թ. լույս է տեսել «Սևծովյան ավազանի և Կովկասի շվաբները» (ռուսերեն և գերմաներեն), 2007թ.՝ «Ճակատագիր. ռուսական գերմանացի» (ռուսերեն) գրքերը: Ռուսերենով լույս տեսնող գրքերը բազմաթիվ են: Մասնավորապես, ռուսական էթնիկ համայնքի կողմից 2001թ. հրատարակվել է «Այսրկովկասի մոլոկանների և դուխաբորների պատմությունը» (ռուսերեն), 2002թ. «Ռոսիա» ՀԿ-ի նախաձեռնությամբ լույս են տեսել հետևյալ 3 ռուսերեն գրքերը. «Ա.Ս. Գրիբոյեդովը և Հայաստանը», «Ռուսաստանը և Հայաստանը. 19-րդ դար», «Ընդմիջտ միասին: Ռուս-հայկական պատմամշակութային և գրական կապերի շուրջ»: Եզդիների կողմից 2003թ. հայերեն լեզվով լույս է տեսել «Մենք եզդի ենք», 2007թ. Ամինե Ավդալի «Քուրդ-եզդիների հավատալիքները» գրքերը: 2002թ. «Միջագետք» հրատարակչությունը տպագրել է «Քուրդիստանում եզդիական իրականության դերն ու նշանակությունը» հայերեն գիրքը: Երևանում հրատարակվել են քուրդ հրապարակախոս Ամարիկե Սարդարի թվով 6 պատմվածքների ժողովածուները քրդերեն լեզվով, որոնցից 2-ը թարգմանվել են ռուսերենով: Քրդերեն հրատարակվել է քուրդ բանաստեղծների ժողովածուն և այլ գրքեր: Հրապարակվել է Ա. Հակոբյանի, «Դասական Ասորերեն» աշխատությունը, որը Մերձավոր Արևելքի հնագույն լեզուներից մեկին նվիրված առաջին հայալեզու դասագիրքն է: 2008թ. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի կողմից

կազմվել ու հրատարակվել է մեծավաստակ քրդագետ Հաջիե Ջնդի Ջաուարիի ծննդյան 100-ամյակին նվիրված գրքույկը: Ջանքեր են գործադրվում խրախուսելու էթնիկ համայնքների ներկայացուցիչներին՝ հրատարակություններն իրականացնել իրենց ազգային լեզուներով:

328. ՀՀ ազգային գրադարանում փոքրամասնությունների լեզուներով պահվում և օգտագործվում են 2000 քրդերեն և եզդիերեն, բազմաթիվ հունարեն, ուկրաիներեն, գերմաներեն, լեհերեն, վրացերեն, բելոռուսերեն, միլիոնավոր ռուսերեն գրքեր: Վերջին տարիների ընթացքում գրադարանի ֆոնդերը համալրվել են ուկրաիներեն 35, լեհերեն՝ 75, հունգարերեն՝ 21, քրդերեն՝ 17, հունարեն՝ 470, վրացերեն՝ 5, եզդիերեն՝ 1 միավոր և այլ լեզուների գրքերով: Այդ լեզուներով մեծաթիվ գրականություն կա նաև հանրապետության այլ գրադարաններում, իսկ ռուսերենով՝ նաև դպրոցական գրադարաններում: Ինչպես հիշյալ, այնպես էլ այլ փոքրամասնությունների լեզուներով զգալի ծավալի գրականություն կա ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի և համապատասխան գիտահետազոտական ինստիտուտների և ուսումնական հաստատությունների գրադարաններում: Այդ գրականությունը մշտապես գտնվում է բոլորի, այդ թվում՝ էթնիկ համայնքների օգտագործման տիրույթում:

329. «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով ազգային փոքրամասնությունների կազմակերպություններին տրված՝ իրենց փաստաթղթերը, ձևաթղթերը և կնիքները իրենց լեզվով ձևավորելու, իրավունքը նույնպես գրավոր լեզվի զարգացմանը խրախուսող նորմերից է:

330. Ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանությանն ու զարգացմանը նպաստում է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը, որի համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների լեզուներին տիրապետող անձինք, օրենքով սահմանված կարգով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, վարչական վարույթի իրականացման համար դիմումը և դրան կից փաստաթղթերը կարող են ներկայացնել համապատասխան փոքրամասնության լեզվով»: 27-րդ հոդվածի չորրորդ մասը վարչական վարույթի մասնակիցներին թույլատրում է օգտագործել օտար լեզուներ: Ընդ որում վարչական մարմնի կողմից համապատասխան թարգմանությունն ապահովելու անհնարինության դեպքում է միայն, որ օտար լեզվին տիրապետող վարույթի մասնակիցը պարտավոր է թարգմանություն ապահովել: Օրենքի 59-րդ հոդվածի համաձայն, վարույթի մասնակցի խնդրանքով, նրան կարող է տրամադրվել վարչական ակտի օտար լեզվով թարգմանված պատճենը, որը պետք է հաստատված լինի համապատասխան վարչական մարմնի պաշտոնական կնիքով: Օրենքի 93-րդ հոդվածը սահմանում է, որ վարչական վարույթի ընթացքում թարգմանիչներին վարձատրելու հետ կապված ծախսերը կրում է վարչական վարույթն իրականացնող մարմինը: Այն դեպքում, երբ թարգմանիչն հրավիրել է վարույթի մասնակիցը, ապա համապատասխան ծախսը կրում է նա:

331. Լեզուների հանդեպ կիրառվող քաղաքականությունը նույնպես մշտապես քննարկվել և շարունակում է քննարկվել էթնիկ համայնքների ներկայացուցիչների հետ՝ թե՛ խմբերի, թե՛ անհատների: ՀՀ կառավարության

աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության կողմից ՀՀ ազգային մի շարք փոքրամասնությունների կրթության խնդիրների հետազոտության արդյունքները և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները, մինչև Կրթության և գիտության նախարարությանը ներկայացնելը, 2006թ. սեպտեմբեր-հոկտեմբերին քննարկվեցին համապատասխան փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների, դպրոցների տնօրենների, ուսուցիչների, գյուղապետերի հետ:

332. Ազգային փոքրամասնությունների լեզուների հանդեպ կիրառվող քաղաքականության և կադրերի պատրաստման ծրագրման հարցը ՀՀ կրթության և գիտության նախարարությունն իրականացնում է ՀՀ էթնիկ համայնքների ներկայացուցիչների հետ:

Լեզվի մասին օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված է, որ ազգային փոքրամասնությունների համայնքներում ընդհանուր կրթությունը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով պետական ծրագրերով և պետության հովանավորությամբ՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ: Նույն օրենքի հոդված առաջինը հռչակում է, որ «Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է իր տարածքում ազգային փոքրամասնությունների կողմից իրենց լեզվի ազատ օգտագործումը»:

333. Կրթության ազգային ինստիտուտի կողմից կազմվել և ներդրվել է «Ազգային փոքրամասնությունների հանրակրթական դպրոցի (դասարանների) օրինակելի պլանը», որի համաձայն ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի և գրականության ուսուցման համար 1-10 դասարաններին հատկացված է շաբաթական 42 ժամ:

ՀՀ-ում կրթության բոլոր փուլերը թույլատրված են ՀՀ տարածքում ապրող բոլոր այլազգի բնակիչներին: Բավարար թվի կամ կազմակերպական հնարավորությունների դեպքում ՀՀ-ում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ գործածողները միշտ կարող են աջակցություն ակնկալել:

334. 2005 թվականից Կրթության ազգային ինստիտուտում գործում են ՀՀ գիտության և կրթության նախարարության «Իրանագիտության» և «Մեմագիտության» առարկայական հանձնաժողովները, որոնք իրականացնում են եզդիերեն և ասորերեն լեզուներով ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների փորձաքննությունը: 2006թ. եզդիական համայնքի միջնորդությամբ՝ եզդիների և ազգային մյուս փոքրամասնությունների կրթական խնդիրներն ուսումնասիրելու և սպասարկելու նպատակով Կրթության ազգային ինստիտուտում աշխատանքի է ընդունվել ազգությամբ եզդի մասնագետ:

335. ՀՀ պաշտպանության տակ առնված լեզուների կրող ազգային փոքրամասնությունների համայնքներին մատչելի է միջին միջնակարգ կրթությունը համապատասխան լեզուներով կամ միջին միջնակարգ կրթության շրջանակներում ապահովվում է համապատասխան փոքրամասնությունների լեզուների ուսուցումը՝ որպես ուսումնական ծրագրերի անբաժան մաս, առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնք /կամ որոնց ընտանիքները/ այդպիսի հայտ

են ներկայացրել, և որոնց թիվը համարվում է բավարար: Համաձայն ՀՀ կառավարության 25.07.2002թ. N1392-Ն որոշման և միջնակարգ կրթության չափորոշիչների՝ հաստատության դասարանների միջին խտությունը սահմանվում է 25-30 սովորող տարրական և միջին դպրոցի համար, 20-25 սովորող՝ ավագ դպրոցի համար: Սակայն, առանձին դեպքերում /լեռնային, բարձր լեռնային, սահմանամերձ գյուղական բնակավայրերի դպրոցներում, Խարտիայով պաշտպանվող լեզուների ուսուցմամբ դասարաններ ունեցող քաղաքային և գյուղական դպրոցներում և այլ դեպքերում/, ավելի պակաս խտությամբ դասարան կարող է բացվել նախարարության թույլտվությամբ՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ, կամ հաստատության լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրների հաշվին՝ խորհրդի որոշմամբ: Իրականում այդ ուսուցումը կատարվում է նաև երեխաների անբավարար թվի դեպքում: Օրինակ՝ ասորերեն լեզվի ուսուցման 4-րդ և 5-րդ դասարանները Դմիտրովո գյուղում գործում են նույնիսկ ընդամենը երկու աշակերտների դեպքում, Երևանի 8-րդ դպրոցի 5-րդ, 8-րդ, 9-րդ դասարանների 1-ական աշակերտների դեպքում: Իրավիճակը նույնն է քրդերով և եզդիներով բնակեցված գյուղական դպրոցների դեպքում:

336. Այս գործին շահեկանորեն նպաստում են նաև ԵՄ «Բոլորս մեկ ենք, բոլորս՝ տարբեր» մշակութային ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները, որոնք լայն արձագանք են գտնում Հանրապետության հատկապես երիտասարդ սերնդի միջավայրում: Ոչ հայազգի անձանց և նրանց լեզուների մասին տեղեկատվության աղբյուր է նաև դպրոցներում այլազգի երեխաների, ԲՈՒՀ-երում՝ ուսանողների, բանակում՝ ծառայողների առկայությունը: Այդպիսի դեպքերում համապատասխան վայրերում այդ անձի լեզվով կատարվում են որոշ միջոցառումներ, օրինակ, բանակում որևէ այլազգի ծառայողի առկայության դեպքում նրա մայրենի լեզվով շնորհավորում են ծառայողին, նրան առաջարկում են իր մայրենի լեզվով ելույթ ունենալ և այլն: Սրանք փոքր քայլեր են, սակայն որոշ չափով նպաստում են Հայաստանում առկա այլ լեզուների հանդեպ հարգանքի մթնոլորտի ձևավորմանը:

Ազգային փոքրամասնությունների հարցերով պետական կառույց

337. 2000թ. ՀՀ կառավարությանն առնթեր գործել է Կրոնի գործերի խորհուրդը, որը 2002թ. մարտի 6-ին լուծարվել է: ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչությունում ընդունվել են հատուկ աշխատակիցներ: Այնուհետև, 2004թ. հունվարին ձևավորվել է ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը: Կառուցվածքային այս ստորաբաժանումը մասնակցում է ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի կազմմանը, ներկայացնում է առաջարկություն այդ ծրագրի կատարման և դրանում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու վերաբերյալ, իրականացնում է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված պետության և կրոնական կազմակերպությունների միջև հարաբերությունների կարգավորումն իրականացնող և «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ավանդույթների պահպանումը, լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի պաշտպանությունն ապահովող» ՀՀ

կառավարության կողմից լիազորված մարմնի գործառույթները: Վարչության աշխատակիցներից մեկն ազգությամբ եզդի է: Ընդհանուր առմամբ այս վարչության աշխատակիցներն, անցած տարիների ընթացքում ազգային փոքրամասնությունների տասնյակ ՀԿ-ների հետ հանդիպումներից բացի, այցելել են ՀՀ տարածքում ապրող ազգային փոքրամասնությունների համայնքներ, կրոնական կազմակերպություններ, այդ թվում 30-ից ավելի կրոնական կազմակերպություններ, ասորական 4 համայնք, ռուս աղանդավորների՝ մոլոկանների 2 համայնք, եզդի-քրդական բազմաթիվ բնակավայրեր:

338. Վարչության կողմից 2004թ. մարտին հրատարակվել է «Ազգային փոքրամասնությունները Հայաստանում. պարտավորություններ, հնարավորություններ» անունով գիրքը հայերեն լեզվով, որը պարունակում է «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան», «Հայաստանի Հանրապետության առաջին զեկույցը ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի» կատարման վերաբերյալ, «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտե. Հայաստանի վերաբերյալ կարծիք» և «Հայաստանի Հանրապետության մեկնաբանությունները Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ կարծիքի կապակցությամբ» փաստաթղթերը:

Ուսումնասիրվել են ազգային փոքրամասնությունների կողմից հրապարակվող պարբերականները, որոնք համայնքային կյանքի վերաբերյալ տեղեկատվություն են պարունակում և համայնքների ներկայացուցիչներին ծանոթացնում են իրենց երկրների պատմությանը, մշակույթին, անդրադառնում են սովորույթներին:

Վարչության խնդրանքով «Համաշխարհային անկախ երիտասարդական միություն» ՀԿ-ի կազմակերպած անգլերեն լեզվի անվճար դասընթացներն են սկսել հաճախել եզդի և ուկրաինացի երեխաները:

Աջակցություն է ցուցաբերվել բոլոր այն լրագրողներին, որոնք հրապարակություններ են պատրաստել ազգային փոքրամասնությունների և կրոնին վերաբերող հարցերի վերաբերյալ:

339. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածում 2008 թվականի դեկտեմբերի 26-ին կատարվել է փոփոխություն, որով հանրային հեռուստառադիոընկերության համար նախատեսում է պարտավորություն հեռուստառադիոլսարանին մատուցել այնպիսի հաղորդումներ, որոնցում հաշվի են առնվում ազգային փոքրամասնությունների շահերը, ինչպես նաև, հանրային հեռուստաընկերությամբ հեռարձակել ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումներ շաբաթվա ընթացքում մինչև երկու ժամ տևողությամբ, իսկ հանրային ռադիոյով՝ օրական մինչև մեկ ժամ տևողությամբ: Լրատվամիջոցներին հասանելիության առումով ՀՀ օրենսդրությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ ըստ ազգային պատկանելիության, որևէ տարբերակում չի նախատեսում: ՀՀ

տարածքում գործող հեռուստաընկերությունների ծրագրերը իրենց սփռման տարածքներում հավասարապես հասանելի են բոլորի համար:

ՀԱՎԵԼՎԱԾ

Փոքրամասնությունների ոլորտին վերաբերող Հայաստանի կողմից վավերացրած միջազգային փաստաթղթերի ցանկ

- Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա (Հայաստանի Հանրապետությունը Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան ստորագրել է 2001 թվականի դեկտեմբերի 28-ին՝ վերջինիս 18-րդ հոդվածի համաձայն: Խարտիան ուժի մեջ է 1998 թվականի մարտի 1-ից: Հայաստանի Հանրապետության համար Խարտիան ուժի մեջ է 2002 թվականի մայիսի 1-ից):
- ՄԱԿ-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր /01.01.1991/
- ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա /01.06.1992/
- ՄԱԿ-ի «Ցեղասպանության ոճրագործության կանխման և դրա համար պատժի մասին» կոնվենցիա /10.12.1991/
- ՄԱԿ-ի «Ապարտեիդի հանցագործության կանխման և նրա պատժման մասին» կոնվենցիա /31.03.1993/
- ՄԱԿ-ի «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա /31.03.1993/
- ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ» կոնվենցիա /13.09.1993/
- ՄԱԿ-ի «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիա/12.04.1993/
- ՄԱԿ-ի «Փախստականների կարգավիճակի մասին» արձանագրություն /12.04.1993/
- ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա /09.06.1993/
- ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր /09.06.1993/
- «Տեղահանված անձանց, ազգային փոքրամասնությունների և ժողովուրդների իրավունքների վերականգնման հետ կապված հարցերի շուրջ» համաձայնագիր / 09.06. 1993/
- ԱՊՀ շրջանակներում «Ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին» կոնվենցիա /21.01.1994/
- ԵԽ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա և դրան կից կամընտիր արձանագրություններ/25.01.2001/
- Տարածքային համայնքների կամ իշխանությունների անդրսահմանային համագործակցության մասին 1980թ. մայիսի 21-ին Մադրիդ քաղաքում ստորագրված եվրոպական շրջանակային կոնվենցիա և նրա լրացուցիչ արձանագրություններ
- ԵԽ «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների» եվրոպական խարտիա /11.05.2001/
- Եվրոպական սոցիալական խարտիա/ 18.10.2001/

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հոդված 3՝ Սեռային բաշխվածություն (աղյուսյակ)

Օրենսդիր իշխանությունը, 2005-2008թթ.

(մարդ)

	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
2005	131	7	124
2006	131	7	124
2007	130	12	118
2008	131	11	120

Հանրակրթական դպրոցների աշակերտների թվաքանակի սեռային բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի, 2005-2008թթ.

(մարդ)

	Ընդամենը				Աղջիկներ				Տղաներ			
	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
ք.Երևան	138810	136265	130450	126458	67832	66547	62863	60617	70978	69718	67587	65841
Արագածոտն	25356	24406	22330	20667	12425	11765	10694	9821	12931	12641	11636	10846
Արարատ	43831	41280	38119	36628	21621	20231	18551	17707	22210	21049	19568	18921
Արմավիր	45156	44592	41876	39669	22087	21682	20150	18948	23069	22910	21726	20721
Գեղարքունիք	41669	40811	36312	35939	20336	19933	17477	17254	21333	20878	18835	18685
Լոռի	42614	41576	38215	35391	21163	20554	18771	17326	21451	21022	19444	18065
Կոտայք	41968	40412	36253	36927	20772	19987	17776	17714	21196	20425	18477	19213
Շիրակ	47586	46290	41545	39098	23477	22929	20411	18912	24109	23361	21134	20186
Սյունիք	21126	20712	18869	18237	10557	10232	9322	9059	10569	10480	9547	9178
Վայոց ձոր	9781	9420	8771	8092	4685	4597	4190	3876	5096	4823	4581	4216
Տավուշ	19960	19639	18540	17675	9760	9616	9089	8627	10200	10023	9451	9048

	Ընդամենը				Աղջիկներ				Տղաներ			
	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
Ընդամենը ՀՀ	477857	465403	431280	414781	234715	228073	209294	199861	243142	237330	221986	214920

**Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակի
սեռային բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի, 2005-2008թթ.**

(մարդ)

	Ընդամենը				Աղջիկներ				Տղաներ			
	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
ք.Երևան	78488	85195	89397	91806	42164	45915	48156	48006	36324	39280	41241	43800
Արագածոտն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Արարատ	237	226	205	213	192	178	158	143	45	48	47	70
Արմավիր	873	557	642	859	550	352	416	467	323	205	226	392
Գեղարքունիք	2696	2481	2591	2359	1489	1395	1481	1391	1207	1086	1110	968
Լոռի	5279	5671	6223	6026	3209	3485	3746	3603	2070	2186	2477	2423
Կոտայք	347	464	484	479	209	258	294	285	138	206	190	194
Շիրակ	6654	7538	8222	7940	3950	4414	4808	4608	2704	3124	3414	3332
Սյունիք	1825	2027	2413	2459	1044	1226	1403	1442	781	801	1010	1017
Վայոց ձոր	171	280	424	561	134	230	334	413	37	50	90	148
Տավուշ	1195	1391	1643	1697	622	714	843	889	573	677	800	808
Ընդամենը ՀՀ	97765	105830	112244	114399	53563	58167	61639	61247	44202	47663	50605	53152

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Հոդված 27՝ ՀՀ ազգային փոքրամասնությունները

ՀՀ մարզերի բնակչության բաշխումն ըստ ազգությունների, քաղաքային/գյուղական բաշխումով
(ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով)

(մարդ)

	ԸՆԴԱՄԵՆԸ	Հայ	Ասորի	Եզդի	Հույն	Ռուս	Ուկրաինացի	Քուրդ	Այլ
Հայաստան	3213011	3145354	3409	40620	1176	14660	1633	1519	4640
Քաղաքային	2066153	2041622	524	7413	853	10489	1386	315	3551
Գյուղական	1146858	1103732	2885	33207	323	4171	247	1204	1089
ք. Երևան	1103488	1088389	239	4733	308	6684	876	92	2167
Արագածոտն	138301	130678	6	6405	3	179	24	846	160
Քաղաքային	32864	32666	2	70	2	74	11	0	39
Գյուղական	105437	98012	4	6335	1	105	13	846	121
Արարատ	272016	263357	1926	5940	11	418	70	32	262
Քաղաքային	79885	79178	94	279	7	195	30	21	81
Գյուղական	192131	184179	1832	5661	4	223	40	11	181
Արմավիր	276233	257362	242	17665	15	480	74	128	267
Քաղաքային	98292	96864	60	966	10	234	32	16	110
Գյուղական	177941	160498	182	16699	5	246	42	112	157
Գեղարքունիք	237650	236804	7	8	16	430	56	116	213
Քաղաքային	78957	78552	1	4	15	261	21	26	77
Գյուղական	158693	158252	6	4	1	169	35	90	136

Լոռի	286408	280471	11	793	655	3882	138	9	449
Քաղաքային	169953	167465	9	639	398	1013	110	4	315
Գյուղական	116455	113006	2	154	257	2869	28	5	134
Կոտայք	272469	266023	950	4097	53	684	85	229	348
Քաղաքային	153981	152488	95	461	35	501	60	102	239
Գյուղական	118488	113535	855	3636	18	183	25	127	109
Շիրակ	283389	280594	9	974	56	1048	222	7	479
Քաղաքային	174260	172535	9	258	50	868	182	0	358
Գյուղական	109129	108059	0	716	6	180	40	7	121
Սյունիք	152684	152212	10	4	9	253	41	0	155
Քաղաքային	104147	103777	9	2	9	202	33	0	115
Գյուղական	48537	48435	1	2	0	51	8	0	40
Վայոց Ձոր	55997	55877	4	0	1	71	16	1	27
Քաղաքային	19605	19533	3	0	1	39	12	0	17
Գյուղական	36392	36344	1	0	0	32	4	1	10
Տավուշ	134376	133587	5	1	49	531	31	59	113
Քաղաքային	50721	50175	3	1	18	418	19	54	33
Գյուղական	83655	83412	2	0	31	113	12	5	80